



DIVERCITY
Բազմազանություն

«Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՅԿ
“DiverCity” Social-Cultural, Human Rights Defender NGO



Զեկույց

**Ձորակոչիկների նկատմամբ
խտրականության դրսևորումները
բժշկական փորձաքննությունների
ընթացքում**



Ձեկույց

Զորակոչիկների նկատմամբ
խտրականության դրսևորումները
բժշկական **փորձաքննությունների**
ընթացքում

© «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն (ՀԿ)


Երևան | 2022



Սույն զեկույցը հայերեն հրատարակություն է, որը ստեղծվել է «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան ՀԿ-ի կողմից՝ իրականացվող «Նպաստել խտրականության նվազեցմանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ և «Մարդը կարիքի մեջ» միջազգային ՀԿ-ի հայաստանյան ներկայացուցչության «Քաղաքացիական հասարակության դերակատարները՝ որպես փոփոխությունների կրողներ Հարավային Կովկասում և Մոլդովայում» ծրագրի շրջանում:

Զեկույցի բովանդակության համար պատասխանատվություն է կրում «Բազմազանություն» ՀԿ-ն, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

Զեկույցի հեղինակ՝ Անահիտ Մկրտչյան
Խմբագիր՝ Արտակ Առաքելյան
Համակարգչային ձևավորումը՝ Արաքս Սաֆարյանի



divercity.am

+37455793507
ngo.divercity@gmail.com



© «Բազմազանություն» սոցիալ-մշակութային, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն (ՀԿ)

Երևան | 2022

Բովանդակություն

Օգտագործված եզրույթներ, հասկացություններ և հապավումներ	4
Ներածություն	9
Մեթոդաբանություն	11
Զորակոչիկների հետ անցկացված խորին հարցազրույցների ամփոփում	14
Զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների ամփոփում	48
Հոգեկան առողջության կենտրոնների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների ամփոփում	56
Առանցքային տեղեկատուների հետ հաղորդակցության արդյունավետության գնահատում	64
Իրավական կարգավորումներ	78
Եզրակացություն և առաջարկություններ	97

Օգտագործված եզրույթներ, հասկացություններ և հապավումներ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԱԺ	Ազգային ժողով
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ՀՈՒ	Հինված ուժեր
ԿԲՀ	Կենտրոնական բժշկական հանձնաժողով
ՀԲՀ	Հինկոմիսարիատների բժշկական հանձնաժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություններ
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ԵԽ	Եվրոպայի խորհուրդ
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Հինկոմիսարիատ	Հինվորական կոմիսարիատ, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՍՈՒԳԻ	Սեռական ուղղվածություն և գենդերային ինքնություն, նույնն է ինչ ՍԿԳԻ (սեռական կողմնորոշում ու գենդերային ինքնություն)

ԳԲՏՔ+

Գեյ, բիսեքսուալ, տրանս, քվիր և այլ ՍՈՒԳԻ ունեցող անձ

Անձնական տվյալ

Ֆիզիկական անձին վերաբերող ցանկացած տեղեկություն, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ ուղղակի կամ անուղղակի կերպով նույնականացնել անձի ինքնությունը:

Բժշկական գաղտնիք

Պացիենտի առողջական վիճակի մասին կամ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմելու կամ ստանալու մասին, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու ընթացքում պարզված տվյալներ:

Իրազեկված համաձայնություն

Անձի տված համաձայնությունը՝ նրան հասկանալի լեզվով տրամադրված ամբողջական, օբյեկտիվ և հասանելի տեղեկատվության հիման վրա:

Ազնոդեր

«Առանց գենդերի» անձ, որը չի նույնականանում որևէ գենդերի հետ:

Ազգություն

Մարդկանց էթնիկական ընդհանրության պատմական զարգացման ձև:

Բուլինգ (bullying)

Անձի նկատմամբ կիրառվող ագրեսիվ վարքն է՝ հետապնդում, հոգեբանական տեռոր, ծեծ, հեգնանք, ծաղրանք, բամբասանքների տարածում մեկ այլ անձի կամ անձանց խմբի նկատմամբ: Կարող է տեղի ունենալ ցանկացած կոլեկտիվում, բայց առավել վտանգավոր է դպրոցականների ու ուսանողների շրջանում: Իրականացվում է տվյալ շրջապատում գերակա դիրք ունեցող անձի կողմից, հաճախ՝ ոչ միայնակ:

Գենդեր ֆլյուիդ (գենդեր ֆլյուիդ անձ)

Անձ, որի գենդերային ինքնությունը ֆիքսված չէ և կարող է փոփոխվել:

Գեներ

Գեներային ինքնություն կամ սոցիալական սեռ.
Հասարակական հասկացություն (սոցիալական կատեգորիա), որը վերաբերում է յուրաքանչյուր անձի՝ իր իսկ սեռին վերագրված կանացիության ու առնականության ներքին ընկալմանը և կարող է չհամապատասխանել կամ համապատասխանել անձնագրային սեռին (ծննդյան պահին տրված սեռ): Պայմանավորված է տվյալ հասարակության մշակույթով, մենթալիտետով, կերպարային կադապարներով և վերաբերում է անձի զգացողություններին իր սեռի, մարմնի, արտաքին տեսքի, վարքի նկատմամբ, որոնք ենթակա են կամ չեն փոփոխման:

Էթնոս

Որոշակի տարածքում ապրող մարդկանց՝ պատմականորեն ձևավորված կայուն համախմբություն, որն օժտված է ընդհանուր, համեմատականորեն կայուն լեզվական, մշակութային ու հոգեկան առանձնահատկություններով, ինչպես նաև սեփական միասնության և նման այլ կազմավորումներից տարբերվելու գիտակցությամբ (ինքնագիտակցությամբ), որը պահպանել է տեղային մշակույթի, լեզվի, սովորույթների որոշ առանձնահատկություններ:

Հաշմանդամություն

Մարմնական կամ մտավոր շարունակական դրություն, վիճակ, որը սահմանափակում է անձի գործողությունները:

Հոմոսեքսուալ

Նույնասեռական

Հոմոֆոբիա

Երկյուղ, վախ, ատելություն ու զգվանք նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող մարդկանց և նույնասեռականության նկատմամբ: Անձինք հոմոֆոբ կարող են լինել նաև

	իրենց սեփական ինքնությունների նկատմամբ: Վերջին շրջանում այն կիրառվում է ավելի լայն իմաստով LQFSD+ անձանց նկատմամբ:
Նույնասեռական (լեսբի, գեյ)	Սեռական ուղղվածություն, որը վերաբերում է նույն սեռի նկատմամբ խորը զգացմունքային, հուզական, սեռական գրավչություններ, ինտիմ և սեռական հարաբերություններով ունեցող անձանց:
Ոչ բինար (ոչ բինարություն, ոչ բինար համակարգ)	Ցանկացած գենդերային ինքնություն, որը չի համապատասխանում կանացիության ու առնականության երկբևեռ համակարգին:
Ռասիզմ (ցեղապաշտություն)	Մի ցեղի նկատմամբ մյուսի գերակայության հավատ, որն արտահայտվում է մարդկանց հանդեպ խտրականությամբ՝ պայմանավորված ցեղային և ազգային պատկանելիությամբ:
Սեռական ուղղվածություն	Սեռականության բաղադրիչներից մեկը, որը բնորոշ է յուրաքանչյուրին: Անձի խորը զգացմունքային, հուզական, ինտիմ և սեռական գրավչությունների ամբողջությունը՝ այլ անձի նկատմամբ: Նույնն է՝ ինչ սեռական կողմնորոշումը:
Սեքսիզմ (սեռապաշտություն)	Նախապաշարմունք կամ խտրականություն, որը հիմնված է մարդու սեռի կամ գենդերի վրա: Սեռապաշտությունը կարող է ազդել ցանկացածի վրա, սակայն, հիմնական թիրախ են հանդիսանում կանայք և աղջիկները:
Տրանսգենդեր	Գենդերային ինքնություն, որի դեպքում անձը փոփոխում է իր գենդերը՝ հանդես գալով հակառակ սեռին պատկանող գենդերային ինքնությամբ:
Տրանսսեքսուալ	Անձ, որը փոխում է իր կենսաբանական սեռը և հանդես է

գալիս հակառակ կենսաբանական
սեռով:

Ցիսգենդեր

Գենդերային արտահայտման ձև, երբ
անձի կենսաբանական սեռը և
հասարակության կողմից տվյալ
սեռին վերագրված գենդերային դերը
համապատասխանում են:

Քյարթու

Ենթամշակույթ կամ
ենթամշակութայնություն, որն իր մեջ
ակնհայտորեն կրում է քրեական
ենթամշակույթի բաղադրիչներ:

Քվիր, քվիրգենդեր

Անձրևանոցային եզրույթ այն
անձանց համար, որոնք չեն
նույնականանում որպես ցիսգենդեր
հետերոսեքսուալ (տարասեռական):
Ծագում է քվիր տեսությունից, որն
առաջացել է ակտիվիզմից և
քննադատում է ինքնությունները,
հատկապես գենդերային ու
սեռական, խնդրականացնում է սեռի
և գենդերի միջև բինար
հարաբերությունները, քննում է
նորմատիվային ու նորմավորված
սեռականություններն ու
ձևակերպումները:

Ֆլիրտ

Գրավոր կամ բանավոր
հաղորդակցությամբ սոցիալական և
սեռական վարքագիծ, որը կարող է
գուգորդվել մարմնի լեզվով և
ուղղված է մեկ անձից մյուսին ավելի
խորը փոխհարաբերությունների
առաջարկելուն:

Ներածություն

Հայաստանի Հանրապետությունը օրենսդրական մակարդակով ամրագրել է խտրականության արգելքը: Մինչդեռ, գործնականում մարդու իրավունքների իրացման տեսանկյունից ոչ միշտ է բավարար իրավունքի սոսկ փաստաթղթային ամրագրումը: Հայաստանի Հանրապետությունում խտրականությունը դրսևորվում է անձի կյանքի և գործունեության տարբեր ոլորտներում, այդ թվում՝ զորակոչի շրջանակներում: Այս մասին տարիներ շարունակ բարձրաձայնել են հասարակական կազմակերպությունները¹, Մարդու իրավունքների պաշտպանը² իրենց մի շարք զեկույցներով: Վերջին իրադարձությունների՝ խտրականության ցայտուն և աղմկահարույց դեպքերի գնահատման արդյունքում, կարող ենք պնդել, որ Հայաստանում առավել խտրականացված խմբերից են ԳԲՏԶ+ անձինք, փոքրամասնություն կազմող էթնիկ ծագում/ ազգություն ունեցող անձինք և հաշմանդամություն ունեցող անձինք:

Խտրականության կանխարգելման հարցում մեծ է նաև քաղաքացիական հասարակության վերահսկողության դերը: «Բազմազանություն» ՀԿ-ն ստեղծվել է 2019 թվականին: Կազմակերպության գործունեության նպատակն է բազմազանության ու բազմակարծության զարգացումն ու ճանաչումը՝ իրավապաշտպան, ոչ-ֆորմալ կրթական, տեղեկատվական ու սոցիալական գործունեության միջոցով: Կազմակերպության շահառուներն են հանդիսանում երիտասարդ խոցելի ու թիրախավորված անձինք: Կազմակերպությունը, ի թիվս այլ նախաձեռնությունների և ծրագրերի իրականացնում է նաև «Նպաստել խտրականության նվազեցմանը Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակներում էլ կազմվել է սույն զեկույցը: Զեկույցը նպատակ ունի վեր հանելու զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների նկատմամբ խտրականության դրսևորման դեպքերը բժշկական փորձաքննությունների ընթացքում: Նշված նպատակին հասնելու համար իրականացվել են զորակոչի գործընթացը կարգավորող օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և վերլուծություն, խորին հարցազրույցների իրականացում՝ 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում զորակոչին մասնակցած ԳԲՏԶ+

¹ **ՏԵՄ**՝ <https://hcav.am/wp-content/uploads/2021/10/%D4%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9-2019-%D5%B1%D5%B4%D5%A5%D5%BC-2020-%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BC-2020-%D5%B1%D5%B4%D5%A5%D5%BC-2021-%D5%A1%D5%B4%D5%A1%D5%BC.pdf>, https://issuu.com/pinkarmenia/docs/lgbtreport2019_hy, <https://drive.google.com/file/d/1sir78tQWDRzKW3ezexkzHJn4TG-sONycC/view>

² **ՏԵՄ**՝ <https://www.ombuds.am/images/files/f6f074cf2679345795db7e978f8710ae.pdf>

անձանց, ՀՀ-ում փոքրամասնություն կազմող էթնիկ ծագում/ ազգություն ունեցող անձանց և հաշմանդամություն ունեցող անձանց հետ, առանցքային տեղեկատվությունների հետ հարցազրույցներ՝ զինկոմիսարիատների ներկայացուցիչների, հոգեկան առողջության կենտրոնների ներկայացուցիչների հետ և հարցումների իրականացում զորակոչի գործընթացին առնչվող կառույցների հետ:

Արդյունքում, թվարկված գործողությունների միջոցով վեր են հանվել զորակոչիկների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դեպքերը՝ խտրական արտահայտությունների և բռնության դրսևորումներով, ուսումնասիրվել են վիճակագրական տվյալները՝ զորակոչային գործընթացի առնչությամբ հարուցված քրեական գործերի և վարչական իրավախախտումների վերաբերյալ, գնահատվել է զորակոչի գործընթացին առնչվող մարմինների հետ հաղորդակցության արդյունավետությունը, վերլուծվել է ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը՝ վեր հանված խնդիրների համատեքստում: Վերջիններիս հիման վրա ներկայացվել են առաջարկություններ:

Մեթոդաբանություն

Սույն զեկույցը հիմնված է խորին հարցազրույցների, առանցքային տեղեկատուների հետ հարցազրույցի, հարցման մեթոդներով հավաքագրված տեղեկատվության և փաստաթղթերի վերլուծության վրա:

Փաստաթղթերի վերլուծության շրջանակներում իրականացվել են զորակոչի գործընթացին առնչվող օրենսդրական կարգավորումների ուսումնասիրություն և վերլուծություն, ներառյալ, բայց չսահմանափակվելով հետևյալ իրավական ակտերով. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը, «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը, «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը, 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի ՀՀ Կառավարության «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշումը, 2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ Կառավարության «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» 404 որոշումը, 2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ Կառավարության «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 405 որոշումը, ՀՀ Կառավարության 2018թ.-ի մայիսի 3-ի 536-Ն, 2018թ.-ի նոյեմբերի 29-ի 1337-Ն, 2019թ.-ի մայիսի 16-ի 590-Ն, 2019թ.-ի նոյեմբերի 7-ի 1536-Ն, 2020թ.-ի ապրիլի 23-ի 593-Ն, 2020թ.-ի դեկտեմբերի 24-ի 2136-Ն, 2021թ.-ի մայիսի 6-ի 711-Ն «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» որոշումները: Ուսումնասիրվել են նաև զորակոչիկներից մեկի հանցագործության մասին հաղորդման հիման վրա հարուցված քրեական գործի նյութերը:

Խորին հարցազրույցների մեթոդի շրջանակներում հարցազրույցներ են իրականացվել 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած

Ժամանակահատվածում զորակոչի մասնակցած զորակոչիկների հետ, հաշվի առնելով Հայաստանում տեղի ունեցած սիրո և համերաշխության թավշյա հեղափոխությունը և դրանով պայմանավորված դրական փոփոխությունների տեսլականը³:

Չորակոչիկներն ընտրվել են ըստ խտրականության ենթարկվելու բարձր ռիսկայնության հատկանիշների⁴ (ԳԲՏԶ+ անձինք, փոքրամասնություն կազմող էթնիկ ծագում/ ազգություն ունեցող անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք): Խորին հարցազրույցներն իրականացնելու համար ընտրվել է խտրականության 20 դեպք (16 դեպք՝ ԳԲՏԶ+ անձանց, 2 դեպք՝ փոքրամասնություն կազմող էթնիկ ծագում/ ազգություն ունեցող անձանց, 2 դեպք՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ):

Հաշվի առնելով կազմակերպության առաքելությունը և ԳԲՏԶ+ անձանց իրավունքների խախտմանն առնչվող հետազոտությունների սակավությունը, հարցազրույցներում գերակշռել է ԳԲՏԶ+ անձանց ներգրավվածությունը:

	Երևան	Մարզ
Գեյ, բիսեքսուալ տրանս, քվիր և այլ ՍՈՒԳԻ ունեցող անձինք	11 անձ	5 անձ
Հաշմանդամություն ունեցող անձինք	0	2 անձ
Փոքրամասնություն կազմող էթնիկ ծագում/ ազգություն ունեցող անձինք	0	2 անձ

Հետազոտության ընթացքում իրականացվել են 7 հարցազրույցներ առանցքային տեղեկատուների հետ՝ ինչպես հաստատությունների կառուցվածքային, կազմակերպչական ընթացակարգային խնդիրները, այնպես էլ զորակոչիկների նկատմամբ դրսևորված խտրականության և բռնության դեպքերը

³ **ՏԵՄ**՝ <https://www.civilcontract.am/hy?fbclid=IwAR3WccQ9VfIGsrKyLdX8OuxO8AI8-fgoA4yFh6oqr-2tNota5YYPGJ4zWcU>

⁴ **ՏԵՄ**՝ օրինակ՝ <https://www.pinkarmenia.org/news/rainbowmap2021/>, <https://rm.coe.int/t/09000001680a25dfe>,

<https://uic.am/7528>, <https://ngn>

go.net/2020/12/08/%D5%AC%D5%A3%D5%A2%D5%BF-%D5%A1%D5%B6%D5%B1%D5%A1%D5%B6%D6%81-%D

5%B6%D5%A5%D6%80%D5%A3%D6%80%http://pmg.am/hy/news/successful-cases/2018-11-15-13-24-19,


<https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2021/06/eur540022013hy.pdf>

վեր հանելու նպատակով: Իրականացվել են 5 հարցազրույցներ գինվորական կոմիսարիատների և 2-ը՝ հոգեկան առողջության կենտրոնների ներկայացուցիչների հետ:

Հարցման մեթոդի շրջանակներում հարցումներ են ուղարկվել զորակոչի գործընթացում անմիջականորեն ընդգրկված, վերահսկողություն իրականացնող կամ այլ կերպ առնչություն ունեցող կառույցներին, մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ քննչական կոմիտեին, ՀՀ ոստիկանությանը, Երևանի քաղաքապետարանին, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզպետարաններին, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին, ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին՝ պարզելու նպատակով զորակոչի գործընթացի շրջանակներում արձանագրված վարչական իրավախախտումների, հարուցված քրեական գործերի վիճակագրությունը, դրանց հիմքում հնարավոր խտրականության առկայությունը, ինչպես նաև առանցքային տեղեկատվությունների գործառնություններն ու ներգրավվածությունը զորակոչի գործընթացում:

Չորակոչիկներ հետ անցկացված հարցազրույցների ամփոփում

Բժշկական փորձաքննությունների ընթացքում զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների նկատմամբ խտրականության դեպքերի վերհանման նպատակով խորին հարցազրույցներ են անցկացվել 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում զորակոչի ենթակա թվով 20 քաղաքացիների հետ: Քաղաքացիների ընտրության համար հիմք է հանդիսացել վերջիններիս սեռական ուղղվածությունն ու գենդերային ինքնությունը, էթնիկ ծագումն ու ազգությունը և հաշմանդամության առկայությունը, հաշվի առնելով նրանց խոցելիության բարձր ռիսկայնությունը հայաստանյան իրականությունում: Հարցազրույցներն անցկացվել են Հայաստանի Հանրապետությունում՝ առանց տարածքային սահմանափակումների:




	Հարցվողներից 16-ը նշել են իրենց սեռական ուղղվածության և գենդերային ինքնության մասին, իրենց նույնականացնելով որպես՝ նույնասեռական, ագենդեր, ցիսգենդեր, ոչ բինար, տրանսսեքսուալ, տրանսգենդեր, գենդեր ֆլուիդ, քվիրգենդեր անձ:
	Հարցվողներից 2-ը նշել են իրենց էթնիկ ծագման և ազգային պատկանելիության մասին: Նրանցից մեկը հանդիսացել է ասորի, իսկ մյուսը՝ եզդի:
	Հարցվողներից 2-ը նշել են իրենց մոտ հաշմանդամության առկայության մասին (օրինակ՝ մանկական ուղեղային կաթվածի (ՄՈԻԿ)):

Հարցին, թե ե՞րբ և ի՞նչ եղանակով են զորակոչիկները ստացել զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին ծանուցումը, հարցազրույցի մասնակիցները պատասխանել են.

- «Երբ նախազորակոչի էի մասնակցել, էդ ժամանակ արդեն տեղեկացրել էին ինձ, որ 18 տարեկանս լրանալու ծնունդիս օրը գնամ զինկոմ: Սեպտեմբերի 5-ին: Բայց քանի որ կիրակի էր, ես գնացի ամսի 6-ին»:
- «Գյուղապետարան ինչ-որ նամակ էր եկել, մայիսի վերջ եմ գնացել վերցրել բայց գնացել եմ հունիսի սկիզբ»:
- «Հստակ ամսաթիվը չեմ հիշում, բայց քոլեջում են տեղեկացրել: Պիտի գյուղ գնալի, բայց չգնացի: Հաշվառվեցի Երևանում, որ զինփորձաքննություններն անցնեմ այստեղ»:
- «Թղթային ծանուցումով: Նաև քոլեջում էին ասել, որ գալու ա էդ թուղթը: Տնօրինությունից էին ասել, հետո նաև ՆԶՊ-ի դասատուն ասեց»:
- «Գնացել էի զինկոմիսարիատ այլ հարցով, միանգամից ասեցին»:
- «Իմ դասարանցու մաման աշխատում էր գյուղապետարանում, բերել էր դպրոց ծանուցումը, ու դասարանի մոտ հանրային ձևով տվեց ինձ»:
- «Գրավոր թերթիկ ա եղել, որը բաժանել են դպրոցում: Զգիտեմ ում միջոցով են բերել դպրոց: Ենթադրում եմ զինղեկի՝ ՆԶՊ-ի ուսուցչի միջոցով»:
- «Փոստով եկավ առաջին ծանուցումը ,երկրորդը զինվորական աշխատողի կողմից եղավ»:
- Այլ:

Հարցվողների 50%-ը պատասխանել է, որ ծանուցվել է **զանգի միջոցով**:



Հարցին, թե ի՞նչ պիտի մտավախություններ են ունեցել և ինչ ռիսկեր են ենթադրել գինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին լուրը լսելիս, զորակոչիկները պատասխանել են.

- «Ես մտածում էի, որ հենց գնամ, միանգամից տանելու են բանակ, ու չգիտեի որ պետքա հետազոտություններ անցնեմ: Ու վախենում էի դրա համար, որովհետև մենակ էի գնացել»:
- «Անհանգստություն ու տագնապ ունեի, որովհետև մտածում էի պոտենցիալ վատ վերաբերմունքի մասին»:
- «Ես չէի ուզում մեր մոտի գինկոմիսարիատով անցնել փորձաքննությունները, որովհետև ընդեղ ահավոր խտրական վերաբերմունքի կարայի արժանանայի, նաև բռնության: Նաև կարային հանրայնացնեին իմ ՍՈՒԳԻ-ի (սեռական ուղղվածություն ու գենդերային ինքնություն) մասին տեղեկությունները»:
- «Քանի որ ես տրանսսեքսուալ անձ եմ, մտավախություն ունեի, որ համարձակությունս չի ների, որ ես ներկայանամ ընենց, ոնց կամ: Միգուցե չկարողանամ ասեմ, որ ես տրանս եմ, որովհետև ես ցիսգենդեր տղու արտաքինով էի գնալու: Երկրորդը ռիսկեր էի տեսնում, որ չկարողանայի ներկայանալ որպես տրանս անձ»:
- «Մտածում էի խտրականության, կոպիտ վերաբերմունքի, տարբերակման ու բռնության մասին: Երկար ժամանակ սթրես եմ տարել, ու ես պետք ա ապրիլին գնայի, ու էդ արանքի մի ամիսը իմ համար սթրեսային ա եղել»:
- «Մտավախությունները կապված էին, որ պետք ա խոսայի իմ սեռականության մասին, և կապված էին նրա հետ, որ իրանք կարային հանրայնացնեին դա»:
«Շատ վախենում էի, որ կգնամ ու բռնությունների կենթարկվեմ»:
- «Ինքնաբացահայտմանս մասին էի մտածում, ես վախենում էի իմ ինքնության մասին ասել, ու որ հանկարծ տանեն բանակ, ընդեղ բոլորը կիմանային իմ մասին»:
- «Ես տարիներ շարունակ մտածել եմ ու վախեցել եմ բանակի հարցից: Ես վախենում էի, որ ինձ տանելու են: Գիտակցում էի, որ եթե տանեն բանակ՝ շատ վատ բաներ կարա տեղի ունենա: Հոգեպես պատրաստ չէի, ու անտանելի վախենում էի: Մտածում էի, բա որ ուղարկեն հոգեբուժարան, ոնց եմ անելու որ ծնողներս կամ դասարանցիներս չիմանան»:
- «Դե ես ընդհանրապես մեծ հույսերով գնացի: Ես կմտածեի, որ իրանք ընթերցումով կմոտենան ու իմ վիճակս հաշվի առնելով, որ ես հաշմանդամություն ունիմ խնդիր բոլի չեղնի ու ըդիկ բոլի իրանց համար հերիք եղնի ու մինչև գեներալի կամիսիա ընձի քաջքեցին, տարան բերին անընդհատ հետազոտություններ, անիմաստ հարցեր հիվանդության վերաբերյալ, հարցադրումներ, որոնք որ մարդուն ստիպենզը, որ նորից իրա անցյալը հիշե, անցած ճանփեն վեր հիշե»:

- «Մտավախություններ չեն եղել, չեմ վախեցել: Եթե լինե՞ր տարբերակ, որ կարող էի ըսենք չազատվեի բանակից ու էրթաի ծառայության, շատ նորմալ կվերաբերվեի»:
- «Ճիշտն ասած, ես ոչ մի մտավախություն չունեի, զանգը սովորական զանգ ա, կհրավիրեն կխոսեն և այլն և այլն: Չի եղել մտավախություն»:
- «Մտածում էի խտրականացվելու մասին: Որովհետև ես այլ խնդիր ունեմ, բայց ես անգամ պատրաստվում էի ասել Նաև իմ ՍՈՒԳԻ-ի մասին: Ու վախենում էի խտրականացվել: Երկրորդ մտավախությունս բանակ գնալն էր ու ընդեղ խտրականացվելը»:
- «Անհանգստություն ունեի, ինչպես բոլորը»:
- «Հիմնականում մտածել եմ, որ բռնության չենթարկվեմ, քաշքշուկի մեջ չընկնեմ, նորմալ ընթանա ամեն ինչ»:
- «Մազերս երկար էր նախազորակոչի ընթացքում: Էդ ընթացքում ահավոր վատ էր իմ նկատմամբ վերաբերմունքը: Կանում էին ինձ, վատ էին վերաբերվում: Ես անգամ գնալիս, որոշեցի մի քիչ ցիս (ցիսգենդեր) լինեմ, որովհետև համ էլ պապայի հետ էի գնալու: Նաև մտածում էի, որ իմ ուղեկցող հիվանդությամբ ուզե՞նան ինձ ուղարկեն բանակ, ոնց եմ ասելու իմ ՍՈՒԳԻ-ի մասին, վախենում էի: Տենց անարդար կվարվեին իմ հետ, որովհետև իմ ուղեկցող հիվանդությամբ ես լրիվ ազատվում եմ բանակից»:
- «Անհանգստություն ու վախ էի զգում, որովհետև պատկերացնում էի պետքա գնամ՝ տկլոր լինեմ ընդեղ ու շատ էի քաշվում»:
- «Վախ: Տագնապ: Անհանգստություն: Տարիներով վախեցել եմ էդ պահից»:

Հարցին, զինվորական կոմիսարիատ ներկայացել են մենամկ, թե այլ անձի ուղեկցությամբ, զորակոչիկների 45%-ը պատասխանել են, որ երբեմն ներկայացել են մենակ, երբեմն՝ այլ անձի ուղեկցությամբ, 35%-ը միշտ ներկայացել է մենակ, 20%-ը միշտ ներկայացել է այլ անձի ուղեկցությամբ:

Անձինք, ովքեր ներկայացել էին ուղեկցող անձանց հետ, նշել են, որ ուղեկցող անձին չեն թույլատրել մտնել մասնագետների սենյակները, ներկա լինել բժշկական հետազոտությունների ամբողջ ընթացքին, երբեմն պայմանավորված նաև համավարակով: Հարցվողներից ոմանք նշել են, որ ուղեկցող անձի դիմաց իրենց ծաղրել են, շեղ հայացքներ նետել, երբ ուղեկցողներն եղել են ծնողները (հատկապես հաշմանդություն ունեցող անձանց դեպքում, երբ առկա է եղել ծնողների դժգոհությունը թեքահարթակներ չլինելու հետ կապված):

Ուղեկցող անձի հետ զինկոմիսարատ ներկայանալու պատճառների մասին խոսելիս, զորակոչիկները նշել են.

- «Ինձ ավելի ապահով էի զգում, երբ կոնֆլիկտներ էին առաջանում և նա կարողանում էր հարթել»:
- «Ավելի շատ ֆիզիկական ներկայությամբ օգնում էին, որ մենակ չզգայիր, հոգեպես ավելի լավ էի զգում ինձ»:
- «Ծնողներիս հետ եմ գնացել, որովհետև իրանց զուտ հետաքրքիր էր, ես ոնց եմ ներկայանալու որպես տրանս անձ»:
- «Ապահովության համար եմ ընկերների հետ գնացել, ու որ շտապ դեպք լինի, մենակ չմնամ»:
- «Ուղեկցողի դերը իմ ապահովության զգացումն էր»:
- «Մորս ուղեկցությամբ եմ ներկայացել, բայց նույնիսկ դա հաշվի չառան երեք ժամ արևի տակ կանգնացրեցին: Ես սկսեցի բողոքել, իրանք կանգնան, ըսին, որ ես ընդհանրապես իրավունք չունիմ բողոքելու, որ սաղին պրովոկացիայի կենթարկեմ: Ես կսեմ երեք ժամ էս արևին չեմ կռնա կանգնիմ ու իրանք կսենք քո հերթը կգա: Ես չէի կռնա քելեի, թանցիկ էի: Նույնիսկ երկու անգամ չներկայացա, ասեցին, եթե երրորդ անգամ չներկայանաս ոստիկանությունը կգա էդ դեպքում: Սովետական շրջանում ապրած ծնողներ, ոստիկանություն, բան, գնացի ինձի խոստացան, որ շատ արագ կլինի, բայց երկու ամիս ինձի տարան բերին»:
- «Թիկնապահ ա եղել իմ համար ապահովության համար»:
- «Որ ապահով լինեմ, ու չվախենամ: Հենց առաջին անգամն էր դա: Հետո արդեն շոկեռով (ինքնապաշտպանական էլեկտրաշոկ) եմ գնացել»:
- Այլ:

Հարցվողների 53,8%-ը գինավորական կոմիսարիատ է ներկայացել ընկերոջ, 30,8%-ը՝ ընտանիքի անդամների, 7,7%-ը՝ բարեկամի (քեռի), 7,7%-ը՝ զուգընկերոջ հետ:



Ընդ որում, գինվորական կոմիսարիատ միայնակ ներկայացած զորակոչիկներից որոշները միայնակ են ներկայացել ճարահատյալ, քանի որ վախեցել են հարազատներից կամ համապատասխան կազմակերպության աշխատակիցը չի ներկայացել և ուղեկցել իրենց, որոշներն էլ միայնակ են ներկայացել ուշադրություն չգրավելու և իրենց անձնական կյանքի մասին տեղեկատվությունը չբարձրաձայնելու նկատառումներից ելնելով: Հարցվողներից մեկը նշել է, որ միայնակ ներկայանալիս, հոգեբուժարանի ուղեգիր չեն տվել, ասել են, որ պետք է հարազատներից մեկի ներկայությամբ տան ուղեգիրը, սակայն զորակոչիկի դուրս գալուց հետո, հետ են կանչել և տվել ուղեգիրը:

Արդեն գինվորական կոմիսարիատի տարածքում գտնվելիս, իրենց ունեցած զգացողությունների մասին խոսելիս, զորակոչիկները նշել են.

- «Քանի որ ես ոչ իմ դասարանի հետ էի շփվում, ոչ էլ կուրսիս, ես վախենում էի, որ ինձ իրանք կխտրականացնեն, որովհետև իրանք էլ իմ տարիքի են ու գնալու էին գինկոմ: Մեկ էլ վախենում էի, կարող ա միանգամից տանեն բանակ»:
- «Նորից վախենում էի, երբ մուտք էի գործում, որ կարողա ինչ-որ ձևով բռնության ենթարկվեմ, կապված իմ ՍՈՒԳԻ-ի հետ, սթրեսային վիճակ էր»:
- «Տեղեկացված չէի ընթացակարգերից, թե քանի փուլով է տեղի ունենալու և այլն: Ամենամեծ վախս կայանում էր նրանում, որ կարող է գնամ բանակ, որովհետև ոչ մի լուրջ առողջական խնդիր չունեի: Հաջորդ մտավախությունս այն էր որ կոնֆլիկտի մեջ կմտնեմ այլ զորակոչիկների հետ: Շատ էի վախենում նաև բժիշկների մոտ մերկանալուց, կոմպլեքսներ ունեի, որոնք խանգարում էին ինձ անցնել այդ փորձաքննությունները, նաև ընդունում էի հորմոններ , որոնք ևս ինձ ավելի կանացի տեսք էին հաղորդել և չէի ուզում այդպես տեսնեն ինձ: Հաջորդ վախը պայմանավորված էր նրանով, որ իմ դասընկերներն էլ էին այնտեղ և չէի ուզում իմանալիս իմ սեռական ուղղվածության մասին: Վախենում էի, որ մասնագետները կլինին հոմոֆոբ, ոչ պրոֆեսյոնալ իրենց աշխատանքում, և ինձ կենթարկեն բռնության»:
- «Միայնակ չէի ուզում մտնել, որովհետև վստահ էի ու գիտեի, որ շատ դեպքեր են եղել, որ խտրականության ու բռնության են ենթարկվել, ու մենակ դրա համար չէի ուզում մտնել»:
- «Տագնաալը նույնն էր, որ կարող ա տանեն բանակ, ու ես չէի կարա ներկայանալի որպես տրանս անձ»:

- «Գնացել էի դասարանցիներիս հետ, ես առանձին, բայց իրանք էլ էին ընդեղ: Էջմիածնի գինկոմը մորգի կողքն ա, ու դու ընդեղ կանգնում ես սևազգեստ քյարթերի հետ: Ես հանգնվել էի ընենց, ոնց ուզում էի: Ինձ անվտանգ չէի զգում, տազնապ ունեի: Հավաքված դասարանցիներիցս մեկն ասեց մյուսներին, որ ես գեյ եմ: Ես իրանց չէի ասել, որ ես գեյ եմ, բայց իրանք ենթադրել էին: Ամբողջ դպրոցը գիտեր»:
- «Ունեի անհանգստություն ու վախի զգացողություն, որովհետև, բնականաբար հեշտ կարայի խտրականացվելի ընդեղ, ու մթնոլորտը գինկոմիսարատում ճնշող ա ընդհանուր առմամբ»:
- «Շատ լարված էի ու առանց ինչ-որ պաշտպանությունների, օրինակ՝ շոկեռ (ինքնապաշտպանական էլեկտրաշոկ), բան, ու գնացել էի տենց, վախենում էի, որ բռնություններ կարա լինի համ աշխտակիցների, համ զորակոչիկների կողմից»:
- «Վախ եմ զգացել հիմնականում: Որովհետև գնում ես անձանոթ մարդկանց մոտ ու ասում ես, որ գեյ ես ու գիտես, որ բանակայիներ են սաղ, զինվորներ են, որոնք հնարավոր ա ադեկվատ չընդունեն դա»:
- «Սկզբում կար տազնապ, ամեն ինչ կար: Դողում էի, ներվային էի շատ, վախում էի ահավոր: Ու էդ ամենը կրկնապատկվում էր, երբ ինձ սկսում էին ծաղրել մյուս զորակոչիկները»:
- «Վախը կար էն անտեղյակությունից, որ քեզի հեջ մարդ բան չէր ըսե պրոցեդուրաների մասին: Այսինքն ընթացքի մասին՝ որը ինչից հետո բոլի եղնի: Բայց թախիծ կար, որ հիվանդություն կար: Բոլի հիմա առողջ էղների անպայման, որ սաղի հետ գնաի հայրենիքս պաշտպանելու, որովհետև մենք ընտանիքով էդ գաղափարախոսությանն էինք, որ եթե տղամարդը առողջ է, պետք է գնա ծառայելու ու մոտս դեժավյու կար. էղբայրս սպա է: Եղներով սպայի եղբայր, իմ մոտս էդ ցանկությունը կար, ինչի պետքա չծառայեմ»:
- «Անհանգստություն ունեի, որն ավելի շատ անորոշությունից էր: Լիքը խախտումների մասին էի լսել, դրա համար անհանգստանում էի»:
- «Տազնապ կար, որ հնարավոր ա գինկոմի աշխատակիցները ինչ-որ բռնություն, կոպտություն, խտրականություն կկիրառեն իմ նկատմամբ: Մտածում էի՝ ինչ կանեն իմ հետ, ուր կուղարակեն՝ հոգեբուժարան, թե չէ: Ու նման բաների մասին էի մտածում»:
- «Իրանց գինկոմին երբ տեսա, վախեցա: Շատ վատ մարդ ա: Սաղին կանում ու վիրավորում ա: Վստահ էի, որ թռնելու ա դեմքիս: Պապան էլ որ հետս էր, վաքշե վախեցած էի, որ կռիվ կանի, կկպնի արտաքինիս, ու եթե ստիպված լինեմ ասել իմ մասին, պապայի ներկայությամբ չեմ կարողանա ասել»:

- «Երբ մուտքի մոտ էի, գնում-գալիս էի, մտածում էի ասեմ իմ ինքնության մասին, թե չէ: Մտածում էի, որ քիչ քաշ ունեմ, դրանով կարամ ազատվեմ»:
- «Վախ, որովհետև ես կանացի արտաքինով եմ ներկայացել զինկոմ: Անհանգստանում էի, որ ֆիզիկական բռնության չենթարկվեմ: Բայց զուգընկերս հետս էր: Պայմանավորված էր իմ արտաքին տեսքով: Ես ուշադրություն էի գրավում այդ տեսքով»:
- Յոգերուժարանից երբ դուրս էի գալիս, տաքսի էի կանչում, ընդել կամիսիա անցնողներից մեկը, որն ամբողջ ընթացքում հետս կանգնած էր, սպասում էր: Ինքն էլ մեծ քար ա վերցնում ու անսպասելի ձևով շարտում ա իմ վրա, բայց իմ բախտը էնքան ա բերում, որ ինձ չի կանում, կողքովս անցնում ա: Ու որ չի կանում, ինքը սկսում ա գոռգոռալ, հետո ծնողը իրան քաշում, տանում ա: Աշխատող պահակն էլ, իմ վրայա մունաթ գալիս, թե բա խի եմ եկել, որ մի հատ էլ խփում են ինձ:
- Այլ:

Հարցին, զինվորական կոմիսարիատի մուտքի մոտ, հարակից տարածքներում եղել են մարդկային (զորակոչիկներ) կուտակումներ, թե՛ ոչ, հարցվողների 80%-ը պատասխանել են՝ այո, մյուսները՝ ոչ, որ տղաները խումբ-խումբ կանգնած ծխում էին, հսկայական թվով մարդիկ կային և՛ ներսում, և՛ դրսում, երբեմն անհնար էր լինում մտնել զինկոմիսարիատ, առաջին անգամ շատ կազմակերպված էր ամեն ինչ, մնացած անգամները սպասացնում էին և միայն 5%-ն է նշել, որ կուտակումներ չեն եղել:



Զինվորական կոմիսարիատի բակում և շրջակայքում այլ անձանց կամ զորակոչիկների կողմից ցուցաբերված վերաբերմունքի և տեղի ունեցած դեպքերի (հոգեբանական ճնշում, վիրավորանք, ռեպրեսիաներ, շեղ հայացքներ, հեռավորության պահպանում, ֆիզիկական բռնության դեպքեր, արհամարանք) վերաբերյալ խոսելիս հարցվող զորակոչիկները նշել են.

- «Ռեպլիկներ եմ ստացել. -«Արա էս ղզիկը ով ա»: Թարս էին նայում: Այցելություններից մեկի ժամանակ նաև զորակոչիկների ծնողներն էին ինձ թարս նայում»:
- «Եղել են ագրեսիվ հայացքներ»:
- «Ես ներկայացել էի մեյքապով, չնայած նրան, որ դա իմ ամենօրյա ոճի մասն էր: Իմ հասցեին լսում էի ռեպլիկներ, վիրավորական խոսքեր, իմ ընկերը ինձ շատ է օգնել և շատ հաճախ պաշտպանվելու նպատակով մենք փորձում էինք պատասխանել»:
- «Առաջին անգամ նորմալ էր ամեն ինչ, երբ գնացի: Բայց դրանից հետո արդեն այլ վերաբերմունք էի նկատում: Նույնիսկ աշխատակիցները, ու նաև այն զորակոչիկները, որոնք իմացել էին իմ մասին, արդեն թարս էին նայում և այլն»:
- «Քանի որ ես ներկայացել էի ցիգենդեր տղու արտաքինով, ոչ մի արտասովոր վերաբերմունք չի եղել»:
- «Չեն եղել, մենակ լավ բաներ էին ասում, ասում էին ինչ կապ ունի ասորի ես, մեր ախպերն ես»:
- «Բացի ֆիզիկական բռնության դեպքից, բոլորը եղել ա: Ես բոլորի հետ անգլերեն էի խոսում, որ մտածեն ես հայաստանցի չեմ: Թե աշխատողների, թե զորակոչիկների հետ անգլերեն էի խոսում: Իրանք մտածում էին, ես իրանց չեմ հասկանում, որովհետև դե անգլերեն էի խոսում ընկերոջս հետ: Մեկը ասում էր. «գնացել հետևին իմպլանտներ ա տեղադրել»: Մեզ համարում էի համ աղջիկներ, համ զույգ, համ լեսզբի զույգ, մեր սեքսն էին քննարկում»:
- «Անտարբեր էին բոլորը: Ես նեյտրալ արտաքինով եմ ներկայացել, դրա համար դեպքեր չեն եղել»:
- «Բոլորը հեռավորություն էին պահում ինձանից: Ծաղրում էին, հոգեբանականորեն ճնշվում էի»:
- «Ընդհանրապես իրանց վերաբերմունքը չկար իմ հանդեպ: Որովհետև ընդեղ մե լոզունգմ կար, որ ախպերս սաղս էլ հիվանդ եմք, հեջ մարդ էլ առողջ չենք: Այ ըսպես խոսակցությունները պատկերացնեսզք, որը՝ ձև բռնած, որը՝ իրական, չես կրա տարբերես, աշխատողների ոչ կայուն վերաբերմունք: Ֆիզիկական բռնության դեպք չի եղել, իսկ հոգեբանական առկա է, որ անորոշ ժամանակով սպասել կտան, կասեն «մի բղավիր, դու իրավունքի չունես»:
- «Անձանոթներն էին հիմնականում բզբզում: Սաղ հետս ֆլիրտ էին անում»:
- «Մյուս զորակոչիկների կողմից վիրավորանքներ ու ռեպլիկներ ա եղել իմ նկատմամբ: Ինձ հարցեր էին տալիս ինչ-որ ու պատասխանում էի ես, որ ավելի քաջքշուկի մեջ չընկնեմ: Բայց հետո դադարեցի պատասխանել, արհամարեցի իրենց: Ինձ զորակոչիկները ինչ-որ հարցեր տալիս էին նաև հետազոտությունների ընթացքում, երբ միասին էինք լինում, բայց հիմնականում, տենց դեպքերում

- աշխատակիցները դուրս էին հանում իրենց սենյակներից»:
«Ճեղ հայացքներ են եղել, ռեպլիկներ: Հեռվից նայում էին, ու սկսում իրար մեջ խոսալ»:
- «Մի 200 հոգի էին դրսում: Հայացքներ էին հիմնականում, կարող ա երկար նայելին զուտ, բայց ես սպասել եմ սաղ գնան, նոր մտնեմ: Հիմնականում ադեկվատ էին»:
- «Տարօրինակ նայում էին բոլորը՝ ովքեր, որ կային: Կային թե՛ զորակոչիկներ, թե՛ նրանց ուղեկիցները: Ճեղ հայացքներ, ռեպլիկներ, հեռվից լսվող վիրավորանքներ են եղել»:
- «Մենակ գնալիս, ես գնում էի աղջկա տեսքով, ու էդ ժամանակ լինում էին ռեպլիկներ: Ասում էին «Էս տղա ա, հեսա գլուխը ջարդելու ենք» ու սենց բաներ»:
- «Եղել են տարածայություններ: Մի շատ ագռեսիվ տղա կար, որը տատուներ ուներ, ու դրանցով աչքի էր ընկնում: Մոտեցավ մեզ էդ տղեն, ես մի քանի հոգու հետ էի կանգած: Մոտեցավ սկսեց խոսալ: Հարցրեց ընկերոջս երկար եղունգների մասին –«կիթա՞ն ես նվագում, թե չէ»:
Պատասխանը եղավ, որ չէ, հետո ասեց –«յախք, էս ով ես դու» ու գնաց: Մի քանի րոպե հետո մոտեցավ նորից, ու սկսեց նույն տղուն վիրավորել, ու սպառնալ, որ կտփի ու քիթը կջարդի, իսկ էդ տղեն լացելով փախավ: Ու հետո էլ չտեսանք էդ տղուն: Հետո ես աշխատակիցներին կանչեցի, որ էդ տղուն հանդարտեցնեն: Էդ տղեն հետո սպասում էր դրսում ինձ, հավանաբար ինչ-որ բան անելու համար»:
- Այլ:

Հարցվողները նշել են, որ նման վերաբերմունքի արժանանալու պատճառը պայմանավորված է եղել իրենց արտաքին տեսքով՝ կանացի լինելով, յունիսեքս հագուստ (հագուստ, որը կարող են հագնել և՛ կանայք, և՛ տղամարդիկ) կրելով, ներկած մազեր ունենալով, ավելորդ քաշի առկայությամբ, ինչպես նաև սեռական ուղղվածությամբ և գենդերային ինքնությամբ, շարժունակ և ժեստիկուլացիայով:

Զինվորական կոմիսարիատների տարածքում անհարկի սպասեցումների հետ կապված, զորակոչիկները նշել են.


- «Սպասեցրել են շատ, մոտ 8 ժամ՝ ցրտին: Սխալ էին կազմակերպում հերթը և այլն»:
- «Ինձ անընդհատ հետ էին քցում հերթից: Մտել էի ընդունարանի ծյոծյաների մոտ, իրանք ինձ դուրս հրավիրեցին, ասեցին քեզ հետ աշխատող մարդ պետք ա գա, բայց մեկ ա վերջում էլի իրանք ինձ սպասարկեցին: Ու ինչ-որ փաստաթղթեր էին ուզում, ատեստատ և այլն»:
- «Ինձ ժամ էին նշանակել, որ ես պետքա գնալի, բայց ես գնացել սպասում էի ընդեղ ժամերով, պլյուս համաճարակը, որովհետև կուտակումներ էին լիքը: Միաժամանակ նույն ժամին կանչել էին մի քանի հարյուր հոգու»:

- «Միշտ սպասեցրել են անհարկի, գերծանրաբեռնվածության պատճառով, սխալ մոբիլիզացիա են արել, ու կարծում եմ էդ հեշտ գործ չի: Մտածում եմ, որ ինստիտու չեն արել սպասեցնելը»:
- «Օր ա եղել, մոտ 3 ժամ սպասել եմ սենյակում, որովհետև աշխատողները սուրճ էին խմում: Սպասել ենք, օրինակ՝ առավոտ ժամը 11-ից մինը ժամը 1-ը, 2-ը: Սխալ էին կազմակերպում ու վատ էին աշխատում: Մեզ ճնշող միջավայրում՝ քյարթերի հետ սպասացնում էին կորոնայի օրերին ու աշխատողներն էլ դիմակ չէին կրում, կանոնները չէին պահում»:
- «Ինձ սպասացրել են ու մոտ մի 200 հոգու մեջից ամենավերջինն են կանչել: Ու կարծում եմ, հենց մտածված են սպասեցրել»:
- «Իրանք կոնկրետ ժամ էին նշանակում բոլորին, բայց մեկ ա առնվազն մի ժամ սպասում էիր»:
- «Մենակ մի անգամ ա եղել, որ շատ քիչ եմ սպասել: Օրինակ՝ գնացել ենք առավոտ ժամը 7-ին, սպասել ենք ժամը 12-ը, 1-ը: Դաժը մինչև 4-ը, եղել ա որ սպասել ենք: Անգործության ու աշխատանքի սխալ կազմակերպման պատճառով ա եղել»:
- «Իրանց ծանոթներին կմտցնեին: Գուկային կսեն էս մեկը ու կառնեին առաջ կտանեին, իսկ դու կռնայիր ժամերով սպասեիր»:
- «Դե իհարկե շատ ենք սպասել, բայց չի կարելի ասել, որ անհարկի է եղել, որովհետև շատ կային մասնակիցներ ու բնական է միակ պատճառը գերծանրաբեռնվածություն էր ոչ մի դիտավորություն»:
- «Ինձ հիմնականում առաջ էին քցում, որ շուտ անցնեմ ու դուրս գամ: Ես ծանոթ ունեի ընդե, ինձ օգնում էր»:
- «Մյուսներին սպասեցնում էին, ոնց միշտ են սպասեցրել: Բայց ինձ արագ-արագ սպասարկում էին, ու առաջ քցում հերթից: Իրանք էլ էին հասկանում, որ կարան բնություններ լինեն, դրա համար»:
- «Կանչել էին առավոտյան 9-ին առաջին անգամ, ու սպասել եմ մինչև ժամը 4-ը, 5-ը: Յետո, որ նորից էի գնում, արդեն ուշ էի գնում, որ չսպասեմ: Մի օր զինկոմի աշխատողներն ընդմիջում էին անում ու մեզ 2 ժամ սպասացրել են, ինչ ա թե իրանք ընդմիջում անեն»:
- «Մի երկու-երեք ժամ սպասել եմ: Բժիշկներն էին ուշ գալիս, մինչև կոֆե էին խմում, նոր հերթը հասնում էր մեզ»:
- Այլ:

Այն հարցին, թե բժշկական հանձնաժողովներում քանի՞ մասնագետի կողմից են հետազոտվել, զորակոչիկները **պատասխանել են**.- «4 հոգու հետ եմ հետազոտվել, մի հոգեբան ու հոգեբուժ», «սրտաբան, վիրաբույժ, նյարդաբան, այլ մասնագետներ էլ կային բայց ես չեմ անցել նախ իմ

ցանկությամբ, որովհետև պետք է մերկանայի, և հաջորդը, երբ ասեցի սեռական ուղղվածության մասին, այլևս չուղորդեցին», «5 մասնագետի կողմից եմ ստուգվել», «3 հոգի ու ուղղորդել են հոգեբուժարան», «մոտ 8 հոգու կողմից», «չիդեմ ընչի մենակ նյարդաբանը հոգեբանը ու ընդհանուր ավագ սպան. 3-4 մասնագետ, հոգեբան», «8 հոգու հետ եմ ստուգվել, որոնց կեսը եղել ա պոլիկլինիկայում», «7 մասնագետի մոտ եմ ստուգվել ու էսքանին եմ տեսել», «2 հոգու կողմից եմ հետազոտվել», «3 հոգի», «ստուգվել եմ նաև ուռուլոգի կողմից, սոնոգրաֆիա եմ անցել, երիկամներիս հետ կապված խնդրի համար: Ընդհանուր 7 հոգի ա ստուգել ինձ», «6 հոգու կողմից եմ հետազոտվել» և այլն:

Ո՞ր մասնագետներն են հանձնաժողովի կազմում ներգրավված եղել և հետազոտել.



Հարցվող գորակոչիկներից ոմանք նշել են, որ մասնագետների սենյակներում եղել են այլ գորակոչիկների հետ, որոնք հետազոտվել են միաժամանակ, որոշ սենյակներ առանձնացված չեն եղել և դրանցում եղել են մի քանի մասնագետներ, ինչպես նաև կողմնակի անձինք, ուղեկցողներ և այլն:

Զորակոչիկները բժշկական հետազոտությունների ժամանակ մասնագետների վերաբերմունքի հետ կապված առանձնացրել են հետևյալ խնդիրներն ու տպավորությունները.

- «Ստուգում էին 5-ին միասին, բոլորի առաջ սեռական օրգաններն էին նայում՝ մերկացնելով: Ամաչում էի ես ահավոր, իմ համար տհաճ էր մնացածի մոտ հանվելը: Մյուսներն ավելի բռնուտալ էին, ես կանացի, դրա համար ես ամաչում էի: Բժիշկը բոլորի մոտ ասեց «ձվիկները փոքր ա, ուրեմն քո հորմոնները պակաս են»: Սրա վրա մյուսները ծիծաղեցին իմ վրա, ես ամաչեցի ահավոր: Հետազոտողը թքած ուներ վրես, արհամարական մոտեցում էր ցույց տալիս, կոպիտ հետս խոսաց, ջղային ասեց դուրս արի, դրսում հանգնվի: Ես տրուսիկս քաշեցի, ասեց հել նստարանների վրա հազնվի՝ միջանցքում: Ես դուրս եկա նստարանների վրա հանգնվեցի, ու միջանցքում եղածները ծիծաղում էին վրես»:
- «Առաջին ստուգման ժամանակ չեմ ուզեցել ասել իմ սեռական ուղղվածության մասին, ունեի նաև թոքերի հիվանդություն, մտածում էի դա կկարևորվի, բայց երբ ասեցի, որ չեմ հանվելու, ինձ սկսեցին ծաղրել, ասել լեքա

տղա ես, ամոթ ա ամաչելդ և այլն: Ու արդեն ես պարագայում ստիպված էի ասել, ու այդ ժամանակից սկսած մոռացվեց իմ թոքերի մասին բողոքը»:

«Շատ վախեցած էի, որովհետև անցնում էինք մի քանի հոգով հետազոտություններն ու սեղանների մոտով մասնագետների, ու նաև դե բոլորը կարային լսելն իմ մասին, ու ես չէի կարողանում ազատորեն իմ մասին բարձրաձայնել, իմ առողջության ու խնդիրների մասին: Մասնագետների վերաբերմունքը հեգնական էր կամ ծաղրական»:

«Ապահով չեմ զգացել: Ոմանք լավ էին վերաբերվում, ոմանք՝ չէին: Վատ վերաբերվել են 3 հոգի, հենց հոգեբանը ու երկու այլ աշխատակիցներ, որոնք չեմ հիշում ինչ աշխատակիցներ էին»:

«Հետազոտողների վերաբերմունքը եղել ա նեյտրալ, իսկ կոմիսարը շատ վատ ա իրան պահել, հոգեբանական բռնության ա ենթարկել ինձ: Անհանգստություն ու վախ եմ ունեցել, վերջում էլ սպառնացել ա, որ մերոնց կասի»:

«Ընդհանուր զալում ա եղել հետազոտությունները, ու շատերին լցնում էին մի սենյակ ու ստուգում»:

«Ստուգվում էինք մի քանի հոգով ու բոլորը իմ դպրոցից էին ու ինձ ճանաչեցին: Նույնիսկ աշխատողը, մտածված իմ նախկին անունն ասեց, որ բոլորը լսեն»:

«Շատ տարբերվեցին տեղի մասնագետների ու Երևանից եկածներինը, որ քո հետ կխոսար ավելի կոպիտ: Երևանից եկած մասնագետի մոտ վերաբերմունքը արդեն կփոխվեց, իրանք կսկսեին հոգեբանորեն ավելի սապահով վիճակի մեջ փորձել դնել, բայց ըդի՞ գ չէր ստացվի որովհետև դու ընդամենը տասնհինգ րոպե առաջ զրուցել էիր մեկ այլ մասնագետի հետ, որն որ ոչ կհասկնար թե ինչ դեպքի հետ գործ ունի ու չիդե թե քեզի հետ ինչխ վարվի»:

«Նայած բժիշկ: Հիմնականում նորմալ էին վերաբերվում: Որովհետև վնասվածքաբան, վիրաբուժ, սրտաբան նորմալ են վերաբերվել: Վնասվածքաբանից ուղեգիր եմ ստացել, որ գնամ ստուգվելու պոլիլիկնիկայում: Ունեի մեջքիս հետ կապված խնդիր: Բայց հոգեբույժը, նյարդաբանը միասին էին նստած: Հաջորդ փորձաքննության ժամանակ ես խնդրեցի հոգեբուժի հետ առանձին խոսալ, ինքը սկսեց կողքի բժշկի հետ քչփչալ, որ «հաստատ էդ ա, հաստատ էդ ա, հաստատ էդ ա», ու կողքի բժիշկը ասեց «ի՞նչ գիտես որ հաստատ էդ ա», ինքն էլ ասեց «բա ի՞նչ պետքա լինի, եթե խնդրում ա առանձին խոսալ»: Հետո մենք առանձնացանք, ինչ-որ տեղ, որ առանձին կաթինկա էր ու ասեց, ասա ինչ-կա, ես էլ ասեցի, որ բարձր չեմ ուզում ասել: Ինքը ասեց, որ մեզ

⁵ Հորմոնաթերապիա – բժշկական գործընթաց, որն անհրաժեշտ է սեռափոխության գործընթացներից առաջ, ընթացքում և հետո: Տե՛ս <https://www.ncbi.nlm.nih.gov/pmc/articles/PMC5182227/>

չեն լսում, հանգիստ ասեմ: Ասեցի, որ հոմոսեքսուալ (նույնասեռական) եմ: Ինքը ասեց «սեռի շեղում ամ մոտո», ես կրկնեցի, որ հոմոսեքսուալ եմ: Ինձ տարավ զինկոմի (կոմիսարի) մոտ ու ասեց, որ ես սեռի շեղում ունեմ: Ու քանի որ ես մեջքի խնդիր ունեի, նկատեցի, որ զինկոմը հոգեբուժին ասում ա, որ էդ մասին չգրեն, այլ բաց թողեն, որ մեջքի խնդրով ազատեն: Հոգեբույժն էդ ժամանակ մատիտով նշում արեց հոգեբույժի ու վնասվածքաբանի նշումների հատվածում նախատեսված տեղերում: Մյուս տեղերում գրիչներով էին նշումներ անում: Հետագայում ազատվեցի հենց մեջքիս հարցով»:

■ «Գլխավոր բժիշկը եկավ տեսավ ինձ, ասեց խի եմ երկար պալտո հագել: Հետո, տարավ ինձ հոգեբույժի մոտ: Էդ արդեն օրվա վերջում էր, ու պապան ներս էր մտել զինկոմի շենք, որ միասին դուրս գանք: Պապայի մոտ, պալտոյի համար ինձ տարավ հոգեբույժի մոտ: Հոգեբույժը սկսեց մի տեսակ նայել վրես, արհամարական ու շեղ, հետո հարցրեց, –«Ես կարո՞ղ ա սեռի շեղում ունեմ, նրանցի՞ց եմ, թե՞ ոչ»: Ես մի քանի վայրկյան մտածեցի, ուզում էի ասել, բայց պապայից վախեցա, ու չասեցի, ասեցի –«չէ, նույնասեռական չեմ»: Էդ պահին պապան նայեց ինձ, ու դուրս եկանք»:

■ «Հիմնականում հոգեբուժից էի վախենում, որը տարիքով կին էր, հազիվ էր քայլում: Ինքը ինձ ասեց, որ վերջում սպասեմ, ու ուղեգիր տվեց հոգեբուժարան: Հասկացել էր, որ նույնասեռական եմ: Հետո, ամենավերջում ուղեգիր միանգամից տվեց Նուբարաշենի (ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ) համար»:

■ «Աչքի բժիշկը աչքերս ստուգեց, ասեց «ոնց կարա քո նմանը սենց լավ տեսողություն ունենա»: Որովհետև ես լավ տեսողություն ունեմ ու ամենափոքր տառն էլ տեսա: Հետո մազերիս մասին սկսեց խոսալ: Իմ մազերը երկար էին, գրեթե ուսերիս մոտ էին հասնում, ինքը հարցեր էր տալիս, թե ինչի համար եմ երկարացնում մազերս, ինչի համար եմ ուզում աղջկա նման լինել: Իմ միակ պատասխանն էն էր, որ երկար մազ ունենալը դեռ աղջկա նման լինելու չափանիշ չի ու որ ինքը կարծրատիպային ա մտածում»:

■ «Եղել ա սենց դեպք. զինկոմիսարիատում, երբ երկրորդ անգամ ուղարկեցին հոգեբանի, իրանց մոտ երկու մարդ կար՝ մեկը հոգեբանն էր, մեկը զինկոմի աշխատակից, ու սենյակում երկուսով էին: Ինձ անվանեցին «գոմիկ», հետո որ ասեցի դասատու եմ, ինձ թարս նայեցին»:

■ Այլ:

Մասնագետների կողմից հնչեցված էթիկապես անընդունելի և ոչ մասնագիտական, անձնական և ընտանեկան կյանքին առնչվող հարցերի առնչությամբ զորակոչիկները նշել են.

- «Հոգեբուժը ավելի տրամաբանական հարցեր էր տալիս: Բայց հենց գինկոմի աշխատողը հարցրեց, հավատում եմ աստծուն թե չէ, ասեցի՝ այո: Ասեց «բա չե՞ս մտածում, որ աստված քեզ դեմ ա, խի՞ ես սենց: Ես իրան բացատրում էի, որ սա կապ չունի: Հարցնում էին «երբվանից ես սենց, ո՞ր տարիքում ես որոշել, որ աղջիկ ես, հարաբերություն ունեցած կաս, թե՛ չէ» և այլն»:
- «Հարցնում էին ընդունում ա ընտանիքս ինձ, թե՛ չէ»:
- «Ուղեգրող մարդը հարցրեց, թե ես քուր ավապեր ունե՞մ, հարցրեցին պապայից: Ասեցի, որ հաշմանդամ ա, մամաս ա տունը պահում, ասեցին «հա, ամեն ինչ պարզ ա քո հետ»:
- «Հարցրել են ծնողներիս ամունական կարգավիճակի մասին, քույր եղբայր ունե՞մ, թե՛ ոչ, ու արդյո՞ք իրանք էլ ունեն սեռական ուղղվածության խանգարում և այլն»:
- «Հարցնում էին շրջապատումս ավելի շատ աղջիկներն են գերակշռում, թե՛ տղաները: Ասում էին, եթե ես սենց հոդված ունեմ առողջական, ես պետքա չաշխատեմ, ու դրա համար էին հարցեր տալիս անիմաստ: Ասում էի, եթե չաշխատեմ, ինձ ով ա պահելու: Տենց ուզում էին կոնֆլիկտ սարքել, որ ուղարկեն հոգեբուժարան: Նույնիսկ ասեցին –«դու ագրեսիվ ես, պետք ա գնաս հոգեբուժարան, ընդեղ էլ ամեն ինչ կասես»:
- «Երբ հոգեբանի մոտ էի, հարցրեց ակտիվ եմ, թե պասիվ: Ասեցի էդ ինչա՞մ, ասեց սեքսում աղջիկ ես սիրում, թե՛ տղայի: Ես էլ ասեցի, որ ասեքսուալ եմ: Հարցրեց ՀԿ-ների հետ համագործակցություն ունե՞ս, ասեցի հա, գնում գալիս եմ, շփվում եմ հետները, այդտեղ զգաստացավ հեգեբանը: Կողքից տղաներ էին գալիս, ասում էին «գոմիկ ա էսի»: Հետո մի տղա կար, որը ասել էր, եթե հարցեր լինի ես կօգնեմ՝ ինքը գինկոմի աշխատող էր: Էդ տղուն կանչեց հոգեբանը ու ինձ ուղղորդեցին ավելի բարձր պաշտոն ունեցող աշխատողի մոտ: Այնտեղ ինձ ուղղորդեցին ստուգումների՝ հորմոնների համար: Հետո նույն օրը գնացի, ստուգվեցի պարզվեց, որ տղամարդու հորմոններս քիչ են ու մամայի ստիպելով մոտ 8 ամիս անցա հորմոնաթերապիա⁵ ներարկվում էի տղամարդու հորմոններ: Հոգեբանի հետ խոսալուց դուռ չկար, ու ես ինչ խոսում էի, բոլորը լսում էին: Բարակ կարդոնով (ստվարաթուղթ) էին առանձնացված ստուգումների կուպենները»:
- «Հոգեբուժը հոմոսեքսուալիզմ ասեց, որը սխալ ենթադրություն ա: Որակեց որպես հիվանդություն: Մենակ էդ ա եղել: Շատ խիստ սեռական անձնական բնույթի հարցեր էին տալիս: Օրինակ՝ թե ի՞նչ դիրք ունեմ սեքսի ժամանակ, ինչպե՞ս եմ օրգազմի հասնում, ի՞նչ եմ ընդհանրապես անում, հարցնում են նաև ունե՞մ գուգընկեր, արդյո՞ք նա ինձանից մեծ ա շատ, թե՛ ոչ»:
- «Հոգեբույժի մոտ, քանի որ հոգեբան չկար, երբ ասեցի ՍՈՒԳԻ-ի մասին, սկսեց հարցնել, ո՞նց, դու տղայի՞ ես սիրում, էդ ո՞րն ա, աղջկա հետ չե՞ս եղել»:

- «Յոգեբուժը/կամ հոգեբանը, բացարձակ նորմալ հարցեր չէր տալիս, օրինակ՝ հարցնում էր գիշերը չի՞շիկ անում եմ տակս, թե ոչ, ու տենց փորձում էր ծաղրական միջավայր ստեղծել, ու միջանցքում կանգանձները դա լսում ու ծիծաղում էին: Ու եթե ունենայի էլ, ծիծաղելու պատճառով չէի էլ ասի, մասայական դեպքում: Հարցնում էր «գժոտ» բաներ ունեմ, թե՞ ոչ: Կամ հարցեր էր տալիս ու առանց լսելու ինչ-որ նշումներ անում, անցնում առաջ: Յոգեբուժին երբ փորձում էի ինչ-որ կերպ առանձին խոսալ, բայց չէր ստացվում դա: Փորձեցի հասկացնել, որ մյուսները գնան, որ իմ ՍՈՒԳԻ-ի մասին ասեմ: Առաջին անգամից չստացվեց: Երկրորդ անգամ, երբ հարցրեց, նորից խնդիրներ ունեմ թե՞ չէ, ասեցի, որ դյուրագրգիռ եմ, մյուսները ծիծաղեցին իմ վրա, բժիշկն ասեց, դե դա խնդիր չի ու միանգամից փակեց թղթերս ու գնաց: Հետո երբ հասանք սրտաբանի մոտ, հարցրեցի նա՞ է գլխավոր բժիշկը, ասեց՝ չէ, ասեցի ռնց կարամ գլխավորի հետ խոսամ կամ հոգեբանի հետ, ասեց ի՞նչ հարցով, ասեցի ուզում եմ առանձին խոսալ, հետո նորից ուղղորդեց էն հոգեբուժի մոտ: Ասեցի բան ունեմ ասելու, ասեց ասա, ասեցի գնանք առանձին: Մի երկու մետր մի կողմ գնացինք, առանձին կաբինկա, ասեց դե ասա, ես էլ ասեցի, որ գեյ եմ, ասեց այսինքն տղաների ես սիրում, ասեցի հա՛, ասեց արի հետևիցս ու մտանք պետի մոտ: Մի այլ դեպք էլ կար, որ 3 բժիշկ կային նստած, որոնք ֆիքսվել էին իմ հետույքի վրայի այրվածքի սպիի վրա, հարցեր էին տալիս անիմաստ ու ծիծաղում»:
- «Երբ ասեցի, որ ես համ գեյ եմ համարում ինձ, համ տրանս ու չգիտեին, ոչ բիւնար անձը որնա, հարցնում էին ուզում եմ կի՞ն դառնամ, հղիանամ, ռնց եմ օրգազմի հասնում, ուզում եմ կտրեմ անդամս, թե՞ չէ: Հարցնում էին՝ «ո՞ր դիրքով ես անում, ինչքան հաճախ ես անում, ում հետ ես անում, ինչ դեր ունես սեքսում» և այլն»:
- «Ամբողջ ընթացքում նույն հարցերն են տվել, որոնք իմ գործի հետ կապ չունեին: Հարցնում էին, թե ինչքան հաճախ եմ սեքս ունենում, ընկեր ունե՞մ, թե՞ չէ, ընտանիքս գիտի՞ իմ մասին, թե՞ չէ: Ընտանիքն անդամներից են հարցնում, քուր ախպեր ունե՞մ, թե՞ չէ, երբ իմացել են, ի՞նչ ռեակցիա են տվել և այլն: Հարցնում էին, թե քանի՞ տարեկանից ա եղել էդ մոտս, մի՞րբ եմ ջոգել էդ, քանի՞ տարեկանում ա եղել տղու հետ, աղջիկների հետ եղե՞լ ա թե՞ չէ: Ասում էին՝ «լսի, դու հիմա աղջիկ չե՞ս սիրում վաբժե» և նման հարցեր»:
- «Հարցնում էին, թե մամաս գիտի՞, պապամս գիտի, ռնց են վերաբերվում, հարևաններն ի՞նչ են խոսում: Ընտանիքի անդամների սեռական ուղղվածության մասին էլ էին հարցնում»:
- «Զուգընկերոջս մասին էին հարցնում՝ ո՞վ ա, ինչ ա՞, ծառայե՞լ ա, թե՞ չէ և այլն: Քանի՞ անգամ եմ հետը սեքս անում»:
- «Հարցնում էին, թե ինչի՞ համար ա ընկերս մահացել, ինչի՞ որոշեցի որ տրանս դառնամ, ինձ իմ պահվածքը դու՞ր ա

որոշեցի որ տրանս դառնամ, ինձ իմ պահվածքը դո՛ւր աս
գալիս, թե՛ չէ, ու սենց շարունակ»:

Հարցվողներից ԳԲՏԶ+ անձինք նշել են, որ իրենց սեռական
ուղղվածության և գենդերային ինքնության մասին առաջինը
տեղեկացրել են հոգեբանին, հոգեբույժին, ընդհանուր
մասնագետին և օտորալինգոլոգին, որոշներն էլ չեն հիշում
բժշկի մասնագիտական ուղղվածությունը:
ՍՈՒԳԻ-ի մասին իմանալիս մասնագետի արձագանքը և իրենց
հոգեվիճակը նկարագրելիս, զորակոչիկները նշել են.

- «Խուճապի մատնվեցի, որովհետև մարդը տերմինը չէր
հասկանում (նույնասեռական տերմինը), ու ես կաշկանդված
էի, չգիտեի, ո՞նց ասեի, լեզուս կուլ էր գնում ու դժվարանում
էի նորից ասել իմ մասին»:
- «Անգրագետ, կոպիտ մարդիկ էին սաղ: Անտանելի էր էդ
գիտկմիսարիատը: Բոլորի նկատմամբ անքաղաքավարի
էին շփվում»:
- «Հեգնանք ու զզվանք ա եղել»:
- «Վախեցած էի ես ընդհանուր առմամբ, որովհետև փոքր
կաբինկայի մեջ ասեցի իմ մասին, ու չէի կարա վստահ
լինեի, որ ինչ-որ բնության չէի ենթարկվի, ու երբ ասեց, որ
գնամ իր հետևից, ըտեղ ավելի վախեցա, որովհետև չգիտեի
ուր ա տանում»:
- «Նորմալ էր: Ինձ թվումա էնքան են տեսել մեր նման
մարդիկ, որ արդեն սովորական ա»:
- «Չեմ արձագանքել ինչ-որ ձև, տենց էլ սպասում էի:
Հոգեբանը նենց հարցեր էր տալիս, որոնք տրավմատիկ էին,
որոնք նվաստացուցիչ են, տերմինները վիրավորական են,
ճնշող»:
- «Չեմ կարող ասել, թե ինչ բժիշկ էր: Երբ առաջին ստուգման
համար մտա, քաշս չափեցին, հասակս/ բոյս: Ես հագել էի
կալգոտկա, շալվար, ոտքերիս գուլպաներ, ու սապոկ: Մի
պապիկ էր մասնագետը, որ ոտքերիս չափսը վերցնելու
համար խնդրեց հանեմ սապոկը: Հանեցի, ասաց, որ
գուլպան էլ հանեմ, դա էլ հանեցի, ասաց «էս մի գուլպան էլ
հանի», ասացի, որ դա չեմ կարող հանել՝ կալգոտկայա, որ
հանեմ, պետք ա շալվարս հանեմ ամբողջությամբ»: Ասեց.
«ուրեմն մի հանի, բայց եղբան էլ ցուրտ չի, որ մի քանի տակ
ես հագնվել»: Խոսում էր շատ հանգիստ տոնով, առանց որևէ
էմոցիա արտահայտելու, բարեհամբույր էր: Ես ասեցի իրեն,
որ ուզում եմ առանձին խոսել հոգեբանի կամ գլխավոր
բժշկի հետ: Երբ դա ասացի, սենյակում գտնվող մյուս երկու
մասնագետներին ասեց, որ գնան այդտեղից ու գոռալով
մյուս 3 զորակոչիկների վրա, ասեց «արագ դուրս եկեք
ստեղից միատ»: Ինձ մոտեցրեց մի կաբինկայի մեջ, ու
ականջը բերանիս մոտ բերելով հարցրեց, թե ինչ եմ ուզում
ասել:

Էդ պահը շատ վախենալու էր, ես սարսափում էի, չնայած նրան, որ շատ հանգիստ էր վերաբերվում ինձ, նուրբ էր վերաբերվում, որովհետև ինձ կնոջ տեղ էր դրել։
Վախենալով ասեցի, որ ես նույնասեռական եմ։ Հենց ասեցի, թևիցս բռնեց ու քարշ թվեց կոմիսարի մոտ։ Կոմիսարը մենակ չէր։ Իրանց ներկայությամբ ասեց, բան ունեմ ասելու։ Կոմիսարը խնդրեց մյուսներին դուրս գալ սենյակից։ Ես ու ինքը հանգիստ խոսեցինք, մոտ կես ժամ։ Կյանքս պատմեցի, բայց կոմիսարը բավականին քաղքավարի ու գրագետ մոտեցում ուներ, չվիրավորեց, ու տեղեկացրեց, որ եթե չուզենամ ինչ-որ հարցի պատասխանել, կարամ չպատասխանեմ։ Ամենավերջում ներողություն խնդրելով ասաց. «Կներես Ադամ ջան, չմտածես՝ քեզ հիվանդի տեղ եմ դրել, բայց կարգն ընենց ա, որ պետքա քեզ ուղեգրեմ հոգեբուժարան։ Հիմա կարաս գնաս տուն»»։

- «Ես 2-րդ այցի ժամանակ ասեցի մենակ իմ ՍՈՒԳԻ-ի մասին, ինձ առանձնացրեցին, տարան ուրիշ սենյակ։ Հեռախոսս միացրած էի մտել, նայեց թղթերս, տեսավ, որ ունեմ այլ հիվանդություն՝ երևանյան, հետո ես էլ ասեցի, որ ես տրանս եմ։ Էդ մարդն ասեց, որ ես չասեմ դրա մասին, որովհետև հենց իմ հիվանդությամբ կարամ ազատվեմ։ Ասեցի, որ երկու ինֆոն էլ կարամ ասեմ, ասեց, որ ինչ ուզում եմ, ասեմ»։

- «Ես մունաթ էի ընդեղ։ Եթե մունաթ չլինեի, ինչ ուզեիս կանեիս ինձ ընդեղ, ոնց անում էին մյուսներին, ասենք խելոք երեխեք էին գալիս, քաշքշում էին, թևից բռնում տանում ստեղ, ընդեղ կոպտորեն։ Քանի որ երիկամների խնդիր ունեմ, իմ ճնշումի ամենացածրը 130-140-նա։ Սրտաբանը ճնշումս չափեց, ու գրում ա նորմալ ճնշումի չափով։ Ասում եմ –«ցույց տվեք», ցույց չի տալիս։ Կռիվ արեցի, որ ցույց տա։ Ձեռների վրա եկավ գլխավոր բժիշկը, նորից չափել տվեց, ու այս անգամ արդեն նորմալ եղավ։ Ես տեսա, որ գրել էր նորմալ ճնշում, բայց արդեն իմ իսկական ճնշման չափը գրեց։ Տենց էին անում, որ տանեն բանակ, կարծում եմ»։

Խտրականությունը գորակոչիկների պատկերացմամբ.

- «Մարդու իրավունքների խախտում ա խտրականությունը, դրսևորումներն են, երբ արգելում են կամ չեն թողնում, որ իրավունքներդ իրացնես»։
- «Խտրականությունը ոչ հավասար ու անարդար վերաբերմունքն ա անձի նկատմամբ, պայմանավորված որևէ սոցիալական խմբի անդամ լինելու հանգամանքով։ Օրինակ՝ աշխատավայրում աշխատանքի չընդունվելը, կամ քիչ աշխատավարձը, ումանս իրավունքի չիրացումը և այլն»։

որոշեցի որ տրանս դառնամ, ինձ իմ պահվածքը դո՛ւր աս գալիս, թե՛ չէ, ու սենց շարունակ»:

- «Խտրականությունը, իմ իրավունքների ոտնահարումն է, այն ինչի իրավունքը ես ունեմ սահմանափակվում է անհատի կամ կազմակերպությունների կողմից:

Խտրականության դրսևորում է, երբ մարդու սեռական ուղղվածության պատճառով արգելում են սովորել պետական ԲՈՒՀ-երում»:

- «Տարբերվող մարդկանց հանդեպ խտրականությունն աս: Օրինակ, որ չեն ընդունում իրենց տարբերվող լինելը»:

- «Տարբերվող վերաբերմունք, ինչ-որ տարբերություններ ունեցող անձանց հանդեպ»:

- «Ինձ թվում աս տարբերակումն աս՝ վատ առումով ու իրավունքները չհարգելը: Դրսևորումներն են հոմոֆոբիան, ռասիզմը, սեքսիզմը և այլն»:

- «Միևնույն միջավայրում անհավասար վերաբերմունքն է որոշակի գործոններից ելնելով: Անհավասար վերաբերմունքն է դրսևորումը»:

- «Երբ քեզ ինչ-որ վատ վերաբերմունք են ցույց տալիս քո ինքնության պատճառով»:

- «Խտրականությունն ինձ թվում աս ազգային փոքրամասնություններին ոչ հավասար կերպով նայելն աս: Դրսևորվում աս շատ տարբեր ձևերով, թեկուզ աշխատանքի ընդունվելու ժամանակ»:

- «Խտրականությունը էն է, որ մեկ, երկու, երեք դեպքեր կունենան, երբ մարդիկ կփախնին ծառայությունից ու խուսափելու պատճառով կընգնին սողոսկելու ճանապարհներին, կխափեն, դիագնոզ կփոխեն և այլն, իրանք կկարծեն, որ բոլորը էդ ձևի են ու կսկսեն նույն արշինով չափել»:

- «Կա սեռական ուղղվածությամբ պայմանավորված, ծերերի հանդեպ, կանանց, երեխաների»:

- «Խտրականություն է, երբ դու մեծամասնությունից տարբերվում ես, մարդիկ իրանց պատկերացումներից ու աշխարհայացքից ելնելով քեզ խտրականացնում են՝ անջատելով մեծամասնությունից բացասական վերաբերմունքով»:

- «Վերաբերմունք աս մյուսներից տարբեր, ինչ-որ չափով ագրեսիվ, ու ավելի վատ»:

- «Տարբերակված վերաբերմունքը: Դրսևորվում է ուղղակի, անուղղակի ձևերով»:

Բռնությունը գորակոչիկների պատկերացմամբ.

- «Բռնության դրսևորվում աս հոգեբանական, ֆիզիկական ճնշումները: Հոմաֆոբիան էլ աս բռնություն»:

- «Բռնությունը ֆիզիկական կամ հոգեբանական վերաբերմունքն աս, որի նպատակն աս ցավ պատճառելը»:

- «Ֆիզիկականը իմ մարմնի վրա ուժ գործադրելն է, իսկ հոգեբանականը՝ իմ դրսևորումների, առանձնահատկությունների բախումն է մյուսների հետ, երբ մյուսը հակադրվում է և ասում, որ ճիշտը պետք է լինի այսպես»:
- «Պարտադրանք ա բռնությունը, իշխանություն, ինչ-որ գաղափար: Դրսևորվում ա ֆիզիկական ուժով, հոգեբանական ճնշմամբ»:
- «Բացասական գործողություն ցավ պատճառելու համար որևէ անձի կամ խմբի նկատմամբ: Լինում են վերբալ, ֆիզիկական, մենթալ, հոգեբանական, տնտեսական»:
- -«Տարբեր են՝ ծեծել, ճնշել հոգեբանորեն»:
- «Մարդու ֆիզիկական ու անձնական տարածքը չհարգելը ու մարդու անձեռնմխելիությունը ոտնահարելն է»:
- «Բռնությունն, ըստ իս, իմ կամքին հակառակ իմ գործողությունների ու շարժի սահմանափակումն ա»:
- «Բռնությունը անձի իրավունքների խախտումն ա ու բարոյականության դեմ գործողությունը»:
- «Դե, օրինակ՝ հոգեբանական բռնություն է մարդու նկատմամբ, երբ մարդը կսե որ դիագնոզ ունիմ և ես ծառայությանը ոչ պիտանի եմ, նրանք հոգեբանական բռնություն կկիրառեն, ըսելով –«շատ սիրուն քեզի կտանինք բանակ ու կանգնի սպասե հիմա ինչ էնենք, որ դու որ ըդպես ես, ըդիգ չի նշանակե, որ դու արտոնյալ ես, պետք է կանգնես սաղի հետ սպասես»: Ընձի մոտ երկու ամիս տարել բերել են, մինչև վայելնի բիլետ տվին»:
- «Հիմնականում սեռական բռնություն ա լինում: Դրսևորվում ա հարձակումների ձևով»:
- «Մարդու կամքին հակառակ կատարվող գործողություն: Օրինակ՝ ընտանեկան բռնությունը»:
- «Որևէ գործողություն՝ ցավ պատճառելու նպատակով: Ֆիզիկական, հոգեբանական, տնտեսական, սեռական, ավանդույթների վրա հիմնված»:
- Այլ:

Բժշկական հանձնաժողովների անդամների կողմից գորակոչիկների նկատմամբ խտրականության և բռնության դրսևորման կապակցությամբ գորակոչիկները վերհիշել են.

- «Մի ձեռնափայտով տղա կար, իրա վրա բոլորը խնդում էին, ու ինքը իմ կողքն էր կանգած: Աշխատողներից մեկը, եկավ անզգուշորեն խփեց, քաշեց, գցեց ձեռնափայտը ու ինձ ասեց, որ վերցնեմ ու տամ ձեռնափայտը էդ տղուն՝ «մի հատ վեկալ, տուր իրան», ու գնաց»:
- «Իմ նկատմամբ չի եղել ու չեմ էլ նկատել: Բայց վստահ եմ, որ կոպիտ ու բռի վերաբերմունք էդ գինվորական վերաբերմունքը, կար հաստատ այլոց նկատմամբ»:
- «Իմ հանդեպ հոգեբանական բռնություն ա եղել: Բղավոցներով ա եղել, սպառնալիքներով, շանտաժով:

Ասում էին. «տղա ջան, դու ամոթ չե՞ս անում, իմ տղան լինեիր 8-րդ հարկից կշարտեի: Ես պետք ա քո ծնողներին ասեմ, ես պետք ա իրանց ասեմ»: Ընդ որում, ես սենյակում մենակ չէի, այլ զորակոչիկների հետ, ու այլ աշխատակիցների հետ, որոնց չեմ ճանաչել մինչ այդ»:

- «Մի տղա էր եկել, որի երկու ոտքերը կտրված էին: Իրան հերթի մեջ էին պահում ժամերով, ոտքի վրա, հենակներով էր: Դրսում, նստելու տեղ չկար: Ես իմ հերթը զիջեցի իրան: Էտ տղեն ասեց, որ ազատված ա բանակից, հետաձգել են, հիմա նորից են կանչել: Ասում էր «ոտքերս գնամ աճացնեմ, որ տանեն բանակ, պրծնեմ սրանցից»: Նաև, զինկոմի աշխատողները դուրս էին գալիս, հայաթից գտնում իրանց ծանոթներին, բարևում պաշիկով, գրկում, ներս էին տանում, որ առաջ քցեն իրանց հերթը»:
- «Բժիշկներից մեկը, զորակոչիկներից մեկի հետ կռիվ արեց: Գոռում էին շատ բարձր, բայց կոնկրետ չեմ իմացել պատճառը որն էր: Կռվողներին առանձնացրեցին ու ամեն ինչ ավարտվեց»:
- «Հոգեբանական բռնություն ա եղել, որովհետև գոռացել են վրես, երբ պետի սենյակում էի: Ու նաև տնտեսական բռնության եմ ենթարկվել, որովհետև արգելում էին հեռախոսից օգտվել, որ ինձ ուղեկցող անձի կամ այլ անձի հետ կապի դուրս գալի: Իրանք էլ վստահ էին, որ ես կարող եմ զանգել փաստաբանի կամ այլ անձի՝ օգնության համար, որովհետև հատկապես ինձ շատ ուշադիր էին եղ առումով: Ասում էին, որ ես հանգիստ լինեմ, չփորձեմ նկարել կամ ձայնագրել, ու ասում էին, որ տարածքը տեսահսկվում ա»:
- «Ես թույլ չեմ տվել, որ նայեն իմ սեռական օրգանները: Իրանք ինձ ստիպում էին, գոռում վրես, որ բացեմ նայեն: Ես թույլ չէի տալիս: Իրանք էլ ֆռացին հեգնանքով ասեցին՝ «լավ մենք շորի վրայից կպատկերացնենք»:

Զորակոչիկներից ոմանք բժշկական փորձաքննությունների ընթացքում հանդիպել են նաև բժշկական գաղտնիքի հրապարակման, անձնական կամ ընտանեկան կյանքի գաղտնիության խախտման և անձնական տվյալների հրապարակման դեպքերի:

Անձանց անձնական կյանքի մասին տեղեկատվությունը հրապարակայնացնելու արդյունքում ստեղծվել են այնպիսի իրավիճակներ, երբ աշխատավայրում ձևավորվել է խտրական միջավայր, որի հետևանքով անձը ստիպված է եղել փոխել աշխատավայրը, գործատուն ազատել է աշխատանքից, բնակության վայրում է ձևավորվել խտրական միջավայր, որի հետևանքով անձը ստիպված է եղել փոխել բնակության վայրը և այլն:

Հարցին, թե արդյոք զինվորական կոմիսարիատի տարածքում

կային նախազգուշացնող թերթիկներ՝ հայտարարություններ՝ ծայնագրությունների, տեսագրությունների և տեսաձայնագրությունների արգելքի մասին, զորակոչիկների **45%-ը** նշել է՝ ոչ, **15%-ը**՝ այո, մյուսները նշել են, որ չեն հիշում, ուշադրություն չեն դարձրել և այլն:




Ընդ որում եղել են դեպքեր, երբ զորակոչիկներին ուղղակիորեն արգելել են ծայնագրել, նկարահանումներ անել, ասելով, որ անջատեն հեռախոսը, դնեն գրպանում, չօգտագործեն՝ միաժամանակ ցույց տալով պատին փակցված նախազգուշացնող թերթիկները:


Հարցվող զորակոչիկներից շատերին ուղեգրել են բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններ (օրինակ՝ «Աստղիկ» ԲԿ, «Արաբկիր» ԲԿ, թիվ 6 պոլիկլինիկա և այլն) համապատասխան ստուգումներ և հետազոտություններ անցնելու նպատակով, մասնավորապես՝ կապված հորմոնների, սրտի, գլխի, ճակատի, մեջքի և այլ խնդիրների հետ: Անձինք, (առավելապես ԳԲՏԶ+) ուղեգրվել են նաև հոգեկան առողջության կենտրոններ («Ավան» հոգեկան առողջության կենտրոն, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ):

Զորակոչիկների 40%-ը հոգեբուժական հաստատություններ կայացել են ուղեկցող անձանց հետ, որոնք հանդիսացել են իրենց ընտանիքի անդամը կամ ընկերը:

Ուղեկից ունեցել են, թե՛ ոչ:



Ովքե՞ր են հանդիսացել ուղեկցողները.



- ընտանիքի անդամ
- ընկեր
- զուգընկեր
- իրավաբան/փաստաբան
- ոլորտային հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ/իրավապաշտպաններ
- Քեռիիս հետ եմ ներկայացել միշտ:
- Ընկերներիցս մեկնա հետս եղել ու զուգընկերը:

Հոգեկան առողջության կենտրոն մուտք գործելիս գորակոչիկները հիմնականում տեղյակ չեն եղել ընթացակարգերին, չեն կողմնորոշվել տարածքում: Նրանց դիմավորել և ուղեկցել են տարբեր անձինք, մասնավորապես, գորակոչիկները նշում են. «Ավանում կար պոստանման տեղ, որտեղ նստած էր բուժքույր և ստուգում էր ջերմաստիճան, քաշ, բոյ և այլն: Այնտեղ հերթերն ահավոր էին՝ 60 րոպե սպասել ենք: Բուժքույրը տարբեր հաստիքներ էր կատարում, ու դրա պատճառով էին հերթերը: Բուժքույրը ասեց, որ պետք է պարտադիր մնամ հոգեկան առողջության կենտրոնում, ես ընդդիմացա և չմնացի: Վիրավորում էր իմ արտաքին տեսքը, նաև՝ ընկերուհուս, ու մյուս այցելուների հետ քննարկում և ծաղրում էր մեզ», «Կարգադրիչ կար: Իրան «քեռի» մականունով էին դիմում: Ասել էին, որ գնամ մուտքի մոտ էսինչ օրն ու ժամին, ընդեղ կսպասի ինձ: Ես մենակ չէի, այլ գորակոչիկներ էլ կային: Էդ «քեռին» մոտեցավ, անուններս հարցրեց ու ուղղորդեց ինչ-որ մասնագետների մոտ: Ինձ ուղղորդեց հոգեբույժի մոտ: Բայց ընդեղ չէր, ես էլ նստեցի ու սպասեցի», «Նուբարաշեն էին ուղղորդել, առաջին բանն էն ա, որ հազիվ եմ գտել տեղը: Դիմավորողը բարի աղջիկ էր շատ, ասեց տեղյակ ե՞ք, որ 2 օր մնալու եք: Ասեցի, որ չեմ մնա, կոպիտ ձևով ասեցի, որ չստիպեն, ու սպառնացի զանգել փաստաբանիս, որովհետև ընկերոջս ստիպում էին մնալ», «Ոչինչ չի եղել, ընկերս էր հետս, որն արդեն տեղյակ էր ամեն ինչից» և այլն:

Բոլոր գորակոչիկները նշել են, որ հոգեկան առողջության կենտրոնում եղել են նաև այլ գորակոչիկներ: Արդյունքում ականատես են եղել հետևյալ իրավիճակներին.

- «Կար մի գորակոչիկ, ով ուներ բացահայտ հոգեկան առողջության հետ կապված խնդիր, ով սկսեց կոնֆլիկտի մեջ մտնել և աթոռով հարվածել, բայց չկապվ մեզ: Չկար անվտանգության աշխատակից, որ միջամտեր և օգներ»:
- «Մի հոգի հոգական խնդիրներ ուներ՝ ակնհայտ երևացող: Մի անձ մտավոր խնդիրներ ուներ, որին ծաղրում էին չափից դուրս շատ: Ու նենց մարդիկ էին, որոնք ձև էին թափում, որ ունեն հոգեկան խնդիրներ՝ ազատվելու համար»:

- «Չեմ խոսել, մենակ ֆիքսել եմ, որ կային զորակոչիկներ, որոնք ունեին հոգեկան խնդիրներ: Մենք միջանցքում սպասելիս ապահով չէինք զգում մեզ, վախենում էինք: Իրենք մոտենում էին մեզ, բայց բարեբախտաբար վնասներ չեն տվել: Մի երկու ժամ իրանց հետ կանգնած մնացել ենք միջանցքում, որովհետև մի քանի աթոռ կար, որոնք զբաղված էին: Ես կանչեցի աշխատակիցներից մեկին, ասեցի, որ չեմ կարա էս միջավայրում էսքան սպասեմ: Ինձ տարան ինչ-որ սենյակ, որտեղ էլի մարդիկ կային պառկած, բայց ինձ ուշադրություն չէին դարձնում»:
- «Կային ծանր հոգեբանական խնդիրներ ունեցող անձինք: Կային մարդիկ, որոնք մի քիչ անպաշտպան էին, ու իրանց էլ էին ուղարկել հոգեբուժարան: ԳԲՏԲ+ անձ երկուսով էինք»:
- «Մյուս զորակոչիկները կոնկրետ իմ կողքը կանգնած, բամբասվում էին ինձանից, ասում էին –«Էս գոմիկները կարշկվում են ստեղ մեզ, վախենում ենք քնենք իրանց հետ նույն սենյակում»: Զորակոչիկներն էդ ասում էին իրանց ծնողներին»:

Արդյո՞ք հոգեկան առողջության կենտրոնում կային այլ զորակոչիկներ.



Հոգեկան առողջության կենտրոնում զորակոչիկները ստորագրել են փաստաթղթեր, սակայն դժվարանում են հիշել, թե ինչի վերաբերյալ էին դրանք: Միայն ոմանք կարողացան վերհիշել, որ ստորագրել են գրանցման և մուտք գործելու վերաբերյալ փաստաթղթեր, պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացուն տրվող իրազեկման թերթիկներ և գիշերը տանը գիշերելու համար թույլտվության թերթիկներ:

Հոգեկան առողջության կենտրոնում գտնվելու ընթացքում եղել են անհարկի հերթեր և կուտակումներ:

Մասնավորապես, զորակոչիկները նշել են. – «Հիմնական հերթը եղել է բուժքրոջ մոտ: Անհարկի սպասեցրել են ինձ, որովհետև բուժքույրը դիտավորյալ առաջ էր անցկացնում այլ մարդկանց և ես մնում էի նույն տեղում», «Ինձ անհարկի սպասեցրել են՝ մոտ երկուսուկես ժամ, բժշկի մոտ մտնելիս:

Բժիշկը ուշանում էր հետո եկավ, գնաց ժողովի, ժողովը պրծավ հետո ասեցին հիվանդ ունի, որն ավելի առաջնահերթ ա հիմա ու տենց ես սպասում էի դրսում, ու սպասելու ընթացքում այլ զորակոչիկներ իմ հետևից ֆոֆոում էին: Կարծում եմ սխալ էին կազմակերպում հերթերը», «Ընդհանուր իրավիճակը տրավմատիկ էր, հերթերը էլի տրավմատիկ, ծայրահեղ ծանր պայմաններ, ժամերով հերթ էինք սպասում», «Կուտակումներ շատ կային, մասնագետներ երևի թե քիչ կային», «Հերթեր ու կուտակումներ շատ կային: Բժիշկները ժամերով սպասեցրել են մոտ 5-6 ժամ: Իմ հետ կային նաև հիվանդ մարդիկ, իրոք հիվանդներ, որոնք էլի սպասում էին: Մեզ թարս էին նայում մյուս զորակոչիկները, փորձում խոսակցության բռնվել մեզ հետ: Բայց բուժքույրը նորմալ էր շփվում հետներս», «Հերթեր կային, բայց կուտակումները շատ չէին: Մաքսիմում 5-7 հոգի էին հերթում, հերթով մտնում մասնագետների մոտ հելուում էին: Գերծանրաբեռնվածությունն է եղել պատճառը: Մեկ էլ էն, որ բժիշկները տեղում էին, այցելուները հավաքվում՝ սպասում էին, որ գա մասնագետը» և այլն:

Հարցին, թե քանի՞ և ի՞նչ մասնագետների կողմից են հետազոտվել հոգեկան առողջության կենտրոնում, զորակոչիկները նշել են. - «Երկու հոգեբուժի մոտ եմ մտել», «Նշանակել են ինձ հոգեբանի մոտ այցեր, բայց դրանք հետաձգվեցին, հետո չեղարկվեցին: Միայն հարցազրույց է եղել հոգեբույժի հետ և վերջ, այլ փորձաքննություն չի եղել», «3 հոգի էին, 2 տղամարդ, 1 կին, հոգեբուժներ էին, կային հոգեբաններ, պաշտոնները չեմ իմացել: Բոլորը մի կաբինետում էին», «Առաջինը տեղում, մուտքի մոտ հարցեր ա տալիս, հետո գնում ես ժամերով սպասում ես հոգեբանին, ու մտնում ես ներս, էլի 3-4 հոգի նստում են, ու հարցեր են տալիս՝ առանց ներկայացնելու իրանց», «Հոգեբան, հոգեբույժ ու ամենավերջում 3 հոգանոց փորձագետների խումբ ա եղել, ամբողջությամբ՝ 5 հոգի», «Սկզբից մտա հենց հոգեբանի մոտ, որը շատ հաճելի մարդ էր, հետո գնացի հանձնաժողով, 1 տղամարդ, 2 կին էին», «Մոտ 3 մասնագետի, որից մեկը հոգեբանն էր կամ հոգեբուժը: Մյուսը չեմ հիշում, բայց ինքն ուղղակի գրանցումներ էր անում: Երկրորդ կաբինետը, որ մտա, մեկը գլխավոր բժիշկն էր, մի քանի հոգի էին, չեմ հիշում քանակը», «1 հոգու կողմից եմ ստուգվել, որը ոնց որ հոգեբանն էր: Հետո մի այլ բժշկի հետո արդեն գլխավոր բժիշկն էր», «Հոգեբուժի: Ու ավագ բուժքրոջ, որի հետ մի գրագիր կար՝ տղա էր» և այլն:

Հոգեկան առողջության կենտրոնում մասնագետներից յուրաքանչյուրի հետ զրույցը ըստ զորակոչիկների հիմնականում տևել է 10-ից 15 րոպե: Եղել են նաև առանձին պատասխաններ, ըստ որոնց հոգեբանի մոտ եղել են մոտ 20 րոպե, հոգեբույժի մոտ՝ 5 րոպե, յուրաքանչյուր մասնագետի մոտ՝ 40 րոպե, յուրաքանչյուրի մոտ՝ մաքսիմում 1 րոպե և այլն:

Ընդհանուր առմամբ, ըստ նշված պատասխանների հետազոտությունների անցկացման բուն գործընթացը չի գերազանցել մեկ ժամը, փոխարենը իրենց հերթին գորակոչիկները սպասել են մի քանի ժամ:

Չորակոչիկներին հոգեկան առողջության կենտրոնի մասնագետների կողմից կատարվել են հետևյալ հարցադրումները.

- «Հարցնում էին ընտանեկան կարգավիճակի մասին, դաջվածքների մասին՝ կոնկրետ նշանակություն ունե՞ն, թե՞ ոչ, ե՞րբ եմ իմացել/հասկացել ինձ, ընդունում եմ ինձ, թե՞ ոչ, արդյո՞ք ընկեր ունեմ, թե՞ ոչ, զուգընկերոջս մասին են հարցրել, առաջին սեքսի մասին են հարցրել, տղու հետ ո՞նց եմ օրգազմի հասնում, սեքսում ի՞նչ դիրք ունեմ, քույր, եղբայր ունե՞մ, թե՞ չէ, իրա՞նք էլ են գեյ, թե՞ չէ և այլն»:
- «Հոգեբուժիկը չեմ հիշում, առանձնապես հարցեր չի տվել: Բայց երբ գնացել էի թղթերիս վերջնական լրացումն անելին ու ստորագրեի ինչ-որ բան, որը դե ասեցի, չեմ հիշում ինչ թուղթ էր, նույն հարցերն էին տալիս, ինչը զինկոմում էր, ու հետո հետաքրքրված հարցեր էին տալիս այլ, ավելի մտերմիկ միջավայրում, երբ իմացան համալսարան եմ ընդունվել, զարմացան, որ «ես կարայի գեյ լինելով հանդերձ ընդունվեի համալսարան»:
- «Հարցնում էին, ո՞նց եմ օրգազմի հասնում, քանի՞ հոգու հետ եմ քնել, ընկեր ունեմ, թե՞ չէ: Աղջկա հետ քնե՞լ եմ, թե՞ չէ, ուզո՞ւմ եմ փորձեմ, թե՞ չէ: Ասեց, բա որ չես փորձել, ի՞նչ գիտես, որ չես ուզում, ես էլ ասեցի էդ տղա հարցնողին – «դուք տղայի հետ կքնե՞ք: Եթե չեք քնել, ապա ի՞նչ գիտեք, որ դուրներդ չի գա»: Ինքը ծիծաղեց: Հարցնում էին պասիվ եմ, թե՞ ակտիվ, սեքս-աշխատանքով զբաղվո՞ւմ եմ, թե՞ չէ, ծնողներս գիտե՞ն իմ «շեղվածության» մասին, թե՞ ոչ: Ու էդ ամեն ինչը հեգնական տոնով ու ծաղրով»:
- «Հարցնում էին ես սուիցիդ արե՞լ եմ, թե՞ ոչ, փորձե՞լ եմ, թե՞ ոչ: Ասեցի, որ չեմ արել: Լիքը սենց հարցեր են տալիս, տատուներիս մասին էին հարցնում, հարցնում էին ի՞նչ գրքեր եմ կարդում և այլն: Հարցնում էին ինչ կրոն ունեմ»:
- «Մի մասնագետ ինչ-որ տրանս անձի անուն տվեց ու հարցրեց, թե արդյո՞ք ճանաչում եմ իրան: Ասեցի՝ չէ, բայց ընկերական ձևով հարցրեց: Ինձանից հետո էլ մի ուրիշ մարդուց, որն իմ ընկերն էր, հարցրել ա, արդյո՞ք ճանաչում ա ինձ: Ու հոգեբանը հարցեր ա տվել կապված իմ գենդերային ինքնության հետ»:
- «Մաթեմատիկական աղյուսակից էին հարցնում, ինչքան անիմաստ հարցեր կար տվել են»:
- «Հարցերը հիմնականում սրանք են, որոնք հոգեբանն ա տվել. քանի՞ տրանս անձ կա Հայաստանում, ի՞նչ խտրականությունների ենք ենթարկվում, ի՞նչ

մտավախություններ ունեմ, հինգ ենք գումար աշխատում, տանը խնդիրներ ունեմ, թե՛ չէ, կամ, եթե աղջիկ լինեի, հինգ անուն կընտրեի, հորմոնների մասին գիտեմ, թե՛ չէ, հինգ հորմոններ եմ օգտագործում կամ օգտագործել եմ, թե՛ չէ և այլն»:

■ «Հարցրել են ում հետ եմ ապրում, մենամկ եմ ապրում, թե՛ չէ, տնեցիքս գիտե՞ն իմ մասին, թե՛ չէ, ուրիշ ում եմ ասել, մամաս հղիությունը հինգ ա տարել»:

■ «Հարցնում էին, թե փոքր ժամանկ ինչե՞ր եմ սիրել անել կանացի: Ի՞նչ կրթություն ունեմ, ի՞նչ արտադասարանային պարապմունքների եմ մասնակցել: Ընտանիքիս մասին էին հարցնում: Սեռական հարաբերություններիս մասին էին հարցնում՝ ընկեր ունեմ, թե՛ չէ»:

■ «Հիմնականում նույն հարցերն էին տալիս, բայց նաև երևում էր, որ իրանք իրազեկվածության, տեղեկատվության պակաս ունեն: Որ դրական բաներ էին իրանց կարծիքով իմանում իմ մասին, զարմանում էին: Ես հասկացա, որ մտածում էին, որ եթե ես գեյ եմ, ապա այլասերված տիպ եմ»:

■ «Դե անձնական կյանքիս մասով էին հարցնում, ընկեր ունեմ, թե՛ ոչ, ասեցի, որ չունեմ, շատ չեն խորացել, քանի որ պապաս հաստատել էր, էլ ինձ հարցեր չտվեցին: Ասում էին, բա չե՞ս մտածել, որ դա քոնը չի կամ չե՞ս ուզում «բուժվել»»:

■ «Ընտանիքում քանի՞ հոգի ենք, թվարկել եմ: Տնեցիքիս հեռախոսահամարներ էին վերցնում ինձանից, ես էլ տվեցի: Ում հետ եմ ապրում հիմա, որտեղ ու էլ չեմ հիշում: Ասեցի Հունաստանից եմ եկել, ասեցին, որ ստեղ գալու ընթացքում, էտ տարիքում տրավմա եմ տարել, դրա համար էլ գեյ եմ»:

■ Այլ:

Հոգեկան առողջության կենտրոնում տարբերակված վերաբերմունքի դրսևորման հետ կապված զորակոչիկները նշել են.

■ «Ընդունարանի աշխատողը շատ վատ էր վերաբերվում, զանգել էր ինչ-որ մեկին ու ասում էր սաղի մասին ինՖոն, իմ մասով էլ հեռախոսով խոսալիս ասեց, որ «մոտս սեռի շեղումով մարդ կա, ի՞նչ անեմ»: Ու շատ բարձր էր, բոլորը լսեցին ու հայտնվեցի բոլորի ուշադրության կենտրոնում»:

■ «Քանի որ մյուս խնդիրներ ունեցող անձանց պահեցին, իսկ մեզ՝ ԳԲՏԶ+ անձանց, տուն ուղարկեցին, ես դա դիտարկում եմ որպես խտրականություն, որը իմ ինքնության հետա կապված»:

■ «Ինձ մեկը զուտ թարս էր նայում միշտ, մեկ էլ մունաթով էին խոսում ու գլխավոր բժիշկն էր միշտ թարս նայում»:

■ «Աշխատակիներից հոգեբանը, լավն էր, կարմիր կարճ մազերով աղջիկ էր, տեղեկացված էր: Հիմնականում մնացածը ծաղրող ու նվաստացնող հարցեր էին տալիս, սխալ տերմիններ օգտագործելով, տեղեկացված չէին»:

- «Մի մարդ կար, ասում էր, որ ինձ ստեղ բան ասող չի կարա լինի: Մենակ թե, ասում էր խի՞ եմ ինձ ի ցույց դնում, ինչ ա թե ձեռքիս ԼԳԲՏ դրոշի գույներով թևնոց կար»:
- «Մթնոլորտը վախենալու էր իմ համար, մորգանման միջանցքներ կային: Ուզում եմ ավելացնել, որ երբ ընդունարանի աշխատակիցը հանրայնացրեց իմ մասին, ու գորակոչիկները լսել էին, ու հետո, երբ գնացել էինք հոգեբանի մոտ ես ու մյուս գորակոչիկները, իրանք ինձ քաշքշում էին, ասում էին «ապեր» , «սրանից ինչ ապեր»: Ես հեռախոսով գրում էի ընկերոջս, աթոռից էին ուզում քցեին, հրում էին, որ ընկնեմ, երբ իմ հերթն էր, իրանք իրանց առաջ էին քցում ու ես դեռ մնում էի սպասելով, էնքան մինչև հոգեբանը դուռը բացեց ու ինձ կանչեց ներս»:
- Այլ:

Հարցված բոլոր գորակոչիկները նշել են, որ տեղի չի ունեցել որևէ դեղորայքային միջամտություն:

Հարցված գորակոչիկներից միայն մեկն է գիշերել հոգեկան առողջության կենտրոնում: Վերջինս մանրամասնել է. -

«Գիշերել եմ 3 օր: Երեք մասնագետի կողմից էր որոշվել, մինչև գլխավոր բժիշկը գար ինձ նայեր: Կարգն էր այդպիսին, որ իրանք համոզվեին, որ ես «գիժ» եմ: Այլ գորակոչիկների հետ եմ պահվել: Դե կարողանում էինք իջնել այգի, բայց դե հեռու չենք գնացել, որովհետև կորած տեղում ա գտնվում Նուբարաշենի հոգեբուժարանը: Ֆիզիկական զսպման դեպքեր չեն եղել: Պահման պայմանները եղել են առանց դուռ, տեղ-տեղ առանց լուսամուտ, հին շենք էր՝ սովետական զավոդների նման: Մի 15 հոգի էինք սաղ-սաղ: Սանիտարական վիճակը շատ ահավոր էր ու ես միզում էի ստիպված կանգած, այլ ոչ թե նստած, ու դա ինձ հոգեբանորեն ճնշում էր, որովհետև ես տրանս անձ եմ նույնականանում: Ուտելիք չէին մատուցում, տնեցիք էին ուտելիք բերում»:

Այն անձինք, ովքեր չեն գիշերել հոգեկան առողջության կենտրոնում, պարտավորվել են ներկայանալ 3-4 ժամ հետո, հաջորդ օրը, 2 օր հետո, ոմանց էլ ասվել է, որ այլևս ներկայանալու կարիք չկա, կարող են մոտենալ իրենց տարածքային գինվորական կոմիսարիատ:

Նշված անձինք նույնպես կիսվել են հոգեկան առողջության կենտրոնում հետազոտությունների անցկացման և պահման պայմանների վերաբերյալ իրենց տպավորություններով. «Հոգեբուժարանի վիճակը ցածր եմ գնահատում, հակահիգիենիկ ու բժշկական ոչ պատշաճ իրավիճակ», «Անմխիթար վիճակ էր, ուտելիքներ չի եղել, զգվելի հոտ ու տեսք ա ունեցել: Սանիտարահիգիենիկ ահավոր պայմաններ», «Անտանելի պայմաններ էին ընդեղ, ես չեմ պատկերացնում մնացածը ո՞նց համաձայնեցին մնալ: Ճղած, քցած մատրասներ կային, շատ կեղտոտ էր, սանիտարահիգիենիկ պայմանները

անտանելի վատ էին: Մթնոլորտը ճնշող էր», «Պահման ու մնալու պայմանները շատ վատ էին, օրինակ՝ կռավատներ չկային, դատարկ մատրասներ էին, հին, կեղտոտ, ճղած, պատուհաններ չկային, պատերը քանդվում էին, զուգարանը անտանելի կեղտոտ էր: Ամեն սենյակում մի քանի հոգի էին, որը սխալ ա իմ կարծիքով, որովհետև դա հոգեբուժարան ա ու կարա գիշերը, օրինակ՝ ինչ-որ մեկը ինձ վնասի», «Հին, մաշված, քանդված շենք էր: Զուգարանը կեղտոտ, ծխում էին ներսում», «Այլոց նկատմամբ, հոգեկան հիվանդություններ ունեցող անձանց տեսել եմ ոնց են զսպում՝ բռնի կերպով: Զորակոչիկների նկատմամբ չի եղել: Զորակոչիկները հենց ծխում էին, գիժ էին ձևանում, անշնորք ձևով էին պահում իրանց» և այլն:

Հարցին, թե արդյոք գինվորական կոմիսարիատների և հոգեկան առողջության կենտրոնների շենքերը հարմարեցված են եղել հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին, զորակոչիկները պատասխանել են.

- «Ոչ մի բան չկա, մենակ պոլիկլինայում կար վերելակ, որը չէին օգտագործում: 2 աստիճան կար մուտքի մոտ»:
- «Որևէ ձև հարմարություններ չկային: Ասեմ ավելին, ոչ հաշմանդամություն ունեցող անձանց համար էլ միջանցքները մութ էին ու ոչ հարմար»:
- «Մեծամասամբ հարմարեցված չէին, մի երկու տեղ թեքահարթակ եմ նկատել, բայց չեմ հիշում կոնկրետ, թե որտեղ էին դրանք»:
- «Գրեթե ոչ մի պայման ապահովված չէր, մենակ հոգեբուժարանի մուտքը ուներ թեքահարթակ»:
- «Ես պահվել եմ հոգեբուժարանի հին մասնաշենքում, որտեղ ոչ մի պայման չի եղել նորմալ, բայց նորը կա հիմա, որի մասով չեմ կարա ասեմ: Ներառական չի եղել, շատ աստիճաններ չէին եղել»:
- «Թեքահարթակ չկար գինկոմիսարիատում, դաժե միջանցքներն էնքան նեղ էին, որ անվասայլակ չի մտնի ըտեղ»:
- «Մենակ թեքահարթակ կար գինկոմիսարիատում: Հոգեբուժարանում չեմ հիշում: Մնացած նշածները չկային»:
- «Ոնց հիշում եմ, ոչ մի բան չկար, ոչ հոգեբուժարանում, ոչ գինկոմիսարիատում»:
- «Պոլիկլինակոյում կար վերելակ ու թեքահարթակ, բայց գինկոմում չկար ոչ մեկը: Միջանցքները նեղ էին, աստիճանները սովորական աստիճաններ էին»:
- «Հոգեբուժարանում ու գինկոմում դռները լայն էին հիմնականում, գինկոմիսարիատում միջանցքներն էին նեղ: Վերելակ չկար, թեքահարթակ կար հոգեբուժարանում, որը ջարդված էր ու քանդված»:
- «Հիմնականում ներառական չի եղել ոչ մի բան: Դռները լայն էին: Իբրև թեքահարթակ կար, բայց դե, էնքան թեք հարթակ էր, ես նույնիսկ չէի կարում բարձրանալ»:

Հարցին, թե Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից դրսևորված վերաբերմունքն ու վարքագիծն ինչպիսին է եղել, գորակոչիկները նշել են.

■ «Երբ պետքա բարձրանայի ԿԲՀ-ի մոտ, ներքևում ինձ նորից ստուգեցին, ինչ-որ հարցեր տվեցին իմ մասին: Հիմնականում, թե ի՞նչ գործ եմ անում, ի՞նչ եմ ովորում: Հետո ասեցին, որ եթե բարձրանամ վերև, զգույշ մնամ, որովհետև գեներալիի պետը կատաղած ինձ ա սպասում: Հարցրեցի, թե ինչի՞, ասեց, որովհետև ինքն էլ ա Վարդենիսից ու ասել ա, որ Վարդենիսից իմ նման մարդ չի կարա գա: Ես Վարդենիսից եմ: Հետո բարձրացա վերև՝ երկրորդ հարկ, սպասեցի մի քանի գորակոչիկներ մտան, հեղան, ու երբ պիտի ես մտնեի ներս, լսեցի, որ ներսից, բաց դռնից լսվում էր «հեսա գոմիկ ա գալու» արտահայտությունը: Էդ պահին իմ անունով կանչեցին ինձ: Մի աշխատակից կար, անունը կարդում ու ներս էր կանչում գորակոչիկներին: Ներս մտա. խնդրեցին, որ հանեմ գլխարկս ու կուրտկաս, ես նաև շարֆիկս հանեցի: Հագնվել էի կանացի: Գեներալիի պետը գործերովս հարվածեց դեմքիս, սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցրեց իմ, ծնողներիս, ազգիս, իրավունքներիս նկատմամբ: Հեռախոսս ձեռքիցս վերցրեցին տարան, հետո գնացի, գտա: Էդ սաղ, ընդամենը մի 5 րոպե տևեց»:

■ «Շատ կոպիտ էին հետս: Հոգեբանական ցավ էի ապրում, որովհետև գեներալ կար մի ջղայն, գոռգոռացող, կողքը երկու կին էր նստած, ու էն հավես ձյաձյան, որն ասել էր, եթե խնդիր ունենամ, կարձագանքի, ներսում ինքը պաշտպանեց ինձ մի պահ: Ես դերյայատիպի շոր էի հագել, փիրսինգ էի դրել ականջիս, վզնոց ունեի երկար, լուսնի տեսքով, ճղած ջինս էի հագել: Հարցնում էին ինչի՞ եմ լուսին կախել, ասեցի, որ սիրում եմ «Էմո» սթայլը, հարցրեց ականջիս ինչա՞մ, ասեցի՝ փիրսինգ: Ու սկսեցին գոռգոռալ վրես: Ասում էր, որ գնամ բանակ կայլասերեմ ընդեղ և այլն: Ես ահավոր վախեցել էի իրա հիստերիայից: Բան էր վերցրել, որ տար գլխիս: Ու երբ դուրս եկա, բոլոր տղերքը վրես էին նայում՝ իրա գոռգոռոցի պատճառով»:

■ «Վիրավորանքներ են եղել, որոնք հիմա չեմ հիշում, բոլորն անխտիր բացասական էին, կամ թարս էին նայում, կամ ծաղրում, կամ վիրավորում, կամ պիտակավորում: Երբ մտա ներս, մոտ մի 15 հոգի նստած էին ու նույն հոգեբանը, որն ինձ հետազոտել էր, նույն հարցերը տվեց, ու դրանից հետո գեներալիի պետը բարձր, կոպիտ մունաթ եկավ, վերջում ասեց -«ռադ էլար ստեից», ես էլ ասեցի -«ռադ եղեք դուք» ու դուրս եկա այդտեղից: Մնացածը քչփչում էին, ասում էին -«սրա կայնած ձևը նայի, սրա հագած շալվարը»: Ու քանի որ կորոնա էր, դռները բաց էր, բոլորը լսում էին դրսում Էդ ամեն ինչը»:

- «Չեմ սպասել այնտեղ, գնացի շատ վատ պայմաններ էին: Ինձ հետ կային մի քանի զորակոչիկներ, ովքեր ինձ ծաղրում էին միջանցքում: Հետո ինձ ուղղորդեցին գլխավոր սենյակ, ինձ հարցրին, թե պատրաստ եմ գնալ ծառայության, ես ասեցի՝ ոչ: Ոչ, որովհետև ես տղա չեմ, ինձ հարցրին, իսկ կարո՞ղ եմ ապացուցել, ես ասեցի՝ այո: Հետո առանձին ստիպված էի բարձրացնել վերնաշապիկս գլխավոր բժշկի մոտ, որ տեսնի կրծքերս, որոնք հորմոններ խմելու ընթացքում մեծացել էին և մարմինս ավելի կանացի տեսք ուներ: Հետո ասեցին, որ արագ դուրս գամ այս սենյակից և հեռանամ»:
- «Վատ ա եղել վերաբերմունքն իմ նկատմամբ, ճնշող: Ռեպլիկներ են եղել, հոգեբանական բռնության են ենթարկել ինձ, ու որ ամենավերջինս էի, ասեցին –«գնա ստուգ»:
Հարցրեցի, բա ի՞նչ եք ասում հիմա: Մի քանի շաբաթ անց զանգեցին, ասեցին, որ երեք տարի հետաձգվել եմ»:
- «Գնդապետը գլխավոր, բավականին դրական վերաբերմունք ա եղել, ես բացարձակ չէի սպասում, մնացածը բայց տարօրինակ հայացքներով էին նայում: Այլմոլորակային էի իրանց միամար»:
- «Երբ պետի մոտ տարան, հարցնում էր ուզո՞ւմ եմ հղիանամ, թե՛ ոչ, ուզո՞ւմ եմ տրանս լինեմ, թե՛ չէ, որ
«մարմնավաճառությամբ» զբաղվեմ և այլն և այլն: Մոտ 5 րոպե ա տևել ամեն ինչ»:
- «Աշխատակիցները սառն էին վերաբերվում ինձ: Հանձնաժողովը ինձ հոգեբանական բռնության ա ենթարկել իրանց հարցերով ու վատ վերաբերմունքով, ձեռ առնելով: Գեներալի պետը ասում էր, ես հաստատ նրանցից եմ, որ գարաժների հետևում կամ թփերի մեջ ինչ-որ բաներ եմ անում ու սենց բաներ, ու հետո հարցեր, որոնց արդեն պատասխանել էի, մի քիչ նույնը, մի երկու հարց տարբեր: Շտապեցնում էին ինձ, որ պատասխանեմ, ստիպում արագ-արագ խոսամ: Տպավորություն էր, որ ուզում էին ինձանից շուտ պրծնեն»:
- «Գնացել եմ հոգեբուժի սենյակում սպասել եմ, հետո եկել են, տարել են ինձ գեներալի սենյակ: Ընդեղ ինձ թվաց նկարում են ինձ: Հանձնաժողովի անդամներից մեկը հեռախոսը պահել էր վրաս նկարելու դիրքով: Բայց ես սա ենթադրում եմ, չեմ կարա 100% ասեմ, որ նկարում էր: Նաև ապուշ հումորներ էին անում, մեկը հիմար հումոր արեց, կոնկրետ չեմ հիշում: Լարված էի մի քիչ էդ ժամանակ: Ուզում էի արագ ավարտվեր, ու դուրս գայի»:
- «Բոլոր ստուգողները ահավոր ագրեսիվ են առհասարակ, կոպիտ ու մունաթ են աջ ու ձախ: Զգվելի, լարված ու ագրեսիվ միջավայր էր ընդեղ: Եթե մի քանի օր ավել գնայի, դեպրեսիայի մեջ կընկնեի, կամ հոգեկան խանգարում ձեռք կբերեի»:
- «Ահավոր վատ էի զգում էդ օրը, փսխել եմ մի քանի անգամ: Հենց գնացի ներս գենկամիսիայի, գործերս մի տղա նայեց,

Նայեց, աշխատողներից մեկը, հետո բարձր-բարձր ասեց, որ մինչև հիմա քաշով եմ ազատվել, հիմա արդեն էս հողվածով ու բարձրաձայն ասեց հողվածի անունը: Նկատի ուներ, որ ազատվել եմ քիչ քաշ ունենալու համար: Ու մարդասպանի հայացքով նայում էր ինձ»:

Հարցին, թե կարողացել են արդյոք գորակոչիկները ծանոթանալ իրենց բժշկական հետազոտությունների փաստաթղթերին (զինվորական կոմիսարիատի, քաղաքացիական հիվանդանոցների և հոգեկան առողջության կենտրոնների արդյունքները), վերջիններս պատասխանել են.

«Մամաս էլ, ես էլ ուզեցել ենք ծանոթանալ, բայց չեն տվել մեզ: Ուզել ենք պատճենները, չեն տվել», «Էդ ժամանակ չէի մտածում, որ կարամ ծանոթանամ, հետևաբար՝ ոչ», «Միայն վերցրել եմ իմ կցագրման թերթիկը, մնացածի մասին տեղյակ չեմ ու չեմ էլ վերցրել, մտքով չի անցել», «Ինձ ցույց են տվել, զուտ նայել եմ: Չեմ իմացել, որ կարամ պահանջեմ ու ունենամ», «Ծանոթացել եմ, որեվհետև ինձ տալիս էին թղթերս, ասում տար ստեղծից ընդեղ: Ես էլ աչքի տակով նայում էի», «Չէ, իրանք չեն տվել, որ ծանոթանամ: Երկու տեղ տվեցին, որ ստորագրեմ, իրանք ինձ փաստաթուղթ չեն տրամադրել», «Ծնողներս են ուսումնասիրել, ես չեմ ուսումնասիրել, բայց տրամադրվել են», «Չեմ կարողացել, ուզեցել եմ, թույլ չեն տվել: Միատ աղջիկ կար, բուժքույր էր, բժշկական կենտրոնում էի, պոչկեքս էին ստուգում: Էդ աղջիկը թղթերն էր տանում բերում: Ասեցի պատճենեք, տվեք: Ասեց, չեմ կարող, բայց ասեց՝ «քեզ լավություն կանեմ: Կարամ տամ, տանես զուգարանում թաքուն նկարես բերես ու մարդու չասես», «Չեմ ուզել, հետո իմացա, որ կարամ վերցնեմ: Բայց ամբողջ ընթացքում մոտս ա եղել ու ես նկարել եմ իրանց: Տանում, բերում էի գործերս էս մասնագետի մոտից էն մասնագետի մոտ», «Ծանոթացել եմ, պահանջել եմ, ինձ տրամադրել են պատճենները» և այլն:

Անձինք, ովքեր պահանջել են իրենց բժշկական հետազոտությունների վերաբերյալ փաստաթղթերը, դրանք ստացել են անձամբ զինվորական կոմիսարիատ կամ պաշտպանության նախարարություն ներկայանալու միջոցով, թղթային, պատճենահանված տարբերակով:

Բժշկական հետազոտությունների արդյունքում հարցված գորակոչիկների 40%-ը՝ տարկետում է ստացել 3 տարի ժամկետով, 35%-ը՝ ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար, 15%-ը՝ ոչ պիտանի խաղաղ պայմաններում զինվորական ծառայության համար, հաշվառում պահեստազորում, 5%-ը՝ ոչ պիտանի շարային ծառայության համար, 5%-ը՝ պիտանի զինվորական ծառայության համար:

Զորակոչիկները պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել կամ տարկետում են ստացել հետևյալ հիմքերով.«Երևանյան» հիվանդության հիմքով (այս հիվանդությունն ունեցող զորակոչիկը հանդիսացել է ԳԲՏԶ+ համայնքի ներկայացուցիչ, սակայն վերջինիս զինկոմիսարիատում հորդորել են, որ այդ հիմքով չազատվի զինծառայությունից, այլապես չի կարողանա հետագայում մեքենա վարել և այլն), սեռական ուղղվածության և գենդերային ինքնության հիմքով, խռոնիկ դեպրեսիայի հիմքով (այս զորակոչիկը ունեցել է նաև տեսողության խնդիր, բայց բժիշկը չի ստուգել), մանկուց հաշմանդամության հիմքով (մանկական ուղեղային կաթված/ՄՈՒԿ), շնչառական օրգանների, պլևրայի, ոսկրամկանային համակարգի, պերիֆերիկ ավշահանգույցների, որովայնի խոռոչի օրգանների, միզասեռային համակարգի, մաշկի և այլ օրգանների տուբերկուլոզի հիմքով :

Չարցվածների 60%-ը ենթակա է եղել վերափորձաքննության:

Վերափորձաքննությունների առնչությամբ զորակոչիկները հայտնել են իրենց մտահոգությունները. - «Զգացողություններս, շատ դրական էին, որովհետև կարծում էի, թե ամեն ինչ ավարտվել է, բայց հետո իմացա, որ 3 տարի հետո նորից պետք է անցնեմ փորձաքննություն և դրա հետ կապված շատ վախեր ունեմ հիմա», «Երբ իմացա, որ երեք տարի հետաձգվել եմ, շոկային էր ինձ համար ու բացասական էմոցիաներ ունեմ ամեն պահ, երբ մտածում եմ, որ նորից գնալու եմ հետազոտվելու ու վախեր են առաջանում, նամանավանդ, պատերազմից հետո», «Տխրել եմ, որովհետև ինձ ասել էին, որ լրիվ եմ ազատվելու՝ որպես տրանս», «Չանգստություն ունեի, որ ավարտվեց էդ ամենը, բայց մտահոգված եմ մինչ այս պահը, որ նորից գնալու եմ, անցնեմ էդ ամեն ինչի միջով», «Անկեղծ ասած ես հույս ունեի, որ կազատվեմ: Որ գիտեմ, նորից եմ գնալու, շատ եմ անհանգստանում ու վախենում», «Շատ լավ եմ զգում ինձ, որովհետև ես տարիներ շարունակ մտածել եմ, որ տանելու եմ ինձ: Միշտ, չնայած մտավախություն ունեմ, բայց եսիմ: Եթե ինձ տանեին բանակ, ես հաստատ ինքնասպան կլինեի», «Անհանգստանում եմ, որ նորից պետքա գնամ 3 տարի հետո: Զգվելի գործընթաց ա», «Ազատություն էի զգում: Թեթևացած, բայց նաև բռնության պատճառով վախեր էին առաջացել մոտս», «Նյարդայնանում եմ ամեն անգամ, երբ լսում եմ: Նորից էդ ամեն ինչի միջով անցնելը տհաճ ա, վախենալու» և այլն:

Պարտադիր զինվորական ծառայությունից ազատման մասին վերջնական որոշում կայացնելուց հետո զորակոչիկներին զինվորական գրքույկները տրամադրվել են հետևյալ ժամկետներում. 15 օր հետո, 1 ամիս հետո, 2-ից մինչև 5 ամիս հետո: Կան զորակոչիկներ, ովքեր ունեցել են զինվորական գրքույկի ստացման դժվարություններ՝ կապված համավարակի հետ:

Խորին հարցազրույցներին մասնակցած անձանցից միայն մեկն է⁶, որ առաջացած խնդիրների առնչությամբ ձեռնարկել է իրավական բնույթի քայլեր՝ խոշտանգման մասին հաղորդում ներկայացրելով ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանություն:

Մասնավորապես, **ՀՀ քաղաքացի Արտակ Ադամը⁷, հանցագործության մասին հաղորդմամբ հայտնել է, որ 18.01.2019թ.-ին մասնակցել է 2018թ.-ի ձմեռային զորակոչի բժշկական փորձաքննությանը: Մինչ Հանձնաժողովին ներկայանալը լսել է, որ սենյակում Հանձնաժողովի անդամները ուսումնասիրելով իր փաստաթղթերը, քննարկել են իր նույնասեռական լինելու հանգամանքը, օգտագործելով «հեսա գոմիկ ա գալու» և այլ արտահայտություններ: Նշված արտահայտությունները լսել են նաև այլ զորակոչիկներ, ովքեր կանգնած են եղել դռան հետևում: Ներս մտնելուց հետո ԿԲՀ նախագահը քամահրաբար է արտահայտվել իր արտաքին տեսքի՝ հագուկապի, երկար մազերի վերաբերյալ, հետո իմանալով, որ իրենք նույն մարզից և տարածաշրջանից են, սկսել է իր և ընտանիքի անդամների հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ ու վիրավորանքներ հնչեցնել, սպառնալ հորը տեղեկացնել իր սեռական ուղղվածության մասին, նշելով, որ իր տարածքից «նման» մարդիկ չեն կարող լինել: Այնուհետև պահանջել է, որ ինքը մոտենա իրեն, ինչից հետո իր փաստաթղթերի պանակով հարվածել է իր դեմքին, բարձրացրել ոտքը, որ ոտքով հարվածի, սակայն Հանձնաժողովի անդամներից մեկը հեռացրել է իրեն սենյակից: Ամբողջ խոսակցությունը, ներառյալ վիրավորանքները լսելի են եղել դրսում կանգնած զորակոչիկներին: Ընդ որում, իր սենյակում գտնվելու ընթացքում իր կամքին հակառակ վերցրել են հեռախոսը և տարել կողքի սենյակ, որը հետագայում գտել է իր ջանքերով: Արդյունքում, վերը նշված հաղորդման հիման վրա կայացվել է նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում՝ ԿԲՀ նախագահ Հենրիկ Մուրադյանի արարքում և Արտակ Ադամի արարքում հանցակազմերի բացակայության հիմքով: Նշված որոշումը հաղորդում ներկայացրած անձի և վերջինիս ներկայացուցչի կողմից բողոքարկվել է Երևանի կայագործի գլխավորական դատախազություն, մերժվել, ապա բողոքարկվել՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և վերաքննիչ դատարան:**

Վերաքննիչ քրեական դատարանը 07.07.2020թ.-ի որոշմամբ պարտավորեցրել է վարույթն իրականացնող մարմնին

⁶ ՏԵՄ՝ <https://e-press.am/2019/03/25/%d5%ab%d5%b6%d5%b9%d5%ba%d5%a5%d5%bd-%d5%a5%d5%b6-%d5%b3%d5%b6%d5%b7%d5%b8%d6%82%d5%b4-%d5%a2%d5%a1%d5%b6%d5%a1%d5%af%d5%ab%d6%81-%d5%a1%d5%a6%d5%a1%d5%bf%d5%a5%d5%ac%d5%b8%d6%82-%d5%b3%d5%a1%d5%b6.html>, <https://ngngo.net/2020/06/15/gay-andzants-kyanqy-hayastanum/>, https://issuu.com/pinkarmenia/docs/lgbtreport2019_hy


⁷ Կեղծանունը ներկայացված է անձի թույլտվությամբ:

վերացնելու Արտակ Ադամի իրավունքների խախտումները և հարուցել քրեական գործ: Նշված որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունումը մերժվել է վճռաբեկ դատարանի կողմից: Արդյունքում, 22.10.2020թ.-ին որոշում է կայացվել քրեական գործ հարուցելու մասին: Քրեական գործը գտնվում է նախաքննության փուլում:

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ԱՆՑԿԱՅՎԱԾ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ


Բժշկական փորձաքննությունների ընթացքում զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների նկատմամբ խտրականության դեպքերի վերհանման նպատակով հարցազրույցներ են անցկացվել 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում զորակոչի գործընթացքում ներգրավված թվով 5 զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների հետ: Հարցազրույցներն անցկացվել են Հայաստանի Հանրապետությունում՝ առանց տարածքային սահմանափակումների:

Հարցազրույցին մասնակցած զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների **80%-ը** հանդիսացել են տղամարդիկ, **20%-ը՝** կանայք: Վերջիններս եղել են 37-ից մինչև 46 տարեկան անձինք:



Ներկայացուցիչների 60%-ն ունեցել է 10 տարուց ավելի աշխատանքային փորձ, 40%-ը՝ 1-ից 5 տարի: Վերջիններս հանդիսացել են զորակոչային բաժնի պետ, տեղակալ, գլխավոր բժիշկ և տեսուչ: Չեն հանդիսացել հանձնաժողովի անդամ և իրականացրել են միայն վերահսկող կամ ուղղորդող գործառույթներ:

Զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների աշխատանքային փորձը.




Զորակոչի փուլերը հակիրճ նկարագրելիս, ներկայացուցիչները նշել են, որ արական սեռի 16 տարին լրացած անձինք հրավիրվում են տարածքային ստորաբաժանումներ, հաշվառվում, նրանց անունով բացվում են նախնական հետազոտություններ: Այնուհետև 18 տարին լրացած անձինք, ըստ նախնական հետազոտությունների, անցնում են կրկնակի բժշկական հետազոտություններ, հավելյալ հետազոտությունների անհրաժեշտության դեպքում ուղեգրվում հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ: Արդյունքում որոշվում է պիտանի է անձը զինվորական ծառայության համար, թե՛ ոչ:

Ըստ ներկայացուցիչների 75%-ի՝ զորակոչիկներին զինվորական կոմիսարիատ ներկայանալու մասին ծանուցումն ուղարկվում է թղթային տարբերակով, ըստ 25%-ի՝ բոլոր տարբերակներով՝ թղթային, զանգի, հրապարակային ծանուցման (azdarar.am), դպրոցի տնօրենի, դասղեկի, գինղեկի, գործատուի, համայնքի ղեկավարի միջոցով, բացի էլեկտրոնային և sms հաղորդագրության տարբերակից:

Ծանուցման եղանակը.


- թղթային
- էլեկտրոնային
- sms
- զանգ
- հրատապային ծանուցում



Ըստ ներկայացուցիչների, զինվորական կոմիսարիատի մուտքի մոտ, հարակից տարածքներում, զինվորական կոմիսարատի շենքում, միջանցքներում զորակոչի ընթացքում լինում են մարդկային կուտակումներ: Դա պայմանավորված է նրանով, որ զորակոչիկներին ուղեկցում են իրենց ծնողները, հարազատները: Զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչներից մեկն էլ նշել է. – «30-40 զորակոչիկ ամեն օր կանչում ենք, իսկ կենտրոնական զորակոչի ընթացքում՝ 300-ից ավելի զորակոչիկ մեկ օրում»:

Ուղեկցող անձը հանդիսացել է.

Ուղեկցության դեպքում խնդրում ենք մանրամասնել, թե ովքեր են հանդիսացել ուղեկցորդները.



Նշել են, որ որևէ օրենսդրական կամ ներքին իրավական ակտերով նախատեսված արգելք՝ կապված ուղեկցության հետ, առկա չէ: Երբեմն նրանց ուղեկցումն արգելվում է կապված կուտակումների կանխման կամ անձնական տվյալների և բժշկական գաղտնիքի պահպանման հետ: Ուղեկցման պատճառը հիմնականում զորակոչիկների առողջական վիճակի հետ կապված ընտանիքի անդամների անհանգստությունն է: Եղել են իրավիճակներ, երբ մարդիկ եկել են հարբած վիճակում: Եղել են իրավիճակներ, երբ զորակոչիկի հարազատները պնդել են, որ զորակոչիկը առողջական խնդիրներ, հիվանդություն ունի, մինչդեռ ունի, բայց պիտանի է զինվորական ծառայության համար: Արդյունքում որոշակի խնդիրներ են առաջացել:

Չինվորական կոմիսարիատների 80%-ի տարածքում կան տեսախցիկներ, ելնելով նաև անվտանգության նկատառումներից, իսկ 20%-ում՝ չկան: Վերջինիս ներկայացուցիչը նշել է - «Պարտադիր է, որ լինի, բայց մեզ մոտ չկա»:

Չարցազրույցին մասնակցած բոլոր զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ զինվորական կոմիսարիատի տարածքում (հերթապահ մասում, մուտքի մոտ) կան նախազգուշացնող թերթիկներ, հայտարարություններ՝ ծայնագրությունների, տեսագրությունների և տեսաձայնագրությունների արգելքի մասին:

Ըստ զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների, բոլոր զինվորական կոմիսարիատների տարածքներում կան իրազեկող թերթիկներ՝ զորակոչիկների իրավունքների ու պարտականությունների, թեժ գծերի մասին:

Ներկայացուցիչների 40%-ը նշել են, որ զինվորական կոմիսարիատում անվտանգության աշխատակիցներ չկան, կան միայն հերթապահ մասեր, որոնք ուղղորդում են զորակոչիկին, թե ուր գնալ: 40%-ը նշել են, որ կան անվտանգության աշխատակիցներ, որոնց հիմնական լիազորությունը հասարակական կարգի պահպանությունն ու անվտանգության

ապահովումն է: 20%-ը նշել են, որ զորակոչի ժամանակ հրավիրվում են ոստիկանության աշխատակիցներ, ստորաբաժանման տարածքից դուրս, բակում կարգ ու կանոն պահպանելու նպատակով:

Հարցին, թե արդյո՞ք կան զորակոչիկի գինվորական կոմիսարիատ ներկայանալու արտաքին տեսքի, հագուստի կանոններ, ընդունված չափանիշներ (dress cod), գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները **նշել են**.

- «Ցանկալի չէ գալ շորտերով, հողաթափերով: Ներքին կանոնադրություն է՝ էթիկայից ելնելով: Բոլորին վերահսկել չի լինում, բայց հնարավորության դեպքում ուղարկում ենք հագուստը փոխելու»:
- «Չի կարելի գալ սպորտային համազգեստով»:
- «Դե այդ ժամանակ ինչ հագուստով որ կգան, մենք չենք կարող ասել: Կարող է, մարդ է օրինակի համար այդ մեկ կոշիկը կամ հագուստը ունի, մենք չենք կարող ասել՝ «ո՛չ, պարտադիր այս հագուստով»:
- «Սովորաբար ցանկալի է ներկայանալ պարկեշտ տեսքով, բայց իրավիճակը գնահատվում է կոնկրետ դեպքի հիման վրա: Ոչ մի կանոնակարգ չկա: Եթե մարդը այդ հագուստը ունի, կրում է, մենք չենք ասում, որ մի այլ բան կրի»:

Ներկայացուցիչները նշել են, որ զորակոչի ընթացքում եղել են զորակոչիկներ, որոնք ունեցել են հաշմանդամություն, այլ սեռական ուղղվածություն, գենդերային ինքնություն, այլ էթնիկ ծագում/ազգություն:


Նշել են, որ գինվորական կոմիսարիատների շենքերը ընդհանրապես հարմարեցված չեն տարբեր տեսակ հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին (թեքահարթակներ, վերելակներ, շարժասանդուխքներ, արդյունավետ կողմնորոշվելու համար նեյտրալ, ընթեռնելի ցուցանակներ/գրություններ, դռների և միջանցքների համապատասխան լայնություն՝ տեղաշարժվելու համար, կտրուկ, թեք հարթությունների, խանգարող սյուների բացակայություն և այլն): Միայն մեկ գինվորական կոմիսարիատում առկա են տեսաձայնային և լուսաձայնային ազդակակիրներ:

Զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ հաշմանդամություն ունեցող անձինք հիմնականում չեն գալիս գինվորական կոմիսարիատ, քանի որ դրա կարիքը չկա, անհրաժեշտության դեպքում գալիս է խնամակալը: Հաշմանդամություն ունեցող անձանց այցերի դեպքում, գինվորական կոմիսարիատների աշխատակիցները կազմակերպում են անձին ավտոմեքենայից դուրս հանելու և ուղեկցելու գործընթացը:

Բոլոր գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ եղել են իրավիճակներ, երբ անձինք ներկայացվել են այլընտրանքային գինվորական ծառայության՝ հավատքի/կրոնի կամ մասնագիտական կողմնորոշումից ելնելով՝ մասնագետի եզրակացության առկայության դեպքում: Վերջիններս դիմում են գրում և ներկայացնում համապատասխան փաստաթղթերը:

Զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների 75%-ը նշել է, որ նման դեպքերում ընտրվել է այլընտրանքային գինվորական՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված գինվորական ծառայություն, 25%-ը նշել է, որ ընտրվել է այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:

Ո՞ր տարբերակն է ընտրվել.



Զորակոչի ընթացքում ԳԲՏԶ+ անձինք իրենց սեռական ուղղվածության ու գենդերային ինքնության մասին հիմնականում տեղեկացնում են հոգեբանին կամ հոգեբույժին: Սովորաբար տեղեկացնում են հետազոտությունների սկզբում, սակայն եղել են նաև վերջին փուլում տեղեկացնելու դեպքեր:

Ուղեկցող հիվանդությունների դեպքում, ԳԲՏԶ+ անձինք ազատվում են զինվորական ծառայությունից հիմնական հիվանդությամբ: Ըստ գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչներից մեկի. -«Եթե անձը այլ սեռական ուղղվածություն ունի, այլ հիվանդությունների վրա շեշտ չի դրվում: Գործընթացները կազմակերպվում են արդեն այս հիմքով, ուղղորդում ենք հոգեկան առողջության կենտրոն, հոգեբույժի եզրակացության հիման վրա ազատվում են»: Ըստ մեկ այլ ներկայացուցչի. -«Ընթացակարգերը փոխվում են, որովհետև նման դեպքերում այլ հետազոտություններ անցնելու կարիք չկա, միանգամից ուղղորդում ենք հոգեկան առողջության կենտրոն»:

Հարցին, թե հնարավոր է արդյոք փոխարինել մասնագետին/աշխատակցին, երբ վերոնշյալ խմբերից որևէ անձի նկատմամբ բացահայտ խտրական՝ տարբերակված վերաբերմունք է դրսևորվում, գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են. -«Ոչ, որովհետև այլ մասնագետներ չկան, ամեն հաստիքի համար մեկ աշխատակից է», «Նման խնդիր չի առաջանում, որովհետև մասնագետը իրավունք չունի, գործընթացը պետք է ամեն դեպքում անել, մի հաստիքի համար ունենք մեկ մասնագետ», «Իմ իրավասության մեջ չէ, բայց կարծում եմ, որ այո»:


Ըստ գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների, գինվորական բժշկական հանձնաժողովներում ընդգրկված մասնագետներին ընտրում են մարզպետարանները՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամաններին համապատասխան: Նշված մասնագետները չեն հանդիսանում գինվորական կոմիսարիատների աշխատակիցներ:

Վերջիններս նշել են նաև, որ հանձնաժողովի անդամները չեն փոխվում, քանի որ մասնագետներ գտնելը բարդ է՝ ոչ բոլոր բժիշկներն են ցանկանում աշխատել այս ոլորտում, եղել են դեպքեր, երբ բժշկի դուրս գալուց հետո փոխարինող բժիշկ չեն գտել երկար ժամանակ և համապատասխան գործընթացները երկարաձգվել են: Նույն բժիշկը կարող է երկու և ավելի անգամներ անընդմեջ հանդիսանալ հանձնաժողովի անդամ:

Հանձնաժողովի անդամները կարող են փոփոխվել սեփական դիմումի հիման վրա, անհարգելի բացակայությունների, միջադեպերի, մահվան կամ բողոքների հիման վրա:

Հանձնաժողովի կազմում հիմնականում ընդգրկված են լինում թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, օտարինոլոգ, ակնաբույժ, մաշկաբան և բուժքույր:

Հանձնաժողովի կազմում ընդգրկված մասնագետները.



Հարցազրույցին մասնակցած գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ 2018թ.-ից հետո մասնակցել են վերապատրաստման դասընթացների, որոնք առավելապես կազմակերպված են եղել ՀՀ Պաշտպանության նախարարության և Հանրապետական գինվորական կոմիսարիատի կողմից: Անցկացվել են վերապատրաստումներ նաև Կառավարման ակադեմիայում:

Վերապատրաստման առաջարկը տարածքային ստորաբաժանումը ներկայացնում է պաշտպանության նախարարություն, որից հետո նախարարությունը որոշում է, թե ի՞նչ մասնագետի հետ ու ի՞նչ թեմայով դասընթաց կազմակերպի կոնկրետ ստորաբաժանման մասնագետների համար: Վերապատրաստումները հիմնականում անցկացվում են 3 կամ 6 ամիս պարբերականությամբ և առնչվում են մասնագիտական հմտություններին՝ իրավական, հոգեբանական և այլն:

Գեներալային զգայունության և սեռակրթության վերաբերյալ դասընթացներ չեն անցկացվել:

Ըստ գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների զորակոչիկները ուղեգրվում են քաղաքացիական հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ՝ առողջական խնդիրների, ուղեկցող հիվանդությունների առկայության դեպքում:

Ուղեգրումը հոգեկան առողջության կենտրոն տեղի է ունենում, երբ անձը նախկինում առնչություն է ունեցել հոգեկան առողջության կենտրոնների հետ, ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր, կատարել է ինքնավնասումներ: Ուղեգրումներ են կատարվում նաև բժիշկների, պոլիկլինիկայի կողմից տրված եզրակացության, ծնողների, դպրոցի, ներառյալ՝ դասղեկի, գինղեկի կողմից տրված բնութագրերի հիման վրա: Վերջնական հարցազրույցը տեղի է ունենում հոգեբանի հետ, որից հետո ուղղորդվում են հոգեբույժի մոտ: Ուղեգրումը հոգեկան առողջության կենտրոն կատարվում է հոգեբույժի եզրակացության հիման վրա: Ուղեգրումը այլ քաղաքացիական հիվանդանոցներ և պոլիկլինիկաներ կատարվում է համապատասխան մասնագետի (սյարդաբան, սրտաբան և այլն) եզրակացության հիման վրա:

Ընդ որում, զորակոչիկի համաձայնությունը պարտադիր չէ՝ իրեն բժշկական հետազոտությունների ենթարկելու համար: Ըստ գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների բժշկական հետազոտություններից զորակոչիկի հրաժարվելու դեպքում, այդ հարցով զբաղվում է ոստիկանությունը:

Զորակոչիկներն ըստ իրենց պահանջի կարող են ծանոթանալ իրենց բժշկական հետազոտությունների վերաբերյալ փաստաթղթերին: Դրանք տրամադրվում են թղթային, պատճենահանված տարբերակով:

Զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ անձինք ազատվում գինվորական ծառայությունից՝ առողջական վիճակի, հաշմանդամության, ընտանեկան դրության կամ կառավարության որոշմանը համապատասխան, եթե սպորտով են զբաղվում:

Խտրականությունը գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների պատկերացմամբ.

- «Օրինակ, որ մեկին կարելի է ամեն ինչ, մյուսին՝ ոչ, մեկը ուժեղ է՝ կարող է ճնշել մյուսին»:
- «Ինդիվիդուալ է, մարդու մտածելակերպից է կախված, ես ոչ ոքի մեջ տարբերություն չեմ դնում»:
- «Ըստ ինձ տարբերություններ դնելը մարդկանց միջև»:
- «Խտրականությունը տարբերությունն է՝ կախված մաշկի գույնից, կրոնից, էթնիկ ծագումից և այլն: Այսինքն, նույնիսկ սոցիալական տարբերություններն են»:
- Այլ:

Բռնությունը գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչների պատկերացմամբ

- «Բռնության տեսակներից գիտեմ միայն ընտանեկան բռնության մասին»:
- «Բռնությունը ընդունելի չի: Սեփական կարծիքը պարտադրելն էլ բռնություն է: Եթե մի նախադասությամբ ասեմ, պարտադրել դիմացինին այն ինչ ուզում ես դու»:
- «Դրսևորումները տարբեր են՝ հոգեբանական, ֆիզիկական և այլն»:
- Այլ:

Զինվորական կոմիսարատի շենքում, միջանցքներում կամ մասնագետների սենյակներում զորակոչիկների միջև՝ միմյանց նկատմամբ, նրանց և հանձնաժողովների անդամների միջև տեղի ունեցած տարաձայնությունների, խտրականության կամ բռնության դրսևորումների առնչությամբ, գինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ փակ տարածք է, երբեմն պատահում են թեթև խոսակցություններ, վիճաբանություններ, սակայն դրանք բռնության չեն վերածվում: Իրենք երբևէ բողոքներ չեն ստացել:

Ներկայացուցիչներից մեկը հավելել է. - «Կոպիտ վերաբերմունքի մասին, հիմնականում ասում են ինձ հետ կոպիտ եք խոսում, երբ պատասխանը զորակոչիկին չի բավարարում կամ չի լսում իր ուզած պատասխանը: Բարկանում է, դե դեռահասության շրջանում գտնվող երիտասարդներ են, չենք թողնում բանը հասնի վիճաբանության»:

Հարցազրույցին մասնակցած բոլոր զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են, որ երբևէ իրենց դեմ չի ներկայացվել բողոք վերադասության կամ դատական կարգով:

Իրենց աշխատանքային գործունեության ընթացքում՝ 2018 թ.-ից առաջ և հետո ոլորտում կատարված փոփոխությունների մասին խոսելիս զինվորական կոմիսարիատների ներկայացուցիչները նշել են.

- «Հիմնականում ոչինչ չի փոխվել, որովհետև ամեն ինչ տարիներով նույն ձև, շղթայական ընթանում է ու որևէ նորարարության կարիք չկա»:
- «Հիմա հիմնականում դրական փոփոխություններ են իրականացվել: Ավտոմեքենաներն են ավելի բարեկարգվել, որոնք զորակոչիկների են տեղափոխում»:
- «Կնշեմ, որ դրանից հետո դրական շատ տեղաշարժեր կան ու կուզենամ, որ դրանք ավելին լինեն՝ նորմալ և լավ պայմաններ մեր զինվորների համար»:
- Այլ:

Հոգեկան առողջության կենտրոնների ներկայացուցիչների հետ անցկացված հարցազրույցների ամփոփում

Բժշկական փորձաքննությունների ընթացքում զորակոչային տարիքի արական սեռի քաղաքացիների նկատմամբ խտրականության դեպքերի վերհանման նպատակով հարցազրույցներ են անցկացվել 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում զորակոչի գործընթացքում ներգրավված հոգեկան առողջության կենտրոնների թվով 2 ներկայացուցիչների հետ:

Հարցազրույցներն անցկացվել են Երևան քաղաքում:

Հարցազրույցի մասնակիցների 50%-ը եղել են կանայք, 50%-ը՝ տղամարդիկ: Վերջիններս հոգեկան առողջության կենտրոնում աշխատել են որպես հոգեբույժ և հոգեբան: Ունեցել են 10 տարուց ավելի աշխատանքային փորձ:

Աշխատանքային փորձը.

- | | |
|------------------|------------------|
| ● մինչև 6 ամիս | ● 5-10 տարի |
| ● 6 ամսից 1 տարի | ● 10 տարուց ավել |
| ● 1-5 տարի | |



Ներկայացուցիչները նշել են, որ համապատասխան զինվորական կոմիսարիատներից զորակոչիկներին ուղեգրում են հոգեկան առողջության կենտրոններ, երբ հոգեկան առողջության վերաբերյալ որևէ կասկած կամ հիվանդություն է լինում: Զինկոմիսարիատին կից կա բժշկական հանձնաժողով, որի հոգեբույժն էլ տալիս է ուղեգիրը: Նշել են, որ ամեն անգամ չէ, որ հաստատվում են ուղեգրող մասնագետի կասկածները, և դա համարում են նորմալ:

Զորակոչիկների հետազոտություններում ներգրավվում են հոգեկան առողջության կենտրոնի հոգեբույժները: Հոգեբույժները գործում են հանձնաժողովի կազմում, որոնց անդամների թիվը կարող է լինել 5-ից 10 մասնագետ: Հոգեկան առողջության կենտրոնում անձի կարգավիճակի մասին վերջնական եզրակացությունը տրվում է հանձնաժողովի կողմից:

Նշել են, որ կան տարբերություններ և առանձնահատկություններ զորակոչիկների հետազոտությունների, դրանց ընթացակարգերի և մյուս պացիենտների հետազոտությունների և ընթացակարգերի միջև, մասնավորապես. -«Պացիենտները բուժման են գալիս, և նրանք նաև ախտորոշում են ստանում: Պացիենտները պառկում են ընդհանուր տիպի բաժանմունքում: Զորակոչիկներինը մաքսիմալ կարճացված է և հարմարեցված՝ որոշակի գործիքների միջոցով, նաև զինկոմիսարիատի իրենց գործն ենք դիտարկում, փաստաթղթերը», «Զորակոչիկները մեկ կամ մի քանի այց են անում, իսկ իմ պացիենտների հետ տարվում է մշտական աշխատանք»:

Չեն եղել ուղեգրված զորակոչիկների նկատմամբ որևէ դեղորայքային միջամտության դեպքեր, ինչպես նաև դեպքեր, երբ զորակոչիկների նկատմամբ կիրառվեն ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցներ և հանդարտեցման մեթոդներ:

Նշել են, որ հոգեկան առողջության կենտրոնում հետազոտություններ անցնելը հոգեբանական տհաճ կամ ծանր հետևանքներ չի թողնում զորակոչիկների վրա, մասնավորապես. -«Տեղից հոգեկան հիվանդություն ոչ կառաջանա, ոչ էլ կբարդանա, հոգեբանական, արդեն չգիտեմ», «Էստեղ գլխավորը բուժանձնակազմն է, վերաբերմունքը շատ բարիդրացիական ա, ընդունող ա: Չեմ պատկերացնում, որ դա կթողնի որևէ հետք: Ընդհակառակը, կա էդ «սըփորթը», դա կարողա նպաստի, կա տոլերանտություն: Այո, ես որպես հոգեբան, ստեղ էդ տոլերանտությունը տեսնում եմ»:

Հարցին, թե արդյոք բժշկական հետազոտությունների ենթարկվելու համար պահանջվում է զորակոչիկի իրազեկված համաձայնությունը, ներկայացուցիչները նշել են.

«Գրավոր կերպով մենք որևէ համաձայնություն չենք վերցնում: Իրենց բացատրում են, թե խի են գնում, ուր են գնում: Իմ համար պարտադիր չի, զինկոմիսարիատի համար պարտադիր ա: Ուղղակի ես պահանջներ ունեմ հենց հետազոտության հետ կապված: Օրինակ՝ հոգեբուժության մեջ վարքի ստացիոնար դիտարկումը հետազոտության գործիքներից մեկնա, զորակոչիկ կա, որ հրաժարվումա գիշերի, քանի որ մենք որևէ ստիպելու միջոց չունենք, և ի տարբերություն պացիենտների, օրվա ցանկացած ժամի, եթե ցանկանա գնա, կարող է գնա: Ուղղակի որպես զորակոչիկ իրենց պարտքնա հետազոտվել: Մի կողմից կարող են հրաժարվել, բայց մյուս կողմից էլ պարտադիր է: Եթե հրաժարվում է, գնում է զինկոմիսարիատ ու թե էնտեղ ինչ են անում իրենց գործառույթնա: Փաստացի, եթե հրաժարվեց չենք էլ կարա իրականացնենք: Եթե գալիս ա ու կիսատ ա մնում, ծանուցում ենք ուղարկում զինկոմիսարիատ, եթե չի էլ ընդունվում մեզ մոտ, ոչինչ չենք անում», «ինձ մոտ իրենց ուղորդում է հոգեբույժը, բայց դա հարկադիր չէ, իրենք են ընտրում ներկայանալ, թե՛ ոչ: Մենք չենք պարտադրում ոչինչ»:

Նշել են, որ զորակոչիկներին ստորագրման նպատակով չի ներկայացվում որևէ փաստաթուղթ, օրինակ՝ անվճար բժշկական օգնության տրամադրման, իրազեկված համաձայնության, գաղտնիության վերաբերյալ և այլն:

Զորակոչիկներն ըստ իրենց պահանջի կարող են ծանոթանալ իրենց բժշկական հետազոտությունների վերաբերյալ փաստաթղթերին: Եթե անչափահաս են, ապա կարող են դիմել և վերցնել ծնողները, եթե չափահաս են՝ անձամբ իրենք: Բժշկական եզրակացությունը կարող են վերցնել հոգեկան առողջության կենտրոնից կամ զինվորական կոմիսարիատից:

Հարցին, թե ո՞ր իրավիճակներում է անհրաժեշտություն առաջանում, որպեսզի զինվորական կոմիսարիատից ուղեգրված անձը գիշերի հոգեկան առողջության կենտրոնում, ներկայացուցիչները պատասխանել են. -«Որոշում ենք հոգեբույժներս, կախված վարքագծից, դրա արտահայտվածությունից: Ըստ դեպքի է: Մեզ մոտ հաճախ սիմուլյատիվ և դեսիմուլյատիվ վարքագիծ են դրսևորում: 20 րոպեանոց հանձնաժեռողովային զրույցը բավարար չէ, դրա համար հաճախ վարքագծի տևական դիտարկում ենք իրականացնում: Նաև տարբերակիչ ախտորոշման համար ենք դիտարկում, երբ տեսնում ենք, որ խնդիր կա, բայց մի քանի խնդիրների մեջ ենք դիտարկում», «Եթե հոգեբույժը որոշում է որ պետք է վարքի տևական դիտարկում անցնի»:

Զորակոչիկի հոգեկան առողջության կենտրոնում գիշերելու դեպքում, ընդհանուր պահման պայմանները ներկայացուցիչը նկարագրել է հետևյալ կերպ. - «Հիվանդասենյակ, անկողին,

մահճակալ, սպիտակեղեն, երեքանգամյա սնունդ, ի տարբերություն պացիենտների, իրենց մոտ բջջայինի մշտական առկայություն, թույլատրվող տեսակցությունները կախված են այդ պահին հիվանդանոցի այդ պահին գործող կարգավորումներով, եթե կովիդ կա, հիվանդանոցում այդ պահին սահմանափակվում է»:

Նշել են, որ հոգեկան առողջության կենտրոն ուղեգրված գորակոչիկների շրջանում եղել են անձինք, ովքեր ունեցել են հաշմանդամություն, այլ սեռական ուղղվածություն, գենդերային ինքնություն, այլ էթնիկ ծագում/ազգություն:

Ներկայացուցիչները մանրամասնել են. -«Որպես հոգեբույժ չունեմ որևէ տարանջատում, միանշանակ աջակցել, օգնել, առանց որևէ տարբերակում դնելու: Նմանատիպ մոտեցումն էլ պետք է լինի յուրաքանչյուր բուժաշխատողինը և առհասարակ զարգացած երկրի քաղաքացունը», «Բոլոր խմբերի ներկայացուցիչներից էլ եղել են: Ես հիմնականում իրականացնում եմ փսիխոդիագնոստիկա: Բոլորի վերաբերմունքն էլ շատ տոլերանտ է, բացարձակ ոչ մի տարանջատում գոյություն չունի»:

Երբևէ չեն հանդիպել իրավիճակների, երբ անձի սեռական ուղղվածության կամ գենդերային ինքնության, և/կամ հաշմանդամության, էթնիկ/ազգային պատկանելության մասին իմանալիս՝ մասնագետը հրաժարվել է ընդունել/սպասարկել գորակոչիկին: Նշել են, որ հոգեկան առողջության կենտրոններում չի էլ կարող աշխատել այնպիսի մասնագետ, ով վերոնշյալ խմբերից որևէ անձի նկատմամբ բացահայտ խտրական կամ տարբերակված վերաբերմունք է դրսևորվում:

Հարցին, թե հոգեկան առողջության կենտրոնի շենքը և/կամ դրա մասնաշենքերը հարմարեցված են բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին (ողջ տարածքում առկա են թեքահարթակներ, կան վերելակներ, շարժասանդուխքներ, տեսաձայնային և լուսաձայնային ազդակակիրներ, տարածքում արդյունավետ կողմնորոշվելու համար առկա են նեյտրալ և հեշտ ընթերնելի ցուցանակներ/գրություններ, դռների և միջանցքների լայնությունը բավարար է արդյունավետ տեղաշարժվելու համար, չկան կտրուկ թեք հարթություններ, խանգարող սյուներ), ներկայացուցիչները նշել են. -«Դրանց մեծ մասը ես հիմա հիմնարկում չեմ տեսնում, բայց դե վերակառուցման փուլում ա, ըստ երևույթին կլինի», «Հարմարեցված չեն, բայց հիմա վերանորոգվում է»:

Քանի որ չկան մատչելիության հարմարություններ, առաջացած բարդությունները կարգավորվում են բուժաշխատողների օգնությամբ:

ԳԲՏԶ+ անձանց հետազոտությունների ընթացակարգի մասին խոսելիս ներկայացուցիչները նշել են.

«Անցնողների գերակշիռ մասը իրենց սեռական ուղղվածության և գենդերային ինքնության մասին հայտնել են հենց հետազոտության առաջին փուլում, հետազոտվողների գերակշիռ մասի ուղեգրերում արդեն իսկ նշված են եղել: Սկզբունքը՝ մնալ, թե չմնալ, նույնն է: Ես մտավոր հետամնացին էլ կարող եմ նույն օրը հետազոտել և ուղարկել տուն: Արդեն հարց է, իր վարքը կասկած հարուցում է, թե՛ ոչ: Ես ունեցել եմ դեպքեր երբ ինքը ապակողմնորոշված է եղել, կողմնորոշված չի եղել, ինքն էլ չի իմացել և մենք, արդեն իրականացրել ենք վարքի դիտարկում: Եղել է նաև, որ մենք ասել ենք, իրենք հերքել են: Մենք էլ գրել ենք, որ չէ, տենց խնդիր չկա», «Ես պարզապես իրականացնում եմ իմ հետազոտությունը առանց տարբերակելու»:

ԳԲՏԶ+ անձի սեռական ուղղվածության և գենդերային ինքնության մասին իմանալուց հոգեկան առողջության կենտրոնների աշխատակիցներն այդ մասին չեն տեղեկացնում որևէ երրորդ անձի՝ ծնող, բարեկամ, ընկեր: Ներկայացուցիչները նշել են. - «Իրենց չենք տեղեկացրել, ընդհակառակը ունեցել ենք դեպքեր, երբ նման կողմնորոշման անձինք, ովքեր եկել է իրենց հետաքրքրությունները կիսող անձի հետ, ով բնականաբար տեղյակ է: Հազվադեպ են լինում, երբ ծնողի հետ են գալիս, մենք միշտ ճշտում ենք, արդյոք ծնողը տեղյակ է, թե՛ ոչ: Եթե տեղյակ չէ, ծնողի հետ չի խոսվում այդ մասին: Դա նաև օրենքով է ամրագրված», «Իմ աշխատանքի համար մեկ սկզբունքը կոնֆիդենցիալությունն է, թե զորակոչ ժամանակ, թե՛ ընդհանրապես»:

ԳԲՏԶ+ անձանց տրվում է հետևյալ եզրակացությունները. հոմոսեքսուալիստ, տրանսսեքսուալիզմ՝ ըստ հատուկ գրքի հիվանդությունների դասակարգման:


Հարցին, թե արդյոք գտնում են, որ ԳԲՏԶ+ անձանց սեռական ուղղվածության և գենդերային ինքնության հետ կապված հարցերը գտնվում են հոգեկան առողջության տիրույթում է, ներկայացուցիչները նշել են. - «Այո և ոչ: Որը էս գրքի մեջ առկա է՝ այո, որը չկա՝ ոչ: Հաճախ դա հիվանդությունն չի, բայց դրա հետ կապված անձը ունի այլ խնդիրներ: Հոգեկան առողջությունը դինամիկ պրոցես ա, մի խնդիրը կարող է լինել մի տարիքում, հետո դա հաղթահարվի մյուս էտապում», «Ոչ, բայց ես կմտնեմ հոգեբանական տիրույթի մեջ: Որովհետև տվյալ անձը ունի լուրջ խնդիրներ ոչ թե իր կողմնորոշման հետ կապված, այլ շրջապատի, սոցիում, ընտանիք, ինչը կազդի իր կյանքի որակի վրա: Ընդունված չի ընտանիքի կողմից, էնքան մանր հարցեր կան»:

Ներկայացուցիչները նշել են, որ եղել են դեպքեր, երբ զորակոչիկը հոգեկան առողջության կենտրոն է ներկայացել այլ անձի ուղեկցությամբ:

Ուղեկցողներ են հանդիսացել գորակոչիկի ընտանիքի անդամը, ընկերը, զուգընկերը, իրավաբանը, ոլորտային ՀԿ-ի ներկայացուցիչը: Ներկայացուցիչներից մեկը նշել է. -«Ես մի դեպք եմ հիշում, երբ որ Նորքում էի աշխատում, բեյջը սենց դրոշակ սարքած իրավապաշտպանը եկել էր, որ երիտասարդի իրավունքները պաշտպաներ կամ ավելի շատ չափտակավորվեր, բայց, երբ որ ես իրան բացատրեցի, որ ինքը իրա բեյջով ավելիա ա պիտակավորում, բեյջը վերացրեց, մի կողմում սպասեց, մինչև հետազոտությունը արեցի գնացին», «ուղեկցության հետ կապված որևէ օրենսդրական արգելք չկա, բայց, եթե մեզ պետք չի , կովիդի հետ կապված կարող ենք արգելել գերդաստանով գալը: Մի կամ երկու ծնողները կենսագրական ինֆորմացիա հավաքելու աղբյուր են, բայց դե 5-6 հոգով բաժին բարձրանալը իմաստ չունի կովիդի հետ»:

Ուղեկցողների մասնակցությամբ տեղի ունեցած միջադեպերի առնչությամբ նշել են. -«Կռիվ չէ բայց տարածայնություն հետազոտության նորմատիվների հետ կապված, բայց մեկա վերջում կամ գալիս ստուգվում են կամ չէ»:

Ուղեկցող անձինք են հանդիսացել.



Ներկայացուցիչները նշել են, որ հոգեկան առողջության կենտրոնի մուտքի մոտ, հարակից տարածքներում, շենքում, միջանցքներում լինում են մարդկային կուտակումներ:

Ներկայացուցիչներից մեկը նշել է. -«Կարողա մեծ հոսքով պայմանավորված լինի: Զորակոչի բնույթը տարբերվում ա, ամիսներ կան շատ են, ամիսներ կան՝ քիչ: Բայց դե մեծ համեմատություն կանցկացնեմ կովիդից առաջ և կովիդից հետո, եթե հիմա կուտակում էլ լինումա փորձում ենք սահմանափակել»:

Խտրականությունը հոգեկան առողջության կենտրոնի ներկայացուցիչների պատկերացմամբ.

- «Ինչ-որ որոշակի գործոնով պայմանավորված ինչ-որ տարանջատում, կարա լինի սեռ, կարա լինի տարիք, կողմնորոշման հարցեր և այլն»:
- «Ազգային փոքրամասնություն, կրոն, սեռական փոքրամասնություն տարանջատումն ա, այսինքն՝ անձի խտրական վերաբերմունքն ա էս փոքր խմբերին, երբ որ տարբերվում ա հասարակության նորմաներից»:

Բռնությունը հոգեկան առողջության կենտրոնի ներկայացուցիչների պատկերացմամբ.

- «Կամքին հակառակ որևէ գործողություն»:
- «Որևէ բան, որ հակառակա իրա մշակութային արժեքներին, անձին, իրա կամքին: Գոյություն ունի ընտանեկան բռնություն, հոգեբանական բռնություն, օրինակ՝ դպրոցներում բուլինգը»:

Հարցին, թե երբևէ հոգեկան առողջության կենտրոնում, դրա միջանցքներում կամ մասնագետների սենյակներում՝ զորակոչիկների միջև միմյանց նկատմամբ, զորակոչիկների և բուժանձնակազմի միջև, կամ զորակոչիկների և այլ այցելուների, պացիենտների միջև տեղի ունեցել են տարաձայնություններ կամ բռնության դրսևորումներ, ներկայացուցիչները նշել են. - «Ես ֆիզիկական վնասվածքներ եմ ստացել: Պատճառները՝ տարաձայնություններ, ցուցադրական վարք և նպատակային վարքագիծ, և այլն», «Ես մասնակից չեմ եղել, դիտորդ եմ եղել, երբ մտել են բաժանմունք և միևնույն բաժանմունք հասնելը դուռ են կոտրել, շատ ագրեսիվ, դեմոստրատիվ վարք են դրսևորել: Ես ականատես եմ եղել այդ ոչ ադեկվատ վարքաձևին»:

Հարցին, թե երբևէ ստացել են բողոքներ հոգեկան առողջության կենտրոնի զորակոչիկների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի՝ խտրականության, բռնության դեպքերի մասին, ներկայացուցիչներից մեկը նշել է. -«Նայած ինչը համարենք բողոք: Հարյուրավոր այսպես կոչված բողոքներ կարան լինեն. դե հիմա ծնողը բողոքում ա, որ խի իրա երեխան պետքա գիշերի, դա բողոք համարենք: Նայեք բաժանմունք են բերել ակնհայտ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող, դժվար շարժողականությամբ երեխա, որի հետազոտության ժամանակ, հանձնաժողովը վարքի դիտարկման կարիք չի տեսել, միանգամից հետազոտել, տուն ենք ուղարկել նույն օրը: Նույն պահին ընդունվում ա զորակոչիկ, ում ասում ենք, որ իր մնալը պարտադիր ա հետազոտությունը լիարժեք իրականացնելու համար: Ինքը համարել ա, որ մենք խտրականություն ենք դնում, մեկին պահել ենք, մեկին՝ չէ: Ինքը բողոքն ա արտահայտել բանավոր, մենք էլ իրա հետ բացատրական աշխատանք ենք արել: Հիմա սա եթե ընկալեմ, որպես բողոք, ուրեմն հարյուրավոր»:

Հարցազրույցին մասնակցած հոգեկան առողջության կենտրոնի ներկայացուցիչները նշել են, որ երբևէ իրենց դեմ չի ներկայացվել բողոք վերադասության կամ դատական կարգով:

Հարցին, թե հոգեկան առողջության կենտրոնի տարածքում կա՞ն կարգադրիչներ, ուղեկցող աշխատակիցներ, անվտանգության աշխատակիցներ, ոստիկանության

Ներկայացուցիչները նշել են, որ հոգեկան առողջության կենտրոնի տարածքում չկան նախազգուշացնող թերթիկներ՝ հայտարարություններ՝ ձայնագրությունների, տեսագրությունների և տեսաձայնագրությունների արգելքի մասին: Հոգեկան առողջության կենտրոնի տարածքում կան տեսախցիկներ՝ միջանցքներում, բաժանմունքներում, ընդունարանում, դրսում և այլն:

Հոգեկան առողջության կենտրոնի տարածքում՝ ընդունարանում, կան իրազեկող թերթիկներ՝ պացիենտների իրավունքների ու պարտականությունների, թեժ գծերի մասին:

Ներկայացուցիչները նշել են, որ 2018թ.-ից հետո մասնակցել են վերապատրաստման դասընթացների, մասնավորապես.

- «Ժամանակ առ ժամանակ բոլորն էլ մասնակցում են: Ես ոչ մեկի անձնական տվյալները չեմ տիրապետում, բայց տարվա ընթացքում բոլորս էլ ունենում ենք՝ ՇՄՁ-ներ (շարունակական մասնագիտական զարգացում) ենք հավաքում: Ես 2018թ.-ին չորս ամիս Մոսկվայում վերապատրաստվել եմ դասական և փորձագիտական հոգեբուժություն: Լինում են, որ ֆինանսավորվում են, լինում են, որ ես եմ վճարում: Պարտադիր են իհարկե, եթե ես 5 տարվա մեջ 180 ՇՄՁ չհավաքեմ, ես իրավունք չունեմ աշխատելու»:
- «Միանշակա՛ն վերապատրաստվում ենք, թրեյնինգներ, դասընթացներ, իրենք վճարովի են: Ես հիմա վերապատրաստվում եմ, վճարում եմ և սովորում եմ Ռուսաստանում: Ինքը ընդհանուր մասնագիտական ա, որը իրա՛մեջ ունի սպեցիֆիկ ճյուղեր, օրինակ՝ արտակարգ իրավիճակների հոգեբանություն, պաթոհոգեբանություն, նեյրոհոգեբանություն, ինչը իհարկե ծառայում է այս աշխատանքին»:

Ոլորտում կատարված փոփոխությունները նկարագրելիս, նշել են, որ 2020թ.-ի պատերազմից ու համավարակից հետո են նկատել տարբերություն՝ խնդիրներով անձինք շատացել են, իրենց ծառայությունների պահանջարկը մեծացել է:

Առանցքային տեղեկատուների հետ հաղորդակցության արդյունավետության գնահատում

Սույն զեկույցի շրջանակներում հարցումներ և հարցազրույցներ անցկացնելու թույլտվության խնդրանքներ են ուղարկվել զորակոչի գործընթացին առնչվող տարաբնույթ գործառույթներ իրականացնող, իրավասություններ ունեցող կառույցներին, մասնավորապես՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ առողջապահության նախարարությանը, ՀՀ քննչական կոմիտեին, ՀՀ ոստիկանությանը, Երևանի քաղաքապետարանին, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզապետարաններին, «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին, ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին՝ պարզելու նպատակով զորակոչի գործընթացի շրջանակներում արձանագրված վարչական իրավախախտումների, հարուցված քրեական գործերի վիճակագրությունը, դրանց հիմքում հնարավոր խտրականության առկայությունը, ինչպես նաև առանցքային տեղեկատուների գործառույթներն ու ներգրավվածությունը զորակոչի գործընթացում:

Ստորև ներկայացվում է առանցքային տեղեկատուներին ուղղված հարցումների և դրանց պատասխանների բովանդակությունը՝ միաժամանակ գնահատելով վերջիններիս հետ հաղորդակցության արդյունավետությունը:

ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ-ից հարցմամբ պահանջվել է հետևյալ տեղեկատվությունը.

1. 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչին ընկած ժամանակահատվածում ՀՀ պաշտպանության նախարարության մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեցող զինվորական կոմիսարների կողմից քանի վարչական իրավախախտումներ են արձանագրվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հետևյալ հոդվածներով՝ 207-րդ՝ զինվորական հաշվառման կանոնները խախտելը, 208-րդ՝ զորակոչային տեղամասերի կցագրման ենթակա պատանիների ցուցակները սահմանված ժամկետում չներկայացնելը, 210-րդ՝ զինապարտներին և զորակոչիկներին զինվորական կոմիսարիատներ կանչելու մասին նրանց ծանուցելը չապահովելը, 212-րդ՝ ԲԱՓՀ-ի պաշտոնատար անձանց կողմից զինապարտների և զորակոչիկների հաշմանդամության վերաբերյալ տեղեկություններ չհաղորդելը:

2. Տեղեկատվության առկայության դեպքում՝ պահպանելով անձնական տվյալները, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե արդյոք արարքները կատարվել են խտրականության հիմքով: Եթե, այո, ապա խտրականության ինչ հիմքով են պայմանավորված եղել:
3. Արդյոք պատերազմական վիճակը/ռազմական դրությունը ազդեցություն է ունեցել 2020թ. ձմեռային և հետագա զորակոչերի անցկացման բնականոն ընթացքի վրա: Եթե այո, խնդրում ենք նշել ինչպիսի ազդեցություն:

ՀՀ պաշտպանության նախարարությունը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ 2018թ.-ի ամառային զորակոչից 2021թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 207-րդ հոդվածով վարչական պատասխանատվության են ենթարկվել թվով 1585 քաղաքացի:

- Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 207-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում զինապարտ քաղաքացու կողմից «Պաշտպանության մասին» օրենքի 22-րդ հոդվածով սահմանված զինվորական հաշվառման կանոնները խախտելու համար:
- «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածը սահմանում է զինվորական հաշվառման գործընթացում քաղաքացիների պարտականությունները: Հայցվող ժամանակահատվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի մյուս հոդվածներով իրավախախտումներ չեն արձանագրվել: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 15-րդ գլխով նախատեսված հոդվածներով սահմանված արարքները խտրականության հիմքով կատարված լինելու վերաբերյալ տեղեկություններ չկան: Պատերազմական վիճակը/ռազմական դրությունը 2020թ.-ի ձմեռային զորակոչի բնականոն ընթացքի վրա ազդեցություն չի թողել:

ՀՀ պաշտպանության նախարարության հետ հաղորդակցությունը գնահատում ենք ժամանակին և արդյունավետ, հաշվի առնելով հարցմանը պատասխանելու պատշաճ ընթացակարգերի պահպանումն ու տրամադրված տեղեկատվության բովանդակությունը:

ՀՀ Առողջապահության նախարարություն

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ և ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ.

ՀՀ ԱՆ-ից համապատասխան գրությամբ խնդրվել է թույլտվություն տրամադրել «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի երեքական ներկայացուցիչների հետ հարցազրույցներ իրականացնելու համար:

ՀՀ առողջապահության նախարարությունից պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ առողջապահության նախարարությունը սկզբունքորեն դեմ չէ Կազմակերպության կողմից իրականացվող հարցազրույցների կազմակերպմանը: Սակայն, քանի որ հարցերը վերաբերում են զորակոչի գործընթացին, որը պաշտպանության նախարարության տիրույթում է, անհրաժեշտ է ստանալ ՊՆ համաձայնությունը: Վերը նշվածի հիման վրա, Կազմակերպությունը նշված հարցով գրություն է ուղարկել նաև ՀՀ ՊՆ-ին:

ՀՀ ՊՆ-ն պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ նշված հարցը դուրս է ՀՀ ՊՆ լիազորություններից: Զուգահեռաբար գրություններ են ուղարկվել նաև «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին և ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին: «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հետ ձեռք է բերվել համագործակցության համաձայնություն և իրականացվել են համապատասխան հարցազրույցները:

«Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի հետ, չնայած բազմաթիվ բանավոր և գրավոր հաղորդակցությունների, հնարավոր չի եղել ձեռք բերել հարցազրույցներ իրականացնելու թույլտվություն:

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ին և ՀՀ ԱՆ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ին հարցումներ են ուղարկվել նաև իրենց ներքին կանոնակարգերի և քաղաքականությունների տրամադրման, ինչպես նաև հետևյալի մասին տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ.

1. 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչին ընկած ժամանակահատվածում հոգեկան հիվանդության կամ խանգարման դժբախտության տեսակների առկայության ստուգման նպատակով են անձինք զինկոմիսարիատների կողմից ուղեգրվել հոգեկան առողջության կենտրոն:

2. 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում քանի անձի վերաբերյալ է տրվել եզրակացություն առ այն, որ վերջինիս մոտ առկա է ՀՀ Կառավարության 2018թ.-ի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 8-րդ հոդվածով սահմանված խանգարում (ներառում է անձի և վարքի, ներառյալ՝ անձի յուրահատուկ և խառը խանգարումները, սովորույթների և հակումների, սեռական նույնացման, սեռական նախընտրության, սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարումները, արտահայտված և կոմպենսացիայի չենթարկվող ձևերը, անձի՝ հաճախակի դեկոմպենսացիաներով խանգարումները, ինչպես նաև կրկնվող իրավիճակային և անձնային ռեակցիաները, որոնց հաճախականությունը 1 տարվա ընթացքում 3 անգամ և ավելի է):

«Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ից պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ Կազմակերպության գրությանը պատասխանելու համար անհրաժեշտ է կատարել լրացուցիչ աշխատանքներ, ուստի տեղեկատվությունը կտրամադրվի 30-օրյա ժամկետում:

Նշված ժամկետի շրջանակներում, լրացուցիչ աշխատանքներ կատարելուց հետո, «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ն երկու նախադասությունից կազմված գրությամբ տեղեկացրել է, որ 1-ին և 2-րդ հարցերով անհրաժեշտ է դիմել ՀՀ առողջապահության նախարարություն, իսկ ՓԲԸ աշխատանքը և քաղաքականությունը կանոնակարգվում են ՀՀ գործող իրավական ակտերով:

«Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ից այս հարցման կապակցությամբ պատասխան չի ստացվել:

- Այսպես, գեկույցի շրջանակներում հարցազրույցներ իրականացնելու հարցում ՀՀ առողջապահության նախարարության և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի հետ հաղորդակցությունը գնահատում ենք արդյունավետ, իսկ «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի հետ ժամանակավրեպ, չստացված և ոչ արդյունավետ:
- Հարցումների մյուս մասով, համագործակցությունը «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ-ի հետ գնահատում ենք ոչ արդյունավետ, քանզի առաջինը առհասարակ չի պատասխանել հարցմանը, իսկ երկրորդը՝ խնդրելով 30 օր լրացուցիչ աշխատանքներ կատարելու ժամկետ, Կազմակերպությանն է ներկայացրել որևէ տեղեկատվություն չտրամադրող, երկու նախադասությունից կազմված գրություն:

ՀՀ քննչական կոմիտե

ՀՀ քննչական կոմիտեից հարցմամբ պահանջվել է հետևյալ տեղեկատվությունը.

1. 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում զինկոմիսարիատների կամ հոգեբուժական հաստատությունների տարածքներում զորակոչիկների ներգրավմամբ տեղի ունեցած դեպքերի առթիվ քանի քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ (սպանությունը), 109-րդ (անզգուշությամբ մահ պատճառելը), 110-րդ (ինքնասպանության հասցնելը), 111-րդ (ինքնասպանության հակելը), 112-րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 113-րդ (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 117-րդ (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 118-րդ (Ծեծը), 119-րդ (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 134-րդ (հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը), 137-րդ (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 144-րդ (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը), 145-րդ (բժշկական գաղտնիք փոխանցելը), 327-րդ (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը) հոդվածների հատկանիշներով:
2. Տեղեկատվության առկայության դեպքում՝ պահպանելով նախաքննական գաղտնիքը և անձնական տվյալները, խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն նաև այն մասին, թե արդյոք հանցագործությունները կատարվել են խտրականության հիմքով: Եթե, այո, ապա խտրականության ինչ հիմքով են պայմանավորված եղել:

ՀՀ քննչական կոմիտեն պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ ՀՀ քննչական կոմիտեի վիճակագրության հաշվետվությունների մեջ հայցվող տեղեկատվության վերաբերյալ տվյալներ արտացոլված չեն: Միաժամանակ նշվել է, որ հանցագործությունների դեպքերի միասնական հաշվառում իրականացնում է ՀՀ ոստիկանությունը, ուստի փնտրվող տեղեկատվությունը ստանալու նպատակով կարող ենք դիմել ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոն:

- ՀՀ քննչական կոմիտեի հետ համագործակցությունը գնահատում ենք ոչ արդյունավետ, քանզի վերջիններս չտիրապետելով տեղեկատվության՝ միայն հանցագործությունները զինկոմիսարիատների կամ

հոգեբուժական հաստատությունների տարածքներում գորակոչիկների ներգրավմամբ տեղի ունեցած լինելու կամ խտրականության հիմքով կատարված լինելու վերաբերյալ, առհասարակ չեն տրամադրել տեղեկատվություն հարցմամբ նշված ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների հատկանիշներով հարուցված քրեական գործերի թվի վերաբերյալ, որի վիճակագրությունը վարվում է:

ՀՀ ոստիկանություն

ՀՀ ոստիկանությունից հարցմամբ պահանջվել է հետևյալ տեղեկատվությունը.

1. 2018 թ.-ի ամառային գորակոչից 2021 թ.-ի ամառային գորակոչին ընկած ժամանակահատվածում իրականացվել է հասարակական կարգի պահպանություն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության գորակոչային և գորահավաքային համալրման ծառայության բոլոր տարածքային ստորաբաժանումների և հանրապետական հավաքակալային տարածքներում: Եթե ոչ, խնդրում ենք նշել, ո՞ր տարածքային ստորաբաժանումների և հանրապետական հավաքակալային տարածքներում չի իրականացվել հասարակական կարգի պահպանություն և ինչո՞ւ (օրինակ՝ ռեսուրսների անբավարարություն):
2. 2018, 2019, 2020 թվականների նախագորակոչային և գորակոչային ժամանակահատվածում զինկոմիսարիատների կամ հոգեբուժական հաստատությունների տարածքներում գորակոչիկների ներգրավմամբ տեղի ունեցած դեպքերի առթիվ քանի նյութեր են նախապատրաստվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ (սպանությունը), 109-րդ (անզգուշությամբ մահ պատճառելը), 110-րդ (ինքնասպանության հասցնելը), 111-րդ (ինքնասպանության հակելը), 112-րդ (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը), 113-րդ (դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 117-րդ (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը), 118-րդ (ծեծը), 119-րդ (ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը), 134-րդ (հոգեբուժական հիվանդանոցում ապօրինի տեղավորելը կամ պահելը), 137-րդ (սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքը), 144-րդ (անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը կամ տարածելը), 145-րդ (բժշկական գաղտնիք փոխանցելը), 327-րդ (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ գորահավաքային ծառայությունից խուսափելը) հոդվածների հատկանիշներով:
3. Տեղեկատվության առկայության դեպքում՝ պահպանելով անձնական տվյալները, խնդրում ենք տրամադրել

տեղեկատվություն նաև այն մասին, թե արդյոք արարքները կատարվել են խտրականության հիմքով: Եթե, այո, ապա խտրականության ինչ հիմքով են պայմանավորված եղել:

ՀՀ ոստիկանությունը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների ծառայողների ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության բոլոր տարածքային ստորաբաժանումների և հանրապետական հավաքակալայնի տարածքներում մշտապես իրականացվել է հասարակական կարգի պահպանություն և հասարակական անվտանգության ապահովում:

Հարցմամբ նշված ՀՀ քրեական հոդվածների հատկանիշներով ՀՀ ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի գրանցված հանցագործությունների և դրանք կատարած անձանց հաշվառումներում զորակոչիկների ներգրավման վերաբերյալ տեղեկություն (նշում) նախատեսված չէ: Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի (ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից, վարժական հավաքներից կամ զորահավաքային ծառայությունից խուսափելը) հատկանիշներով նախատեսված հանցագործություններին, ապա գրանցվել է 2018թ.-ին 1202 դեպք, 2019թ.-ին՝ 919 դեպք և 2020թ.-ին՝ 994 դեպք:

- ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում՝ ժամկետային զինվորական կամ այլընտրանքային ծառայության հերթական զորակոչից, վարժական հավաքից կամ զորահավաքային զորակոչից խուսափելու համար՝ այդ ծառայությունից ազատվելու՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում: Ինքնուրույն հաստատությունների տարածքներում զորակոչիկների ներգրավմամբ տեղի ունեցած լինելու կամ խտրականության հիմքով կատարված լինելու վերաբերյալ, առհասարակ չեն տրամադրել տեղեկատվություն հարցմամբ նշված ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածների հատկանիշներով հարուցված քրեական գործերի թվի վերաբերյալ, որի վիճակագրությունը վարվում է:

Նշել են նաև, որ հարցման 3-րդ կետով ոստիկանությունում տեղեկատվություն առկա չէ, այն ստանալու համար անհրաժեշտ է դիմել վարույթն իրականացնող մարմիններին:

- ՀՀ ոստիկանության հետ հաղորդակցությունը գնահատում ենք ժամանակին և արդյունավետ, հաշվի առնելով վերջիններիս կողմից հարցմանը պատասխանելու ընթացակարգերի պահպանումն ու տրամադրված տեղեկատվության ծավալն ու բովանդակությունը:

Երևանի քաղաքապետարան

Երևանի քաղաքապետարանից հարցմամբ պահանջվել է հետևյալ տեղեկատվությունը.

1. Արդյոք 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում անձամբ (Երևանի քաղաքապետը) ներգրավվել եք Կենտրոնական բժշկական հանձնաժողովում՝ որպես հանձնաժողովի նախագահ:
2. Արդյոք 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում ունեցել եք ներկայացուցիչներ զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներում:
3. Երբևէ արձանագրել եք բռնության կամ խտրականության դեպքեր՝ զորակոչիկների նկատմամբ: Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն ընթացքի վերաբերյալ:
4. Երբևէ ստացել եք բողոքներ քաղաքացիներից՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի անձանցից, նրանց ներկայացուցիչներից, այլ շահագրգիռ անձանցից կամ կազմակերպություններից, զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքի մասին: Եթե այո, ապա ինչ ընթացք է տրվել բողոքին:
5. Խնդրում ենք նշել Երևանի քաղաքապետարանի/քաղաքապետի պարտավորությունների շրջանակը նախազորակոչային և զորակոչային ժամանակահատվածում՝ դրանք կարգավորող իրավական ակտերի հղումներով:

Երևանի քաղաքապետարանը պատասխան գրությամբ տեղեկացրել է, որ 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում Երևանի տարածքային (տեղական) զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներում ներկայացուցիչներ Երևանի քաղաքապետարանը չի ունեցել, զորակոչիկների նկատմամբ երբևէ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել, ինչպես նաև նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի անձանցից, նրանց ներկայացուցիչներից, այլ շահագրգիռ անձանցից կամ կազմակերպություններից զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքերի մասին բողոքներ չեն ստացվել:

Նշել են, որ Երևանի քաղաքապետարանի, քաղաքապետի պարտավորությունների շրջանակը նախազորակոչային և զորակոչային ժամանակահատվածում կարգավորվում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքով:

- Երևանի քաղաքապետարանի հետ հաղորդակցությունը գնահատում ենք բավարար, հաշվի առնելով հարցմանը արձագանքելու և մասմաբ տեղեկատվություն տրամադրելու հանգամանքը:

Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզապետարաններ

Մարզապետարաններից հարցմամբ պահանջվել է հետևյալ տեղեկատվությունը.

1. Արդյոք 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում անձամբ (մարզպետը) ներգրավվել եք մարզային զորակոչային հանձնաժողովում՝ որպես հանձնաժողովի նախագահ:
2. Արդյոք 2018 թ.-ի ամառային զորակոչից 2021 թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում ունեցել եք ներկայացուցիչներ գինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներում:
3. Երբևէ արձանագրել եք բռնության կամ խտրականության դեպքեր՝ զորակոչիկների նկատմամբ: Եթե այո, ապա խնդրում ենք տրամադրել տեղեկատվություն ընթացքի վերաբերյալ:
4. Երբևէ ստացել եք բողոքներ քաղաքացիներից՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի անձանցից, նրանց ներկայացուցիչներից, այլ շահագրգիռ անձանցից կամ կազմակերպություններից, զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքի մասին: Եթե այո, ապա ինչ ընթացք է տրվել բողոքին:
5. Խնդրում ենք նշել մարզապետարանի/մարզպետի պարտավորությունների շրջանակը նախազորակոչային և զորակոչային ժամանակահատվածում՝ դրանք կարգավորող իրավական ակտերի հղումներով:

Հարկ է նշել, որ բոլոր մարզապետարանների օրենքով սահմանված ժամկետներում պատշաճ պատասխաններ են ներկայացրել հարցմանը, որոնց հիմնական բովանդակությունը ներկայացվում է ստորև.

- **Արագածոտնի մարզապետարան**- Յուրաքանչյուր տարի ՀՀ կառավարության որոշմամբ հաստատվում է հանրապետական և մարզային (Երևան քաղաքի) զորակոչային հանձնաժողովների կազմը: Մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ է հանդիսանում մարզպետը: 2018-2021 թթ. ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետի գլխավորությամբ իրականացվել է 17 զորակոչային հանձնաժողովի նիստ, որը ամրագրվել է համապատասխան արձանագրություններով: 2018-2021 թթ.

ընթացքում զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել: Մարզպետի պարտավորությունների շրջանակը նախագորակոչային և զորակոչային ժամանակահատվածում կարգավորվում է ՀՀ պաշտպանության մասին օրենքի 2-րդ գլխի 11-րդ հոդվածով (պաշտպանության ոլորտում պետական և տարածքային մարմինների լիազորությունները) և ՀՀ տարածքային կառավարման մասին օրենքի 2-րդ գլխի 18-րդ հոդվածով (մարզպետի լիազորությունները պաշտպանության կազմակերպման բնագավառում):

- **Արարատի մարզպետարան**- Մարզային զորակոչային հանձնաժողովը գինվորական ծառայության զորակոչերի կազմակերպումն ապահովող մարմին է, որը ստեղծվում է շարքային կազմի պարտադիր գինվորական ծառայության զորակոչը հայտարարելու մասին ՀՀ Կառավարության որոշմամբ: ՄՀՀ-ի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը, առնվազն 3 անդամներ և քարտուղարը: Մարզպետը հանդիսանում է մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահը: 2020թ.-ի ձմեռային, 2021թ.-ի ամառային և ձմեռային զորակոչերի ժամանակ մարզպետն անձամբ ստանձնել է զորակոչային հանձնաժողովի նախագահի պաշտոնը: Պաշտոնը զբաղեցնելու ժամանակահատվածում զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել, բողոքներ նույնպես չեն ստացվել: Զորակոչային հանձնաժողովն իր աշխատանքները կազմակերպելիս ղեկավարվում է «Զինվորական ծառայության և գինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր գինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1132-Ն որոշմամբ, «Շարքային կազմի պարտադիր գինվորական ծառայության զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» ՀՀ Կառավարության որոշումներով:

- **Արմավիրի մարզպետարան**- ՀՀ Կառավարության 2018թ.-ի մայիսի 3-ի 536-Ն, 2018թ.-ի նոյեմբերի 29-ի 1337-Ն, 2019թ.-ի մայիսի 16-ի 590-Ն, 2019թ.-ի նոյեմբերի 7-ի 1536-Ն, 2020թ.-ի ապրիլի 23-ի 593-Ն, 2020թ.-ի դեկտեմբերի 24-ի 2136-Ն, 2021 թ.-ի մայիսի 6-ի 711-Ն «Շարքային կազմի պարտադիր գինվորական ծառայության զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» որոշումների համաձայն ստեղծվել է մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողով, համաձայն որի ՀՀ Արմավիրի մարզպետը ներգրավվել է Արմավիրի մարզային զորակոչային հանձնաժողովի կազմում՝ որպես հանձնաժողովի նախագահ և իրականացրել է օրենքով իրեն վերապահված լիազորությունները:

ՀՀ Կառավարության 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման 20-րդ կետով սահմանվում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի ապահովող մարմինները: Զինվորական կոմիսարիատների զորակոչային հանձնաժողովներում 2018թ.-ի ամառայինից 2021թ.-ի ամառային զորակոչերի շրջանակներում ՀՀ Արմավիրի մարզպետարանից ներկայացուցիչներ չեն ընդգրկվել: 2018 թ.-ի ամառայինից մինչև 2021թ.-ի ամառային զորակոչերի նախազորակոչային և զորակոչային միջոցառումների ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետարանում զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել, զորակոչիկի նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքերի մասին բողոքներ չեն ստացվել: ՀՀ Արմավիրի մարզպետարանի և մարզպետի լիազորությունները նախազորակոչային և զորակոչային միջոցառումների անցկացման ուղղությամբ սահմանվում են հետևյալ օրենքներով և իրավական ակտերով. ՀՀ պաշտպանության մասին օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգով տարածքային կառավարման մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում մասնակցում են պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, պահեստազորային պատրաստության միջոցառումների և զորահավաքային զորակոչի իրականացման, զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրման գործընթացին: ՀՀ «Տարածքային կառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է մարզպետի լիազորությունները պաշտպանության կազմակերպման բնագավառում, իսկ 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ մասնակցում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպման գործընթացին: ՀՀ Կառավարության 2018 թ.-ի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման 20-րդ կետով սահմանվում են շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչերի ապահովող մարմինները, 25-րդ և 26-րդ կետերով սահմանվում են մարզային (Երևանի քաղաքային) զորակոչային հանձնաժողովի գործառույթները:

- **Գեղարքունիքի մարզպետարան**- 2018թ. ամառային զորակոչից մինչև 2021թ.-ի ամառային զորակոչն ընկած ժամանակահատվածում զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել: Քաղաքացիներից, կազմակերպություններից կամ շահագրգիռ այլ անձանցից զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դրսևորման մասին

բողոքներ չեն ստացվել: Նախագորակոչային ժամանակահատվածում մարզպետը ՀՀ առողջապահության նախարարին ներկայացնում է բժիշկ մասնագետների ցանկը, որից ըստ անհրաժեշտ մասնագիտությունների առողջապահության նախարարի հրամանով ձևավորվում են բժշկական հանձնաժողովները: Յուրաքանչյուր գորակոչի համար ընդունվում է ՀՀ Կառավարության որոշում, որտեղ հաստատվում են մարզային գորակոչային հանձնաժողովների կազմերը և սահմանվում են նրանց պարտականությունները: Մարզային գորակոչային հանձնաժողովի լիազորությունները սահմանված են Նաև «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ կետով և ՀՀ Կառավարության 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշման 26-րդ կետով:

- **Լոռու մարզպետարան**- Մարզպետը ընդգրկված է ՀՀ Լոռու մարզային գորակոչային հանձնաժողովի կազմում, որպես հանձնաժողովի նախագահ: Զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել, ինչպես նաև չի ստացվել վերջինիս վերաբերյալ քաղաքացիներից բողոքներ: Նախագորակոչային և գորակոչային ժամանակահատվածում տարածքային կառավարման մարմինների լիազորությունները կարգավորվում են «Պաշտպանության մասին», «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

- **Կոտայքի մարզպետարան**- Յուրաքանչյուր գորակոչի կազմակերպման նպատակով, ՀՀ Կառավարության որոշման համաձայն ստեղծվում է մարզային գորակոչային հանձնաժողով, որի նախագահին է մարզպետը («Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք և ՀՀ Կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021թ.-ի ձմեռային գորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» N 1723-Ն որոշում): Զինվորական կոմիսարիատում (ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Կոտայքի մարզի տարածքային ստորաբաժանում) մարզպետարանի ներկայացուցիչներ չեն ընդգրկվում («Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք և ՀՀ Կառավարության 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության գորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշում): Զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել: Բողոքներ քաղաքացիներից չեն ստացվել:

● **Շիրակի մարզպետարան**- Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին ՀՀ կառավարության որոշումներով ՀՀ Շիրակի մարզպետը մշտապես (այդ թվում՝ 2018-2021 թվականներին) հանդիսացել է ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ: 2018 թվականի ամառային զորակոչից սկսած տարածքային զինկոմիսարիատներին կից տեղական զորակոչային հանձնաժողովներ չեն ձևավորվել, քանի որ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ շարքային կամ պահեստազորի սպայական կազմերի պարտադիր զինվորական ծառայության հայտարարված զորակոչերի պատշաճ իրականացման համար պատասխանատու է համարվում համապատասխան զինվորական կոմիսարիատը: Զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել: Նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի անձանցից, նրանց ներկայացուցիչներից, այլ շահագրգիռ անձանցից կամ կազմակերպություններից զորակոչիկների նկատմամբ բռնության կամ խտրականության դեպքի մասին բողոքներ չենք ստացել: Նախազորակոչային պատրաստության շրջանակում մարզպետի լիազորությունները սահմանված են ՀՀ կառավարության 1999 թվականի օգոստոսի 25-ի N 532 որոշմամբ: «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ մարզպետը մասնակցում է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի կազմակերպման գործընթացին: Մարզային զորակոչային հանձնաժողովի լիազորությունները սահմանված են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ կառավարության 2018 թվականի հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշմամբ:

● **Սյունիքի մարզպետարան**- 2018թ.-ի ամառային զորակոչից մինչև 2021թ.-ի ամառային զորակոչը ժամանակահատվածում ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանումում ՀՀ առողջապահության նախարարի կողմից ստեղծված մարզային հանձնաժողովը սահմանված կարգով իրականացնում է զորակոչիկների բժշկական հետազոտություններ, որի կազմը համալրված է միայն բժիշկ մասնագետներից: 2018թ.-ի ամառային զորակոչից մինչև 2021թ.-ի ամառային զորակոչը ժամանակահատվածում չի արձանագրվել բռնության կամ խտրականության որևէ դեպք, իսկ քաղաքացիներից կամ նախազորակոչային և զորակոչային տարիքի արական սեռի ներկայացուցիչներից

մարզպետարանը բողոքներ չի ստացել: ՀՀ Սյունքի մարզպետը՝ հանդիսանում է մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահի՝ ՀՀ կառավարության 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի՝ «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2021թ.-ի ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» N 1723-Ն որոշման համաձայն, իսկ Սյունիքի մարզպետարանի հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետը՝ հանձնաժողովի քարտուղար:

- **Վայոց ձորի** մարզպետարան- Ձորակոչի հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, իսկ ամառային կամ ձմեռային զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին յուրաքանչյուր անգամ ՀՀ կառավարության կողմից ընդունվում է համապատասխան որոշում: Բռնությունների կամ խտրականության դեպքերի վերաբերյալ տվյալներ չեն ստացվել:

- **Տավուշի մարզպետարան**- Տավուշի մարզպետը ՀՀ կառավարության 2021թ.-ի մայիսի 6-ի թիվ 711-Ն և 2021թ.-ի հոկտեմբերի 21-ի թիվ 1723-Ն որոշումներով հանդիսացել է մարզային զորակոչային հանձնաժողովի նախագահ: Համաձայն ՀՀ պաշտպանության նախարարի հրամանի 2018թ.-ի մայիսից ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Տավուշի մարզի թիվ 1 և թիվ 2 տարածքային ստորաբաժանումների զորակոչային հանձնաժողովներում մարզպետարանից ներկայացուցիչ չի նախատեսվում: Նշված ժամանակահատվածում բռնության կամ խտրականության դեպքեր չեն արձանագրվել: Քաղաքացիներից բողոքներ չեն ստացվել: Մարզպետարանի, մարզպետի պարտավորությունների շրջանակը նախագորակոչային և զորակոչային ժամանակահատվածում կարգավորվում են հետևյալ իրավական ակտերով. «Պաշտպանության մասին» ՀՀ օրենք, գլուխ 2, հոդված 11, կետ 2, «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենք, գլուխ 2, հոդված 18, «Զինվորական ծառայության և զինծառայողի վիճակի մասին» ՀՀ օրենք, գլուխ 4, հոդված 17 և 18, գլուխ 5, հոդված 19:

- Բոլոր մարզպետարանների հետ համագործակցությունը գնահատում ենք ժամանակին և արդյունավետ, հաշվի առնելով հարցումներին պատասխանելու պատշաճ ընթացակարգի պահպանումն ու տրամադրված տեղեկատվության ծավալները:

Իրավական կարգավորումներ

Հարցագրույցների և հարցումների արդյունքում վեր հանված խնդիրներն առավելապես առնչվում էին զորակոչիկների զինկոմիսարիատներ ներկայանալու ծանուցումների, զինկոմիսարիատների տարածքում մարդկանց կուտակումների, երկարատև հերթերի, զինկոմիսարիատներում նրանց դիմավորելու, պատշաճ ընթացակարգերը մատչելի և հասկանալի չներկայացնելու, զինկոմիսարիատների տարածքներում, իսկ ուղեգրումների դեպքերում նաև բժշկական կենտրոններում, պոլիկլինիկաներում և հոգեկան առողջության կենտրոններում խտրականության և բռնության ենթարկվելու, այլընտրանքային ծառայության, տեսա կամ ձայնագրության արգելքի, բժշկական հետազոտությունների ենթարկվելու համար իրազեկված համաձայնություն չպահանջելու, բժշկական փաստաթղթերին ծանոթանալու և պատճենները ստանալու խոչընդոտների, հաշմանդամություն ունեցող անձանց համար զինկոմիսարիատների և հոգեկան առողջության կենտրոնների տարածքների մատչելիության հետ կապված և այլ հարցերին: Այս ամենի համատեքստում առանցքային նշանակություն ունեն անձանց արժանապատվության, խտրականության արգելքի, մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության, տեղեկություններ ստանալու, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքների ապահովումը: Վերոնշյալի նկատառմամբ ստորև ներկայացվում են վերաբերելի իրավակարգավորումները:

ՀՀ սահմանադրությամբ ամրագրված են մարդու հետևյալ իրավունքներն ու ազատությունները, օրենսդրական երաշխիքները.

- Մարդու արժանապատվությունը (հոդված 23)
- Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը (հոդված 25)
- Խտրականության արգելքը (հոդված 29)
- Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը (հոդված 31)
- Անձնական տվյալների պաշտպանությունը (հոդված 34)
- Տեղեկություններ ստանալու իրավունքը (հոդված 51)
- Առողջության պահպանությունը (հոդված 85)

Խտրականությունը տարբերակված վերաբերմունքի դրսևորումն է համեմատաբար նույն իրավիճակում գտնվող անձանց նկատմամբ՝ առանց որևէ օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորման⁸:

8 ՄԻԵԴ վճիռ՝ Կիրաքյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 40094/05, 2/10/2012, § 199

Խտրականությունն արգելող հիմնական միջազգային և տարածաշրջանային իրավական ակտերն են

- Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, 1948թ.
- Միջազգային դաշնագիրը քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին, 1976թ.
- Միջազգային դաշնագիրը տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին, 1976թ.
- Միջազգային կոնվենցիան ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1969թ.
- Կոնվենցիան կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին, 1981թ.
- Կոնվենցիան խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի և պատժի դեմ, 1987թ.
- Կոնվենցիան երեխաների իրավունքների մասին, 1990թ.
- Կոնվենցիան բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության մասին, 2003թ.
- Կոնվենցիան հաշմանդամների իրավունքների մասին, 2006թ.
- Կոնվենցիան բռնությամբ անհետացած բոլոր մարդկանց պաշտպանության մասին, 2010թ.
- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա, 1950
- Վերանայված եվրոպական սոցիալական խարտիա, 1996

ՀՀ սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականությունն արգելող համապարփակ օրենսդրություն Ջայաստանի Հանրապետությունում առկա չէ, սակայն դեռևս 2019թ.-ին շրջանառության էր դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը, չնայած դրա շուրջ անցկացված հանրային քննարկումներին, ներկայումս ընդգրկված չէ Ազգային ժողովի առաջիկա օրակարգերում: Նախագծի ընդունումը կառաջացներ ստեղծված իրավիճակի դրական փոփոխություններ, քանզի դրանով սահմանվում է խտրականության արգելքը քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հանրային կյանքի այլ բնագավառներում, նախատեսվում է կարգապահական, քաղաքացիաիրավական և (կամ) քրեական պատասխանատվության հնարավորություն՝ խտրականություն դրսևորած անձանց համար, ինչպես նաև նախատվեսում է

Մարդու իրավունքների պաշտպանին առընթեր ստեղծել խորհրդակցական մարմին՝ իրավահավասարության խորհուրդ:

2021 թվականի մայիսի 5-ին ընդունված նոր ՀՀ քրեական օրենսգրքով (հոդված 203) արդեն նախատեսվում է խտրականությունը՝ որպես առանձին հանցագործություն: Որպես հանցագործության ծանրացուցիչ հանգամանք է դիտարկվում խտրականությունը, որը կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Մարդու արժանապատվությունը երաշխավորվում է ինչպես միջազգային և տարածաշրջանային, այնպես էլ ազգային իրավական ակտերով:

ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 2-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է հարգել իր տարածքի սահմաններում և իրավազորության տակ գտնվող բոլոր անձանց այն իրավունքները, որոնք ճանաչվել են սույն դաշնագրում, և ապահովել դրանք առանց որևէ տարբերության, այն է՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի, ծննդի կամ այլ հանգամանքի կապակցությամբ:

ԵԽ-ի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 1-ին հոդվածի համաձայն՝ բարձր պայմանավորվող կողմերն իրենց իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուրի համար ապահովում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են սույն Կոնվենցիայի 1 բաժնում:

ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ զինվորական ծառայության կազմակերպման սկզբունքներն են (...) զինծառայողների իրավունքների և ազատությունների առաջնահերթությունը, զինծառայողների պատվի և արժանապատվության նկատմամբ հարգանքն ու խտրականության արգելումը (...):

Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ զինծառայողները գտնվում են պետության պաշտպանության տակ: Նրանց կյանքը, առողջությունը, պատիվն ու

արժանապատվությունը պահպանվում են օրենքով:
Զինծառայողին անվանարկելը, սպառնալիքը, բռնությունը կամ ոտնձգությունը նրա կյանքի, առողջության, ունեցվածքի նկատմամբ և զինծառայողի վրա դրված պարտականությունների կատարմանը խոչընդոտող այլ գործողությունները, ինչպես նաև նրա իրավունքների ոտնահարումը առաջացնում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն:

**Բռնության վերաբերյալ համապարփակ իրավակարգավորումներ նույնպես նախատեսված չեն:
Բռնության համար պատասխանատվություն կամ կանխարգելիչ միջոցառումներ են նախատեսվում բռնության առանձին դրսևորումների համար:**

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգիրքը պատասխանատվություն է նախատեսում օրինակ՝ ծեծի, առողջությանը ծանր, միջին, թեթև վնաս պատճառելու, սպանության, ինքնասպանության հասցնելու կամ հակելու, բռնաբարության, սեքսուալ բնույթի բռնի գործողությունների, ինչպես նաև այլ հանցավոր արարքների համար:
Բռնության հասկացությունն ամրագրվել է 2017 թվականի դեկտեմբերի 13-ին ընդունված Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին ՀՀ օրենքով, որը նախատեսում է բռնության հետևյալ տեսակները.

1) **Ֆիզիկական բռնություն**՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված ծեծը և այլ բռնի գործողությունները, դիտավորությամբ առողջությանը վնաս պատճառելը, ազատությունից ապօրինի զրկելը, դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելը.

2) **սեռական բռնություն**՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված հանցագործությունները.

3) **հոգեբանական բռնություն**՝ դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը, այդ թվում՝ ֆիզիկական, սեռական կամ տնտեսական բռնություն գործադրելու իրական սպառնալիքը, դիտավորությամբ պարբերաբար այնպիսի գործողություններ կատարելը, որոնք անձի մեջ հիմնավոր վախ են հարուցում իր կամ ընտանիքի անդամի անձնական անվտանգությանը սպառնացող վտանգի մասին, արժանապատվության պարբերական նվաստացումը, սոցիալական ծայրահեղ մեկուսացումը, հղիության արհեստական ընդհատման հարկադրանքը.

4) **տնտեսական բռնություն**՝ անձին հարկադրված նյութական կախվածություն ստեղծելու կամ իշխելու նպատակով նրան

գոյության անհրաժեշտ միջոցներից (սնունդ, հագուստ, կացարան, դեղորայք) գրկելը, սեփականության կամ ընդհանուր սեփականության իրավունքով պատկանող գույքը տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու իրավունքները ոչ իրավաչափ սահմանափակելը, անձի կրթությունն ստանալու կամ աշխատանքի ընտրության ազատության իրավունքները սահմանափակելը:

5) **անտեսում** ծնողի կամ օրինական ներկայացուցչի կողմից երեխայի կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում, կրթություն), իսկ չափահաս աշխատունակ զավակների կողմից իրենց անաշխատունակ և կարիքավոր ծնողների կեցությանն անհրաժեշտ նվազագույն պայմանները (սնունդ, հագուստ, կացարան, բժշկական օգնություն և սպասարկում) դիտավորությամբ չբավարարելը, եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը կամ չափահաս աշխատունակ զավակները տիրապետում են պատշաճ տեղեկատվության և հնարավորությունների, և եթե համապատասխան ծառայությունները նրանց համար հասանելի են:

Միջազգային իրավակարգավորումները ևս բռնության արգելքը նախատեսում են ելնելով բռնության ենթարկվող անձանց շրջանակից կամ այլ որևէ հատկանիշից (օրինակ՝ Ռասայական խտրականության բոլոր ձեվերի վերացման մասին միջազգային կոնվենցիա, Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա և այլն):

Սույն գեկույցի շրջանակներում զորակոչի գործընթացին և զորակոչիկների բժշկական հետազոտությունների անցկացմանն առնչվող հիմնական իրավական ակտերն են.

- «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը:
- «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը:
- «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքը:
- «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքը:
- «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը:
- «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը:
- 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի ՀՀ Կառավարության «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշումը:
- 2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ Կառավարության «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված

զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» 404 որոշումը:

- 2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ կառավարության «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 405 որոշումը:
- ՀՀ կառավարության 2018թ.-ի մայիսի 3-ի 536-Ն, 2018թ.-ի նոյեմբերի 29-ի 1337-Ն, 2019թ.-ի մայիսի 16-ի 590-Ն, 2019թ.-ի նոյեմբերի 7-ի 1536-Ն, 2020թ.-ի ապրիլի 23-ի 593-Ն, 2020թ.-ի դեկտեմբերի 24-ի 2136-Ն, 2021թ.-ի մայիսի 6-ի 711-Ն «Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչ հայտարարելու և զորացրում կատարելու մասին» որոշումները:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և այլ զորքերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է:

Նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն.

- Զինվորական ծառայության տեսակներն են՝
 - 1) ժամկետային.
 - 2) պահեստազորային.
 - 3) զորահավաքային:
 2. Ժամկետային զինվորական ծառայությունը բաղկացած է պարտադիր և պայմանագրային զինվորական ծառայություններից:
 7. Պարտադիր զինվորական ծառայությունը կարող է փոխարինվել այլընտրանքային ծառայությամբ՝ օրենքով սահմանված կարգով, պայմաններով և ժամկետներով:
- Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն.
 1. Սույն օրենքի իմաստով այլընտրանքային է համարվում ժամկետային պարտադիր զինվորական ծառայությանը փոխարինող ծառայությունը, որը կապված չէ զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ ու իրականացվում է ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական հիմնարկներում:

- 2. Այլընտրանքային ծառայության տեսակներն են՝
 - ա) այլընտրանքային գինվորական՝ Հայաստանի Հանրապետության գինված ուժերում իրականացվող մարտական հերթապահության, զենք կրելու, պահելու, պահպանելու և օգտագործելու հետ չկապված գինվորական ծառայություն.
 - բ) այլընտրանքային աշխատանքային՝ Հայաստանի Հանրապետության գինված ուժերից դուրս իրականացվող աշխատանքային ծառայություն:
- 3. Այլընտրանքային ծառայության նպատակը հայրենիքի և հասարակության առջև քաղաքացիական պարտքի կատարման ապահովումն է և չունի պատժի, անձի պատվի և արժանապատվության նվաստացման բնույթ:

Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն.

1. Այլընտրանքային գինվորական ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես գինվորական ծառայություն անցնելը:

2. Պարտադիր գինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայությունը, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել պարտադիր գինվորական ծառայությունը:

Այլընտրանքային ծառայության մասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն.

Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչև հերթական զորակոչին նախորդող հունիսի 1-ը կամ նոյեմբերի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքով պարտադիր գինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու վերաբերյալ դիմել է իր գինվորական հաշվառման տարածքային գինվորական կոմիսարին, և որի վերաբերյալ 8.1-ին հոդվածով սահմանված իրավասու պետական կառավարման մարմնի ղեկավարը, հաշվի առնելով այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի (այսուհետ՝ հանրապետական հանձնաժողով) եզրակացությունը, որոշում է կայացրել ուղարկել այլընտրանքային ծառայության:

«Զինվորական ծառայության և գինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

պարտադիր զինվորական ծառայության զորակոչին քաղաքացու ներկայությունն ապահովելու նպատակով համապատասխան զինվորական կոմիսարիատը, իսկ քաղաքացու՝ օտարերկրյա պետությունում բնակվելու և տվյալ պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունում կամ հյուպատոսական հիմնարկում հաշվառված լինելու դեպքում դիվանագիտական ներկայացուցչությունը կամ հյուպատոսական հիմնարկը քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում են զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով զինվորական կոմիսարիատ ներկայանալու ժամկետը:

ՀՀ Կառավարության 2018թ.-ի հոկտեմբերի 4-ի «Պարտադիր զինվորական ծառայության զորակոչի անցկացման կարգը հաստատելու մասին» N 1132-Ն որոշման 8-րդ կետի համաձայն՝ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչը հայտարարվելուց հետո զինվորական կոմիսարիատը շարքային կազմի պարտադիր զինվորական զորակոչի ենթակա (այսուհետ՝ զորակոչի ենթակա) քաղաքացուն փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է՝ (համաձայն N 2 ձևի, զինվորական կոմիսարիատ ներկայանալու պարտավորության մասին՝ ծանուցման մեջ նշելով ներկայանալու ժամկետը: Փաստաթղթային եղանակով ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն հանձնելու, իսկ էլեկտրոնային եղանակով ծանուցումը՝ զինվորական կոմիսարիատին քաղաքացու կողմից էլեկտրոնային հասցե տրամադրված լինելու դեպքում՝ այդ էլեկտրոնային հասցեին ծանուցագիր ուղարկելու միջոցով:

Նույն որոշման 11-րդ կետի համաձայն՝ զորակոչի ենթակա քաղաքացիներին ծանուցագրում նշված վայր ներկայանալիս դիմավորում է զինվորական կոմիսարիատի անձնակազմից նշանակված պատասխանատուն կամ հերթապահը, որը բացատրում է նրանց իրավունքներն ու պարտականությունները և համաձայն ցուցակի վարում ներկայացածների հաշվառում:

Նույն որոշման 12-րդ կետի համաձայն՝ զինվորական կոմիսարիատի զորակոչի բաժանմունքի համապատասխան պաշտոնատար անձը զորակոչի ենթակա քաղաքացիներին պարզաբանում է նրանց պարտականությունները և ստուգում փաստաթղթերի առկայությունը:

«Զինծառայողների իրավունքների մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ 4 (2010) հանձնարարականի

49-րդ կետի համաձայն⁹՝ պոտենցիալ զորակոչիկները պետք է ստանան լիարժեք և մանրամասն տեղեկություններ զորակոչի բոլոր ասպեկտների, զինծառայությունը սկսելու և զինվորական ծառայության անցնելու շրջանակներում ընդգրկված պարտավորությունների առանձնահատուկ բնույթի մասին: Այդ տեղեկատվությունը պետք է տրամադրվի նաև 18 տարին դեռ չլրացած պոտենցիալ զորակոչիկների ծնողներին կամ նրանց օրինական խնամակալներին:

Ըստ Եվրոպայի Նախարարների կոմիտեի «Զինծառայողների իրավունքների մասին» թիվ 4 (2010) հանձնարարականի բացատրական հուշագրի¹⁰՝ հաշվի առնելով զինված ուժերում առկա աշխատանքային պայմանների առանձնահատկությունները՝ խիստ կարևոր է, որ պոտենցիալ զորակոչիկները զինված ուժերում ներգրավվելու ժամանակ պատշաճ կերպով տեղեկացվեն իրենց պարտավորությունների ծավալի մասին: Իհարկե, դա վերաբերում է հատկապես 18 տարին չլրացած ապագա զորակոչիկներին, որոնք պետք է լինեն մանրամասն տեղեկացված, ինչը նրանց հնարավորություն կտա ըմբռնել զինված ուժերում ներգրավվելու հետևանքները: Նրանց ծնողները կամ օրինական ներկայացուցիչները նույնպես պետք է ստանան նման տեղեկատվություն: Ապագա զորակոչիկներին տրամադրված տեղեկատվության մեջ պետք է անդրադարձ կատարվի բոլոր այն հայեցակետերին և հետևանքներին, որոնք կապված են զինված ուժերին հավաքագրվելու հետ, այդ թվում՝ զինվորական կարգապահությունը, պարտականությունների և պատասխանատվության նկարագրությունը, վարքագծի կանոնագիրքը՝ նշելով, մասնավորապես, թե ինչ է նշանակում անընդունելի վարքագիծը, օրինակ՝ շարունակական հետապնդումները և ճնշումները կամ խտրական վերաբերմունքը:

ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝ սույն դաշնագրին մասնակցող **պետությունները ճանաչում են յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքը:**

ՀՀ սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք:**

⁹ <https://rm.coe.int/human-rights-in-armed-forces/1680744b0a>

¹⁰ <https://rm.coe.int/human-rights-in-armed-forces/1680744b0a>

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամությունից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Սահմանադրությամբ, սույն օրենքով և այլ օրենքներով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված կարգով ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ **զինծառայողները և զորակոչային ու նախազորակոչային տարիքի քաղաքացիներն իրավունք ունեն ստանալու բժշկական օգնություն և սպասարկում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:**

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն.

1. Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, ներառյալ՝ զորահավաքային զորակոչի, պայմանագրային զինվորական ծառայության և վարժական հավաքի ներգրավելու ժամանակ իրականացվում են նրանց առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն: (...)

3. Քաղաքացու բժշկական փորձաքննության արդյունքներով տրվում է քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացություն, որը կազմված է ներածական, նկարագրական, պատճառաբանական և եզրափակիչ մասերից:

Եզրակացությունն առնվազն ներառում է քաղաքացու առողջական վիճակի ամփոփ նկարագրությունը, քաղաքացու պիտանիության աստիճանը զինվորական ծառայությանը, նրա առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները, եզրակացության բողոքարկման կարգն ու ժամկետները: Քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացության մեջ, կախված զինվորական ծառայությանը քաղաքացու պիտանիության աստիճանից և բժշկական փորձաքննության նպատակից, նշվում են՝

1) պիտանի է զինվորական ծառայության համար.

2) պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.

3) սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար.

4) ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.

5) ոչ պիտանի է զինվորական ծառայության համար.

6) ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար.

7) կարիք ունի բուժման.

- 8) ենթակա է կանչվելու վարժական հավաքի.
9) ենթակա չէ կանչվելու վարժական հավաքի:

5. Քաղաքացին իրավունք ունի ծանոթանալու իր առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության ընթացքին և ստանալու դրանց արդյունքներով տրված եզրակացություններն ու այլ փաստաթղթերը, ներկայացնելու առաջարկություններ, բացատրություններ կամ առարկություններ, սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով բողոքարկելու իր առողջական վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը:

Համաձայն 2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ կառավարության «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 405 որոշման.

2. Զինապարտների և զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության նպատակն է որոշել՝

1) զինվորական հաշվառման, զորակոչի, զինվորական (կամ հավասարեցված) ծառայության անցնելու, պահեստագորային պատրաստության շրջանակներում պարտականությունների կատարման ժամանակ քաղաքացիների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ նկատի ունենալով նրանց առողջական վիճակը և ֆիզիկական զարգացումը.

2) սպայական և ենթասպայական կազմերի պայմանագրային զինծառայողների, ՌՈՒՀ-երի կուրսանտների և ունկնդիրների, պարտադիր և պայմանագրային զինծառայության շարքային կազմերի, ՌՈՒՀ-երի (բուհերի) դիմորդների պիտանիությունը զինվորական ծառայությանը՝ ըստ նրանց առողջական վիճակի.

3) ռադիոակտիվ նյութերով, իոնացնող ճառագայթման այլ աղբյուրներով, հրթիռային վառելիքի բաղադրամասերով, էլեկտրամագնիսական դաշտ ստեղծող սարքավորումներով աշխատելու համար անձանց պիտանիությունը.

4) զինծառայողների, ՀՀ սահմանների պաշտպանությանը մասնակցած անձանց ստացած հիվանդությունների, վնասվածքների, խեղումների՝ զինվորական ծառայության հետ պատճառական կապը.

5) Հայրենական մեծ պատերազմի մասնակիցների, ԽՍՀՄ նախկին զինծառայողների, Չեռնոբիլի ատոմակայանի վթարի

հետևանքների վերացման մասնակիցների և ՀՀ ՀՈՒ-ի գինձառայողների ստացած հիվանդությունների ու վնասվածքների, խեղումների հետևանքների՝ գինվորական ծառայության հետ պատճառական կապը:

3. Փորձաքննությունն իրականացնում են բժշկական և ռազմաբժշկական հանձնաժողովները, որոնք եզրակացություններն ընդունում են գինվորական ծառայության համար Հայաստանի Հանրապետության կառավարության ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ հաստատված քաղաքացու կամ գինձառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի (այսուհետ՝ ցանկ) և քաղաքացու կամ գինձառայողի առողջական վիճակին հակացուցված գինվորական ծառայության պայմանների (այսուհետ՝ պայմանների) համաձայն:

25. Տարածքային գինվորական կոմիսարիատների բժշկական հանձնաժողովների կողմից ախտորոշված ցանկում նախատեսված հիվանդության կամ ֆիզիկական թերության առկայության դեպքում նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց հետագա՝ պետության կողմից երաշխավորված անվճար հիվանդանոցային կամ ամբուլատոր բուժումն իրականացվում է համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպության կողմից՝ տարածքային գինվորական կոմիսարի ստորագրությամբ և կնիքով վավերացված ուղեգրով, իսկ զորակոչերի միջև ընկած ժամանակահատվածում՝ նաև ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության կողմից տրված ուղեգրով՝ տարածքային գինվորական կոմիսարի գրավոր համաձայնությամբ, որի մասին գրառում է կատարվում զորակոչիկի անձնական գործում (նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական հետազոտություն և բուժում իրականացնող բժշկական հաստատությունների ցանկը տե՛ս կից հավելված 1-ում):

36. Բուժհաստատությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն.

1. Յուրաքանչյուր ոք (պացիենտ) իրավունք ունի մատչելի ձևով ստանալու տեղեկություն իր առողջական վիճակի, հիվանդության ախտորոշման, տրամադրված (տրամադրվող) բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում՝ բուժման մեթոդների ընտրության, կիրառման ընթացքի և արդյունքների, ինչպես նաև դրանց հետ կապված ռիսկերի վերաբերյալ:

2. Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի, երեխայի (պացիենտի) վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները տրամադրվում են նրան, եթե միաժամանակ առկա են հետևյալ պայմանները.

1) եթե բժշկի կարծիքով օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձը, երեխան ի վիճակի են գնահատել իրենց առողջական վիճակը.

2) այդ տեղեկությունները չեն վնասի օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձին, երեխային կամ կոյուրացնեն նրան բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը.

3) օրինական ներկայացուցիչները չեն առարկում այդ տեղեկությունները տրամադրելուն:

3. Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի, երեխայի (պացիենտի) վերաբերյալ սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված տեղեկությունները միաժամանակ տրամադրվում են նրա օրինական ներկայացուցչին կամ վերջինիս բացակայության դեպքում՝ նրա լիազորած կոնտակտային անձին, իսկ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների բացակայության դեպքում՝ միայն օրինական ներկայացուցչին կամ վերջինիս բացակայության դեպքում՝ լիազորված կոնտակտային անձին:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **մարդու գրավոր համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ պայման է**, բացառությամբ սույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված դեպքերի:

Համաձայն սույն օրենքի 24-րդ հոդվածի՝ առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության բժշկական օգնություն և սպասարկում իրականացվում են՝

1) մարդու կյանքին սպառնացող վտանգի դեպքում՝ Կառավարության սահմանած կարգով.

2) շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքում՝ օրենքով սահմանված կարգով: հետևանքների վերացման մասնակիցների և ՀՀ ՁՈՒ-ի գինձառայողների ստացած հիվանդությունների ու վնասվածքների, խեղումների հետևանքների՝ գինվորական ծառայության հետ պատճառական կապը:

Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն.

1. **Հոգեկան առողջության խնդիր ունեցող յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝**

1) ինքնուրույն լինելու և հասարակության մեջ ներգրավվելու.

2) **իր նկատմամբ բարեկիրթ, մարդասիրական և**

արժանապատվությունը չնվաստացնող վերաբերմունք ստանալու.

3) իրավունքների և օրինական շահերի վերաբերյալ իրազեկ լինելու և դրանց պաշտպանության միջոցների ընտրություն կատարելու. (...)

8) տալու իրազեկված համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվելու գիտական կամ փորձարարական նպատակներով կիրառվող բուժական մեթոդներից և միջոցներից.

9) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում մայրենի կամ իրեն հասկանալի լեզվով տեղեկություններ ստանալու իր առողջական վիճակի, իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակման դեպքերի վերաբերյալ.

10) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում կոչվելու իր անվամբ կամ ազգանվամբ.

11) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում պահանջելու իր ընտրած բժշկ-հոգեբույժի մասնակցությունը սույն օրենքով նախատեսված հոգեբուժական հանձնաժողովի աշխատանքներին.

12) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում հանգստի, ներառյալ՝ բացօթյա զբոսանքի կամ մարմնամարզության և ութամյա գիշերային քնի, որի ընթացքում արգելվում է նրան ներգրավել բժշկական կամ այլ գործողություններում. (...)

14) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում օգտվելու հեռախոսակապից. (...)

17) հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում ստանալու իրավաբանական օգնություն, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսված հանրային պաշտպանություն. (...)

19) իր իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ դիմումներով, բողոքներով ինչպես անձամբ, այնպես էլ փաստաբանի կամ ներկայացուցչի կամ օրինական ներկայացուցչի միջոցով դիմելու հոգեբուժական կազմակերպության գործադիր մարմին, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններ, դատարան, Մարդու իրավունքների պաշտպանին, զանգվածային լրատվության միջոցներին, ինչպես նաև մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններ կամ միջազգային մարմիններ.

20) հոգեբուժական կազմակերպությունում ունենալու լիազոր մարմնի հաստատած պայմաններին համապատասխան կեցության պայմաններ.

2. Հոգեբուժական կազմակերպությունը պարտավոր է՝

1) հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև նրա օրինական ներկայացուցչին ծանոթացնել հոգեբուժական

կազմակերպության ներքին կանոնակարգին և բուժման սխեմային(...)

3) հոգեբուժական կազմակերպություններում գտնվող անձանց մոտ մարմնական վնասվածքների հայտնաբերման կամ ենթադրյալ բռնությունների վերաբերյալ գանգատների դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնել իրավապահ մարմիններին.

4) չխոչընդոտել սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված սեփական միջոցների հաշվին իր նախընտրած բժշկի կողմից զննության ենթարկվելու իրավունքի իրականացմանը: (...)

4. Հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցիչը, բժիշկ-հոգեբույժի կողմից իրազեկվում են հոգեբուժական կազմակերպություն ընդունված անձի իրավունքների, ազատությունների, դրանց սահմանափակումների մասին (...):

Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն.

1. Հոգեբուժական օգնությունը և սպասարկումն իրականացվում են հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնության (դիմումի) դեպքում, բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի: (...)

7. Հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալու համար դիմած անձը, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցիչը, իրավունք ունեն ցանկացած պահի հրաժարվելու հոգեբուժական օգնություն և սպասարկում ստանալուց կամ պահանջելու դադարեցնել այն, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Հոգեկան առողջության խնդիր ունեցող անձին, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչին, բժիշկ-հոգեբույժը պետք է պարզաբանի հոգեբուժական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու հնարավոր հետևանքները:

8. Հոգեբուժական օգնությունից և սպասարկումից հրաժարվելու փաստը բժիշկ-հոգեբույժը գրառում է անձի բժշկական փաստաթղթում, և այն հաստատվում է բժիշկ-հոգեբույժի և հրաժարվող անձի, իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ նաև օրինական ներկայացուցչի ստորագրությամբ:

9. Հոգեբուժական օգնություն և սպասարկում տրամադրելու վերաբերյալ տվյալները բժիշկ-հոգեբույժը գրառում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բժշկական փաստաթղթում և այն հաստատում ստորագրությամբ:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **զինծառայողների հոգեբուժական օգնության և սպասարկման իրականացման առանձնահատկությունները սահմանվում են «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» օրենքով:**

«Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանության և հոգեբուժական օգնության բարելավման սկզբունքները» ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1991 թ.-ի դեկտեմբերի 17-ի թիվ 46/119 բանաձևի համաձայն. Հիվանդ անձանց նկատմամբ թույլատրելի չէ որևէ խտրականություն՝ բացառելով հոգեկան հիվանդության պատճառով այնպիսի տարբերակումներ, բացառություններ կամ նախապատվություն տալու այնպիսի դրսևորումներ, որոնց արդյունքում անհնարին կդառնա կամ կդժվարանա միջազգայնորեն ճանաչված քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներից հավասար օգտվելը (սկզբունք 1):

Որևէ բուժում չպետք է իրականացվի առանց անձի նախապես ծանուցված համաձայնությունը ստանալու՝ բացառությամբ հատուկ սահմանված դեպքերի (սկզբունք 11):

Ընդ որում, իրազեկված գրավոր համաձայնության ձևաթուղթը ՀՀ առողջապահության նախարարի կողմից հաստատվել է միայն 2021թ.-ի ապրիլի 7-ին՝ «Մարդկանց բուժման նպատակով բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելիս նոր դեղերի, մեթոդների, ձևերի, միջոցների կենսաբժշկական հետազոտությունների և փորձարկումների իրականացման համար իրազեկված գրավոր համաձայնության ձևաթուղթը» հաստատելու մասին հրամանով (ձևաթուղթը տե՛ս կից հավելված 2-ում):

Հարկ է նշել, որ ԳԲՏԶ+ անձինք պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում են ՀՀ Կառավարության 2018թ.-ի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 8-րդ հոդվածով, որը ներառում է անձի և վարքի, ներառյալ՝ անձի յուրահատուկ և խառը խանգարումները, սովորույթների և հակումների, սեռական նույնացման, սեռական նախընտրության, սեռական զարգացման և կողմնորոշման հետ կապված հոգեբանական և վարքային խանգարումները, արտահայտված և կոմպենսացիայի չենթարկվող ձևերը, անձի՝ հաճախակի դեկոմպենսացիաներով խանգարումները, ինչպես նաև կրկնվող իրավիճակային և անձնային ռեակցիաները, որոնց հաճախականությունը 1 տարվա ընթացքում 3 անգամ և ավելի է:

Այն դեպքերի համար, երբ ապօրինաբար բացահայտվում է

անձանց, այդ թվում՝ զորակոչիկների բժշկական գաղտնիքի և մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվությունը, ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պատասխանատվություն: Մասնավորապես, **ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում՝ մարդու անձնական կամ ընտանեկան գաղտնիք համարվող տեղեկություններն առանց նրա համաձայնության օգտագործելու կամ հրապարակային ելույթներով, հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործություններով կամ լրատվության միջոցներով այդպիսի տեղեկություններ տարածելու կամ հավաքելու կամ պահելու համար, եթե դրանք նախատեսված չեն օրենքով:**

ՀՀ քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում՝ բժշկական գաղտնիք պարունակող տվյալները, օրենքով նախատեսված անձնական տվյալներ մշակողի կողմից առանց անձի կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության, օրենքով չնախատեսված դեպքերում փոխանցելու համար:

Երբեմն կարող է կիրառելի լինել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 143-րդ հոդվածը, որը պատասխանատվություն է նախատեսում մարդու և քաղաքացու իրավահավասարությունը խախտելու համար, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, որը վնաս է պատճառել մարդու և քաղաքացու իրավունքներին ու օրինական շահերին:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

1. Մատչելիությունը, որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման ու պաշտպանության և սոցիալական ներառման նախապայման և հավասար հնարավորությունների ապահովման թիրախային ուղղություն, ներառում է՝

1) ֆիզիկական միջավայրի մատչելիությունը.

2) տեղեկատվության և հաղորդակցության, ներառյալ տեղեկատվական ու հաղորդակցության տեխնոլոգիաների և համակարգերի մատչելիությունը:

2. Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններին համապատասխան, իրենց իրավասությունների շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովում են

ֆիզիկական միջավայրի, տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը, այդ թվում՝ բնակելի, հասարակական, արտադրական և այլ գործառնական նշանակություն ունեցող շենքերի և շինությունների մատչելիության, տրանսպորտային համակարգից, տեղեկատվության և հաղորդակցության միջոցներից, հանգստի և ժամանցի վայրերից անարգել օգտվելու պայմանների ստեղծումը:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ **կառուցված հասարակական, արտադրական նշանակության շենքերն ու շինությունները սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, վերակառուցվում են՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը:**

Խտրականության և բռնության դրսևորումների դեպքում զորակոչիկների կողմից զինկոմիսարիատներում կամ դրա բակում կատարված **տեսա կամ ձայնագրություններ կատարելու, ինչպես նաև հետազայում դրանք անհրաժեշտության դեպքում որպես ապացույց օգտագործելու** առումով հարկ է նշել, որ ՀՀ քրեական և քաղաքացիական գործերով դատական պրակտիկայի¹¹ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մասնավոր անձի կատարած գաղտնի ձայնագրությունը որպես ապացույց օգտագործելու թույլատրելիության հարցում հայկական իրավունքում դեռ բացակայում է միասնական դատական պրակտիկան:

«Մասնավոր անձի կատարած գաղտնի ձայնագրությունների թույլատրելիության հարցը պետք է դիտարկել ոչ միայն ազատ գործելու ընդհանուր սահմանադրական իրավունքի համատեքստում, այլ դրա մասնավոր դրսևորման՝ մարդու կողմից օրենքով չարգելված եղանակներով իր իրավունքները ինքնուրույն պաշտպանելու բնական իրավունքի տեսանկյունից: 1995 թ. ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածը սահմանում էր, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք, 2005 թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասում նույնպես սահմանված էր, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ թեև նման դրույթ ուղղակի նախատեսված չէ, սակայն **անձի՝ օրենքով չարգելված ինքնապաշտպանությունը (ինքնօգնությունը) նրա բնական իրավունքն է:**

¹¹ Թիվ ԱՐԱԴ/0009/01/16 դատական գործ, Թիվ ԼԴ2/0024/01/16 դատական գործ, Թիվ ԱՐԴ/0058/01/14 դատական գործ, Թիվ ԿԴ/0015/01/14 դատական գործ, Թիվ ԵԾԴ/0114/01/09 դատական գործ, Թիվ ԿԴԴ/1066/02/10 քաղաքացիական գործ, Թիվ ԵԿԴ/1474/02/13 քաղաքացիական գործ և այլն:

Պաշտպանական գործողությունների հիմքում ընկած է յուրաքանչյուրի ինքնապաշտպանության բնագործ, ուստի նման գործողություններ կատարելու վերաբերյալ որևէ իրավական արգելք սահմանելը, որը զուգակցված կլինի նույնիսկ ամեննախիստ սանկցիաներով, լիովին անհիմաստ է, քանի որ ցանկացած իրավիճակում մարդը ձգտում է պաշտպանել իրեն վտանգից: Բացի այդ, 2015 թ. ՀՀ

Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Այս նորմով մարդու իրավունքների պաշտպանության պարտականությունը դրված է հանրային իշխանության վրա, սակայն այն չի բացառում ինքնապաշտպանության հնարավորությունը: Իրավունքի տեսության մեջ նշվում է, որ ինքնապաշտպանությունը (ինքնօգնությունը) կիրառվում է հետևյալ դեպքերում՝ 1) հնարավոր չէ ժամանակին դիմել պետական իշխանությանը, 2) առկա է վտանգ, որ առանց անհապաղ միջամտության հետազայում պահանջը կդառնա անհնարին կամ էապես

¹² Հովհաննիսյան Գոռ, Ղամբարյան Արթուր, Սարգսյան Ալվինա. Մասնավոր անձի կատարած գաղտնի տեսա կամ ձայնագրության օգտագործման թույլատրելիությունը քրեական ել քաղաքացիական դատավարությունում: Հղում՝ <http://ghambaryan.am/wp-content/uploads/2016/03/Videoaudioreording.pdf>

Եզրակացություն և առաջարկություններ



Այսպիսով, սույն զեկույցի շրջանակներում հավաքագրված տեղեկատվության և օրենսդրական կարգավորումների վերլուծությամբ, հանգում ենք այն եզրակացության, որ չնայած կանոնակարգված իրավահարաբերություններին, գործնականում գորակոչային գործընթացի ժամանակահատվածում առկա են ընթացակարգային և մարդու իրավունքների խախտումների բարձր ռիսկեր: Գործընթացի խնդիրները սկսվում են պատշաճ ծանուցման գործողությունը չկատարելուց (ծանուցումները կատարվում են զանգերով, գյուղապետարաններում աշխատող ծանոթների միջոցով և այլն), զինկոմիսարիատի տարածքներում մարդկային կուտակումներից և երկարատև հերթերից, ընթանում են գորակոչիկներին գորակոչի գործընթացը մատչելի ձևով չպարզաբանելու, նրանց մոտ անորոշության և տագնապի զգացողություններ առաջացնելու, վիրավորանքների, ծաղրանքների, պիտակավորումների, խտրականության և բռնության ցայտուն դրսևորումների արտահայտմամբ: Զորակոչիկները ենթարկվում են բժշկական հետազոտությունների զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների կողմից՝ առանց իրենց իրազեկված գրավոր համաձայնության, ինչպես նաև հանդիպում են խոչընդոտների իրենց բժշկական կամ անձնական փաստաթղթերը ձեռք բերելու հարցում: Զորակոչիկների բժշկական հետազոտությունների ընթացքը հաճախ ընդհատվում է պիտանիության վերաբերյալ առաջին հիմքը բացահայտելուց հետո, առանց ամբողջական հետազոտություններն ավարտին հասցնելու: ՀՀ օրենսդրությամբ նախատեսվել է այլընտրանքային ծառայության հնարավորություն, սակայն ընթացիկ դրա արդյունավետության և դրանից օգտվող անձանց կարիքների պատշաճ գնահատման

վերաբերյալ որևէ տեղեկատվություն հայտնի չէ (օրինակ այլընտրանքային ծառայություն նախատեսել նաև ըստ մասնագիտական կամ այլ կողմնորոշման): Ձինկոմիսարիատների և հոգեկան առողջության կենտրոնների շենքերը հարմարեցված և մատչելի չեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Զորակոչիկներին արգելվում է տեսա կամ ձայնագրել զինկոմիսարիատներում կամ հոգեկան առողջության կենտրոններում իրենց նկատմամբ դրսևորվող խտրականությունն ու բռնությունը, ինչը կարող էր հետագայում միակ ապացույցը հանդիսանալ քրեական կամ քաղաքացիական գործերի շրջանակներում:

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկում ենք.

- 1. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին.**
զորակոչային ժամանակահատվածում զորակոչիկների ծանուցումներն իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ փաստաթղթային կամ էլեկտրոնային եղանակով:
- 2. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին.**
զորակոչիկներին (նաև 18 տարեկանը չլրացած անձանց) մինչև զորակոչային գործընթացի, այդ թվում բժշկական փորձաքննությունների իրականացումը տրամադրել լիարժեք և մանրամասն տեղեկություններ զորակոչի բոլոր ասպեկտների, զինծառայությունը սկսելու և զինվորական ծառայության անցնելու շրջանակներում ընդգրկված պարտավորությունների առանձնահատուկ բնույթի մասին:
- 3. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին.** կանխարգելիչ միջոցառումներ ձեռնարկել զինկոմիսարիատների և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպությունների տարածքներում զորակոչիկների նկատմամբ վիրավորանքների, ծաղրանքների, պիտակավորումների, խտրականության և բռնության դրսևորումների համար: Դրանց առկայության դեպքում, այդ մասին անհապաղ հայտնել իրավապահ մարմիններին:
- 4. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին.** վերացնել

գործնականում գոյություն ունեցող խոչընդոտները՝
գորակոչիկների կողմից իրենց անձնական կամ բժշկական
փաստաթղթերը ձեռք բերելու հարցում:

5. **ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին** անկախ գորակոչիկի մոտ պիտանիության մասին վկայող առաջին հիմքի բացահայտումից, ավարտին հասցնել գորակոչիկի ամբողջական բժշկական հետազոտությունները:
6. **ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին**. մինչև 2024թ.-ը հաստատություններում իրականացնել վերակառուցումներ՝ ապահովելու հաշմանդամություն ունեցող անձանց մատչելիության նորմերը:
7. **ՀՀ ՊՆ-ին, ԿԲՀ-ին, ՀՀ ՊՆ գորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին և բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին**. ձեռնարկել համապատասխան քայլեր կամ սահմանել համապատասխան իրավակարգավորումներ՝ հաստատությունների տարածքներում մարդկային կուտակումներից և երկարատև հերթերից խուսափելու համար, որոնք իրենց հերթին ստեղծում են պարարտ միջավայր խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորման համար:
8. **ՀՀ իրավապահ մարմիններին, այդ թվում ՀՀ քննչական կոմիտեին, Հակակոռուպցիոն կոմիտեին, ՀՀ ոստիկանությանը**. որպես թույլատրելի ապացույց դիտարկել և օգտագործել գորակոչիկի կողմից կատարված տեսա կամ ձայնագրությունը՝ զինկոմիսարիատներում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններում իրենց նկատմամբ դրսևորվող խտրականության կամ բռնության վերաբերյալ:
9. **ՀՀ ՄԻՊ-ին և ՀՀ իրավապահ մարմիններին, այդ թվում՝ ՀՀ քննչական կոմիտեին, Հակակոռուպցիոն կոմիտեին, ՀՀ ոստիկանությանը**. վարել խտրականության, այդ թվում՝ սեռական ուղղվածության և գենդերային ինքնության հիմքով կատարվող հանցագործությունների վիճակագրություն:

- 10. ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող բժշկական կազմակերպություններին, այդ թվում՝ հոգեկան առողջության կենտրոններին.** ցուցաբերել քաղաքացիական հասարակության կառույցների հետ համագործակցելու պատրաստականություն, հատկապես խոցելի խմբերի հետ տարվող աշխատանքների շրջանակներում՝ նվազագույնի հասցնելով խուսափողական և մեկուսացված վարքագիծը:
- 11. ՀՀ պաշտպանության նախարարությանը և Ազգային ժողովին.** քննարկման առարկա դարձնել Այլընտրանքային ծառայության մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու հնարավորությունը, այլընտրանքային ծառայություն նախատեսելով նաև ըստ անձանց մասնագիտական կամ այլ կողմնորոշման:
- 12. ՀՀ արդարադատության նախարարությանը և Ազգային ժողովին.** «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը վերանայել՝ դրանում որպես խտրականության հիմք ուղղակիորեն նախատեսելով անձի սեռական ուղղվածությունն ու գենդերային ինքնությունը և այն ներկայացնել հանրային քննարկման: Հանրային քննարկումից հետո նախագիծն ընդգրկել Ազգային ժողովում գումարվող նիստերի օրակարգում:
- 13. ՀՀ պաշտպանության նախարարությանը.** գինկոմիսարիատների ներկայացուցիչների համար նախատեսված առաջիկա վերապատրաստման դասընթացներում ներառել նաև խտրականության արգելքի և գենդերազգայունության թեմաները:

Հավելված 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 ապրիլի 2018 թվականի N 405-Ն

**ՔԱՂԱՔԱՅՈՒ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ
ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԵՎ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳՐՄԱՆ
ԿԱՐԳԵՐԸ, ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ,
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԵՐԸ, ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ,
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԻՄԱՑ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ
ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հավելված N 2

**ՀՀ կառավարության 2018 թվականի
ապրիլի 12-ի N 405-Ն որոշման**

**ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԸ**

**V. ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ԵՎ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ
ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒԺՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

1. Բժշկական հետազոտություն և բուժում իրականացնող հաստատություններ են՝
 - 1) «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 2) «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 3) «Էրեբունի բժշկական կենտրոն» ՓԲԸ
 - 4) «Քանաքեռ-Զեյթուն» բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 5) «Շենգավիթ» բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 6) «Երևանի Մ. Զեյնալով անվան պետական բժշկական համալսարանի» ԱՐՀԿ
 - 7) «Բժշկական գենետիկայի և առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՍՊԸ
 - 8) «Նատալի-Ֆարմ» ՍՊԸ
 - 9) «Թիվ 2 բուժմիավորում» ՓԲԸ
 - 10) «Ս. Վ. Մալայանի անվան ակնաբուժական կենտրոն» ՓԲԸ
 - 11) «Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոն» ՓԲԸ
 - 12) ՀՀ առողջապահության նախարարության «Թոքաբանության ազգային կենտրոն»
- ՊՈԱԿ
 - 13) ՀՀ ԱՆ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
 - 14) ՀՀ ԱՆ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոց ՓԲԸ
 - 15) «Ավան» հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
 - 16) ՀՀ ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
 - 17) ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
 - 18) «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ
 - 19) «Գյումրու հոգեկան առողջության կենտրոն» ՓԲԸ
 - 20) «Լոռու մարզային հոգեկայրոգաբանական դիսպանսեր» Պետական ՓԲԸ
 - 21) «Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ
 - 22) ՀՀ ԱՆ «Լ. Ա. Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
 - 23) ՀՀ ԱՆ «Մաշկաբանության և սեռավարակաբանության բժշկական կենտրոն» ՓԲԸ
 - 24) ՀՀ ԱՆ «Պրոֆ. Ռ. Օ. Յուլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ
 - 25) «Արաբկիր» բժշկական համալիր, Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտ» ՍՊԸ
 - 26) «Սուրբ Աստվածամայր» բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 27) «Նաիրի» բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 28) «Միքայելյան վիրաբուժության ինստիտուտ» ՓԲԸ
 - 29) «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ
 - 30) «Իզմիրլյան բժշկական կենտրոն» ՓԲԸ

- 31) «Ուիգմոր Զլինիք» ՓԲԸ
- 32) «Ուրուլոգիայի կենտրոն» ՓԲԸ
- 33) «Վլադիմիր Ավագյանի անվան բժշկական կենտրոն» ՍՊԸ
- 34) «Արամյանց բժշկական կենտրոն» Առողջապահական ՓԲԸ
- 35) «Մեդլայն կլինիկ» ՍՊԸ
- 36) «Էլիտ-Մեդ» բժշկական կենտրոն» ՍՊԸ
- 37) «Գրիգոր Նարեկացի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 38) «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 39) «Ապարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 40) «Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 41) «Գավառի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 42) «Սևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 43) «Մարտունու բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 44) «Վարդենիսի հիվանդանոց պետական» ՓԲԸ
- 45) «Եղեգնաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 46) «Վայքի բուժական միավորում» ՓԲԸ
- 47) «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 48) «Զարենցավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 49) «Ռուբիկ Հարությունյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 50) «Նաիրիի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 51) «Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 52) «Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 53) «Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 54) «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 55) «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 56) «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 57) «Ախուրյանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 58) «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 59) «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 60) «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 61) «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 62) «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 63) «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 64) «Իռ-Վինգ» ՍՊԸ
- 65) «Իջևանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 66) «Բերդի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 67) «Նիկոլայ Նասիրյանի Անվան Նոյեմբերյանի Բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 68) «Արտաշատի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 69) «Արարատի հիվանդանոց բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 70) «Վեդու բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 71) «Մասիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 72) «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվ. Արմավիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 73) ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի հիվանդանոց» ՊՓԲԸ

- 74) «Մեծամորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- 75) «ՀՀ Պաշտպանության Նախարարության Կենտրոնական Կլինիկական Զինվորական Հոսպիտալ» ՀՄ
- 76) «ՀՀ Պաշտպանության Նախարարության Երևանի Կայազորային Հոսպիտալ» ՀՄ
- 77) «ՀՀ Պաշտպանության Նախարարության Լոռու Կայազորային Հոսպիտալ» ՀՄ
- 78) «ՀՀ Պաշտպանության Նախարարության Զանգեզուրի Կայազորային Հոսպիտալ» ՀՄ
- 79) «ՀՀ Պաշտպանության Նախարարության Գեղարքունիքի Կայազորային Հոսպիտալ» ՀՄ
- 80) «ՀՀ Պաշտպանության Նախարարության «Բերդի Զինվորական Հոսպիտալ» ՀՄ
- 81) «Բեսթ Լայֆ» բժշկական կենտրոն» ՍՊԸ:
- (1-ին կետը լրաց. 10.07.18 N 753-Ն, խմբ. 14.03.19 N 226-Ն, 26.03.20 N 420-Ն, լրաց. 21.01.21 N 61-Ն)**
2. Քաղաքացիական բժշկական հաստատություններին, ըստ մասնագիտացման ուղղությունների, կցվում են տարածքային զինվորական կոմիսարիատներ՝ համապատասխան զինկոմիսարիատում զինվորական հաշվառման վերցված նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների հետազոտումը կամ բուժումն իրականացնելու նպատակով՝ ՀՀ առողջապահության նախարարի հրամանով, յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև տվյալ տարվա փետրվարի 5-ը:

Հավելված 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

**«ՄԱՐԴԿԱՆՑ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ՆՈՐ ԴԵՂԵՐԻ, ՄԵԹՈԴՆԵՐԻ,
ՁԵՎԵՐԻ,
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱՋՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԶԵԿՎԱԾ
ԳՐԱՎՈՐ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Բնակչության բժշկական օգնության և
սպասարկման
մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ «Մարդկանց բուժման նպատակով
բժշկական օգնություն և
սպասարկում իրականացնելիս նոր դեղերի, մեթոդների,
ձևերի, միջոցների
կենսաբժշկական հետազոտությունների և
փորձարկումների իրականացման
համար իրազեկված գրավոր համաձայնության
ձևաթուղթը»՝ համաձայն
Հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական
հրապարակմանը հաջորդող
օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

ՁԵՎԱԹՈՒՂԹ

**ՄԱՐԴԿԱՆՑ ԲՈՒԺՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ԵՎ
ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ՆՈՐ ԴԵՂԵՐԻ, ՄԵԹՈԴՆԵՐԻ,
ՁԵՎԵՐԻ,
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԻՐԱԶԵԿՎԱԾ
ԳՐԱՎՈՐ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

1. Հրավիրում եմք մասնակցելու _____

(հետազոտության/փորձարկման անվանումը)

2. Հետազոտություն/փորձարկում իրականացնող
կազմակերպության
անվանումը _____

3. Հետազոտություն/փորձարկում իրականացնող
կազմակերպության ղեկավարի
անունը, ազգանունը _____

4. Հովանավոր կազմակերպության անվանումը _____

5. Հետազոտության/փորձարկման նպատակը _____

6. Հետազոտության/փորձարկման ընթացակարգը _____

(նշում լաբորատոր թեստերի, դեղերի, ընթացակարգերի այլ մանրամասների
վերաբերյալ)

7. Մասնակցի ընտրության հիմնավորումը _____

8. Կամավոր մասնակցությունը _____

(նշում, որ մասնակիցը կարող է դադարեցնել իր մասնակցությունը
հետազոտության/փորձարկման
ցանկացած փուլում)

9. Կողմնակի ազդեցությունները _____

(տեղեկատվություն հետազոտության/փորձարկման ընթացքում առաջացող հնարավոր
բարդություններին կողմնակի ազդեցությունների մասին)

10. Ռիսկերը _____

(տեղեկատվություն հետազոտության/փորձարկման ընթացքում հնարավոր կամ
կանխատեսվող ռիսկերի, վնասի
դեպքում տրամադրվող բժշկական օգնության մանրամասների վերաբերյալ):

11. Մասնակցության օգուտները _____

(տեղեկատվություն՝ անհատական կամ հանրային մակարդակներում ակնկալվող
ձեռքբերումների վերաբերյալ)

12. Փոխհատուցումը (ներառյալ վնասի) _____

(տեղեկատվություն՝ հետազոտության/փորձարկման ընթացքում ճանապարհածախսի,
այցելությունների պատճառով
կորցրած աշխատավարձի գումարի փոխհատուցման վերաբերյալ)

13. Գաղտնիության ապահովումը _____

(անձնական տվյալների գաղտնիության ապահովման մեխանիզմների
նկարագրություն)

14. Այլ նշումներ _____

(անհրաժեշտության դեպքում հավելյալ տեղեկատվություն՝ կենսաբժշկական
հետազոտությունների և
փորձարկումների մանրամասների վերաբերյալ)

15. Հետազոտության/փորձարկման արդյունքների տարածումը

(հետազոտության/փորձարկման արդյունքների հրապարակման վերաբերյալ տեղեկատվություն՝ սոցիալական ցանցեր, գիտաժողովներ, հրատարակումներ և այլն):

16. Կոնտակտային անձ _____

(այն կոնտակտային անձի տվյալները (անուն, ազգանուն, հեռախոս, էլեկտրոնային հասցե), ում հետ մասնակիցը հնարավորություն կունենա քննարկել հետազոտության շրջանակներում իրեն հետաքրքրող հարցերը)

17. Էթիկայի հանձնաժողովի անվանումը _____

(նշել Էթիկայի այն հանձնաժողովը, որի կողմից հաստատվել է տվյալ իրազեկված գրավոր համաձայնությունը):

18. Ծանոթացա վերոնշյալ տեղեկատվությանը: Հարցեր տալու հնարավորություն ունեցել եմ, բոլոր հարցերիս սպառիչ պատասխան տրամադրվել է:

Սույնով հաստատում եմ համաձայնությունս՝ կամավոր մասնակցելու այս հետազոտությանը/փորձարկմանը որպես մասնակից/խնամող/ծնող (ընդգծել):

(Ստացա իրազեկված գրավոր համաձայնության օրինակը)

Մասնակցի Ա.Ա.Հ _____

Մասնակցի ստորագրություն _____

Ամիս ամսաթիվ _____

(Այն մասնակիցները, ովքեր չեն կարող ստորագրել, որպես համաձայնություն թողնում են բութ մատի մատնահետքը՝ ստորագրության վանդակի հարևանությամբ):

Հետազոտություն իրականացնող անձի՝

ԱԱՀ _____

Ստորագրություն _____

Ամիս, ամսաթիվ _____

